ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԱՆԵՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

(Կենցաղագրական պատկերներ)

Պատասխանատու խմբագիր՝
Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հովհաննես Աղան և իր կին Մարանոս խաթուն երեկո մը, թոնիրի շուրջ նստած, կխորհրդակցին։ Իրենց միակ որդին՝ Լևոն, հոգնությունը պատրվակելով, որպես թե քնանալու համար, սովորականեն կանուխ, իր սենյակը կառանձնանա, բայց կիսաբաց դռան ճեղքեն լրտեսել կփորձե իր ծնողաց խոսակցությունը։

— Քյա մա՛րթ,—կսկսի Մարանոս խաթուն,—էսա տղէն խեղճ ի, քսան տարէկան էլավ։ Փսակելու ժամանակը խասավ։ Ես էլ մէնակ չեմ կանա էսա տան քորթեր շարապրե։ Արե, ախչիկմ կընդընենք և Լևոն փսակենք։

— Փսակել աղէ՞կ, ամմա, ես ճոչ խարսնիս կուզեմ։ Ճոչ խարսնիսն էլ բալ փարա կուզի, ջանըս, խոսքով չէլնե։ Փսակել աղէկ, փարէ՞ն որտեղից պիտի կընդընենք։

— Ճարմ կանենք, մարթ։ Տեղէմ պառտք կանենք։ Տվող չէլավ, մեր իշվայտերաց էրկուս կծախենք։ Պակաս մնաց, քյանիմ վոսկի էլ ես իմ ճտնոցից կկտրեմ և փառավոր խարսնիսմ կանենք։

— Հը՞մմ... էշերաց էրկուսը ծախե՞նք։ Իշվանք ծախել աղէկ։ Ապա մեր ապրո՞ւստ ինչխ պիտի խանենք։ Տիւ չե՞ս կիտե, որ քյըրա տարող էտա էշերն են։ Ծանդր պեռներ տարող էտա էշերն են։ Ճաղաց կնացող էտա էշերն են։ Առճակ կնացող-իկող էտա էշերն են։ Մէյ խոսքով՝ փարա վաստկող էտա էշերն են։

— Կիտեմ, մարթ աստուծ։ Էտա կիտեմ, ամմա էսա տղէն էլ խեղճ ի։ Կամչնա, պան չասե, լեղուն ուր կքյաշի։

— Քիչմ էլ համփերի, կնիկ։ Առանց ցավի կյլոխտ Ավետնի տակ մի տնե, տիսնանք աստված ի՞նչ պարի տուռ կպանա։

Երկար խոսակցելե ու վիճաբանելե հետո, էրիկ ու կնիկ վերջապես անկողին գացին ու քնացան։ Լևոն, որ քնանալ կեղծելով, իր սենյակեն ծնողաց խոսակցությունը լրտեսած էր, սովորականեն կանուխ արթնցավ, գոհ ու ուրախ գործի գնաց։ Երեկոյան տուն վերադարձին, կանուխ ընթրեց և հոգնությունը պատրվակելով, իր սենյակ առանձնացավ քնանալու, իր ամուսնության մասին ծնողաց խոսակցությունը նորեն և գաղտնի լրտեսելու կամ ունկնդրելու հույսով։ Բայց Հովհաննես Աղան և Մարանոս խաթուն քանի մը օրերե ի վեր Լևոնի ամուսնության հարցը բարձի թողի ըրած էին և միայն իրենց ամենօրյա սովորական գործերու մասին կխորհրդակցեին։

Լևոն տեսնելով, որ իր ամուսնության հարցը ատենե մը ի վեր մոռացության մատնված է, համբերությունը հատած օր մը գործեն կանուխ տուն վերադարձավ և մոր հարցուց։

— Մարէ, ինչի՞ իրիկներ իշու բաս չէքյ անե։

— Քյե մեռնեմ, Լևոն ջան, ես քյո խոր խոսք չեմ կանա խասկցուցե։ Եզդու եռ[1] քաշե, կայնե։

— Տիւ կիտես, մարէ, ես էլ ասելիքյ չունեմ։

Լևոն երկար խորհեցավ և ծրագրեց իր ընելիքը։

— Հը՞մմ... իմ խէր եզդու եռ քաշե, կայնե։ Կայնի, որ ես էլ եզդու եռ քաշեմ, վոր տիսնան, թէ եզդու եռ քաշելն ինչրխ կէլնի։ Կայնի որ ըսկուն քյարմ թալեմ մէջ

[1] «Եզդու եռ՝ քաշելը, Վանի բարբառով՝ համառիլ ըսել է։ Լսած եմ, որ եզդիներ սատանա կպաշտեին և եթե մեկը եզդիի մը կանգնած տեղը անոր բոլորտիք փայտով բոլորակի գիծ մը քաշել համարձակեր, եզդին այդ շրջանակեն կամ գծեն դուրս չէր ելներ, կհամառեր կանգնած մնալ, մինչև որ մեկը այդ գիծը չավրեր։

խորին, որ բյառսուն խէլացի կյան, չկանան տիւս խանե,—կսե Լևոն ինքնիրեն։

* *
*

Հաջորդ առտուն Լևոն անկողնեն չելլեր։ Մայրը կարծելով, որ տղան խոր քունի մեջ ինկած է, սենյակ կմտնե, կշարժե Լևոնը, կարթնցնե ու կսե.

— Տղա, Լևոն քյե մեռնեմ, էլի վեր, արև մղրաղմ պանցրացեր ի։ Ամօթ ի։ Էլ մկա ի՞նչխ քործի պիտի էթաս։

— Մարէ, էսօր շատ կյէշ կլխու ցավմ ունեմ։ Կյլօխս կտաւնա։ Չեմ կանա քործի էթա։ Ախ, մեյ խատ քյաֆուր վարթմ էլ-նէր խոտոտի, բալքյի կյլխուս ցավ ընցնէր։

Ու կսկսի անկողնո մեջ դառնալ և տքալ։

— Ջանիա մատաղ, Լևոն ջան, քյաֆուր վարթ քյե կուրրան թող էլնի։ Մկա, մկա իկյին կէթամ, քյե խամար մէկ խատ չէ, ռիւթէմ վարթ կպիրեմ։

— Մարէ, ցավ կյլխուցս սրտիս կզանի։ Սիրտս էլ կցավա։ Մաղդէս էլ կոծվե։ Թող, որ քիշմ աչկերս կոծեմ, բալքյի ցավ ընցնի։

Մարանոս Խաթուն, միամիտ կին, հավատալով Լևոնի խոսքերուն, կսկսի մտահոգվիլ։ Կմտածե, երկար կմտածե և վերջապես միջնորդ Արմաղանը միտք կիյնա։ Կորոշե Արմաղանը կանչել և անոր խորհուրդ հարցնել։

— Փորձառու կնիկ ի, հմէն տուն կմտնի, կէլնի։ Շատ պան կիտի։ Հալբաթ թամբեխմ կուտա,—ըսավ Մարանոս Խաթուն ինքնիրեն և իրենց մշակ Սերգոն ղրկեց Արմաղանը կանչելու[2]։

Արմաղանը եկավ, թեև քիչ մը ուշ։

— Պարի լյոս, Մարանոս Խաթիմ։

— Ասսու պարին, Արմաղան։ Կիտե՞ս քյե ինչի կանչիցի։

— Չէ՛։

— Մեր Լևոն շատ խիվանդ ի։ Յաման կյօխս, յաման սիրտս, յաման փորս, կասի ու կտքյա։ Էսա առատուն վեր էլավ, առանց պրտուճմ խաց ուտելու, յաթաղն ինգյավ, պառկավ։ Կյախուն տիրմ՝ էլ կասի.

— Մարե՞, մէյ խատ վարթմ պե, որ խոտոտամ։

— Հը՞մ... վա՞րթ ուզեց, ես խասկցա։ Միամիտ մէր, տիւ չխասկցա՞ր ինոր խիվընդութեն,—ըսավ Արմաղան։

— Դէ տիւ որ խասկցար, դարմանմ ասա, տիսնա՞մ։ Տիւ աչքպաց կնիկ ես։ Դարմանմ կիտես, ասա անենքյ։

— Դարմա՞ն։ Էտա խիվնդութենի տեղդարման կա։ Ձծի կէրևա քյի, Լևոն տեղմ ախչիկ ի տիսե, զարկվե։ Ինոր խիվնդութեն կյլխու կամ փորի ցավ չի, սրտի ցավ ի։

— Է՞... ինոր ճա՞ր։

— Ճա՞ր, ճարն էսա ի։ Կնա քյաղաքյ, Սուրբ Խամաս տես։ Տիրամէրա թաղ կմնա։ Ասա, որ ախթարքյ իրիշկա։ Սուրբ Խամաս «Աղվեսակյիրքյ» ունի, կկարտա, հմէն պան դօղրի քյե կասի։

— Սուրբ Խամասի մասին լսիր եմ,—ասաց Մարանոս Խաթիմ,—համա կվախէնամ, որ իրիյս լսի։ Կիտե՞ս, յա։ Իրիյս էտա թուղթ արօղներաց շատ չավատա։

— Տիւ մի՛ վախէնա, կնա Սուրբ Խամասը տես, ասա, որ ես եմ օրօխկե քյե։ Քյո մէկ մատն[3] էլ շանց տուր, էն կխասկընա, որ ես եմ քյե օրօխկե, էն ճարմ կանի։

---

[2] Տիկին Արմաղան ընչաքաղց միջնորդ մըն էր ամեն տեսակ գործերու։ Ճարպիկ, շողոքորթ և երեք ղավակներու տեր այրի մը։ Ամուսնույն մահեն հետո, տուներ կպտտեր, հանձնարարություններ և միջնորդություններ կըներ ու ապրուստ մը կհաներ։ Քաղաքի և Այգեստանի ամեն ծակ ու ծուկ գիտեր։ Գիտեր նաև, թե սատանաներ ո՞ւր կթառին և իր համոզիչ ու քաղցրալեզու խոսքերով, ինչպես վանեցիք կըսեն՝ համոզելով օձը ծակեն դուրս կհաներ։ Այս խորամանկ, վարպետորդի մասնագիտությունն էր՝ տունը մնացած, հասակ առած և տախացած աղջիկներուն փեսացուներ գտնել։ Հարսնցու աղջիկ ունեցող մայրեր անոր կդիմեին։ Եթե հասակ առած աղջիկ մը Արմաղանի միջնորդությամբ չկրնար ամուսնանալ, ալ գործե քաշված մարմիններու կարգը պետք էր դասել։ Նա կրնար նշանվածները բաժնել, և սրդողած ու պառակտված նշանվածներն ալ հաշտեցնել։

Վանի մեջ ամառ ատեն, հասակ առած աղջիկներ՝ կիրակի առտուն մթնշաղին իրենց փողոցին դռան առաջ շուր կցանեին պօղիկով և շուրի գիծերով առաջ կբերեին գեղարվեստական ձևեր և ապա կավլեին։ Արմաղան փողոցներե անցած պահուն այս տուները միտք կպահեր, և գիտեր, որ այդ տուներ հարսնցուներ կան։ Գիտեր ուրիշ հարսնցուներու տուներն ալ։ Գիտեր նաև բազմատեսակ պատրվակներով այդ տուները մտնելու և աղջիկներ տեսնելու կերպերը։

Արմաղան կողմնակի գործեր ալ կըներ, Վանի վհուկներուն (ախթարք կամ թուղթ ընող) հաճախորդ կգտներ և փոքրիկ հանձնարարողնք մըն ալ այդ ձևով կապահովեր։ Սուրբ Խամասի (ծեր կին մը), Կարիբի Վարտանի, Կյոոտոյի Մուխսու և ուրիշ հմայողներու հետ նախապես կարգադրած և տված էր նշաններ՝ իր ղրկած հաճախորդներեն առնելիք հանձնարարողնքի քանակը որոշող։

[3] Մատը ցուցնել՝ Արմաղանի, Սուրբ Խամասի և

Անպաճառ կնա։ Էսօր—վաղ չանես, սորա Լևոնի ցավ կշատնա, դհա բէթար կէլնի։

— Շատ շնորհակալ եմ, աղէկ ասիր, էթամ Սուրբ Խամաս տիսնամ։ Ամ էսա չարեքյ, տղէյներաց վերեն կխրոջես։

Արմաղան քառորդը իր յազմայի ճոթին[4] մեջ փաթթեց, հանգույց մը զարկավ վրան և մեկնեցավ։

Սուրբ Խամաս, հասակ առած կին մը, Քաղաքամեջի հայերուն վհուկն էր։ Հմայություն կըներ, որպես թե գողցված առարկաներ կգտներ։ Երիտասարդներ կսիրահարցներ։ Հիվանդություններ կբուժեր։ Բախտ կնայեր։ Գարի կնետեր[5] և այլն։

Արմաղանի մեկնումեն հետո, Մարանոս խաթուն հագավ իր կանաչ դալմէն, անոր վրա ալ անցուց կարմիր սնդուսե շապիկ և առանց մխմելի, դեպի քաղաք ճամբա ինկավ։ Անցավ շատ մը նեղ ու ոլորապտույտ փողոցներե։ Հարցնելով ու փնտրելով, հոգնած ու քրտնած, վերջապես գտավ Սուրբ Խամասի տունը և հևիհև դռան ուռնակը զարկավ։ Դուռը բացավ Սուրբ Խամասի հարսը, որ առանց հարցուփորձի, ներս հրավիրեց Մարանոս Խաթունը, որովհետև շատ լավ գիտեր, թե աստված ուրիշ հաճախորդ մը ղրկած էր և Մարանոսի հագնըվածքեն դատելով, կռահեց, որ հաճախորդը հարուստ դասակարգեն ըլլալու էր։

— Պարի լյոս, Սուրբ Խամաս,—ըսավ Մարանոս Խաթուն։

— Ասսու պարին, խազար պարօվ։ Պարին վէր տղեյներացտ։ Նստի տիսնանքյ, դարտդ ի՞նչ ի։

— Արմաղան զիկ օրօխկեց,—և ցույց տավավ մատը,—էսօր շատ մառախլամիշ էլիր եմ։ Իմ ջահէլ-ջիվան Լևոն, էրէկ առատուն յաթղից վեր էլավ, առանց պանմ ուտելու, խիվնցավ, ինգյավ յաթաղ, պառկավ։ Կտքյա, կասի՝ մարէ, փորս կցավա։ Քե մեռնեմ, Սուրբ Խամաս, քյո ոտն եմ ինգյե։ Ճարմ կանաս, արա, տղէս շատ կտանջվի։

— Լևոն քյանի՞ տարէկան ի,—հարցուց Սուրբ Խամաս։

— Կսան տարէկան։

— Փո՞ր կցավա, թէ՝ սիրտ։

— Փորն էլ կցավա, կյլօխն էլ, սիրտն էլ։ Կյախուն տիրմ էլ կասի՝ մարէ, մեխատ վարթմ պե, որ խստոտամ։

Սուրբ Խամաս իսկույն խասկցավ խընդրույն էությունը, կռահեց, որ Լևոն սիրահարված է, ու իր հարսին դառնալով.

— Ախչի, մէ, խատ էսա «Աղվեսակյիրքյ» պե տիսնանքյ, տօլաբի մէջն ի։

Հարսը կբերե գիրքը։ Սուրբ Խամաս կառնե գիրքը, կբանա, կքրքրե, կդարձնե թերթերը։ Կփնթփնթա և կկարդա. «Ես տեսեալ զաղջիկն այն գեղեցիկ ցավն անկեալ ի փորն իւրոյ և ապա փոխեցաւ ի սիրտ իւրոյ»։

Դառնալով Մարանոսին, կըսե.

— Խասկցա՞ր։

— Չէ՞ քրափառ ի, շատ չեմ խասկնա։

— Ախթարքյ կասի քյի, տղէտ ախչիյ մի տիսե, սիրահարվերի։ Կյլօխ կցավա։ Ցավ կյլխուց սրտին կգանի։ Վերչապէս, սիրու ցավ ի։ Դօկտոր-մօկտոր փարա չանե։

— Է՞... դարմա՞ն։ Էտա ցավի ճա՞ր։

— Դարման շատ կօլայն ի, քյո պաժին էլ շատ ճոճ պամ չի։ Շոտմ Բիթ-Բազար[6] կնա։ Էրկու տարէկան այլօրմ, էրկու խավու ծիւ, քյասէմ ծավար, կյլյօխմ կարաքյ, էրկու ջուխտ էլ մարթու թաթ առ շոտմ ետարե։ Խա՛, չմոռնաս, որ տաս կուռուշ էլ սաղ փարա խետտ պիրես։ Ջուր քյո կյալը, ես թխթեր կշինեմ, կհաղրեմ։

Մարանոս խաթուն, Լևոնի սիրույն ամեն բան զոհող կնիկ, շուկա մեկնեցավ։

Սուրբ Խամաս «Աղվեսագրքի» թերթերը դարձուց, թերթեց, փնթփնթաց, կից-կտուր բառեր արտասանեց, մտածեց, հաշվեց և

ուրիշ վհուկներու միշտ կայացած հանձնակատարի վարձատրության նշանն էր։ Ցուցամատը՝ 10 ղուրուշ, մատնամատը՝ 20 ղուրուշ և այլն։

[4] Սովորություն էր, որ Վանի միջակ դասակարգի կիներ, արծաթ կամ պղինձ դրամները փոխանակ գրպաններուն մեջ պահելու, իրենց գլխին ոմեցած յազմային ճոթին մեջ կփաթթեին և վրան հանգույց մը կզարնեին, երևի ամենեն ապահով կերպն էր, որովհետև ոչ ոք կհամարձակեր կնոջ մը գլխին կամ երեսին ձեռք դպցնել։

[5] «Գարի նետել». Սուրբ Խամաս յոթ գարիի հատիկներ ափը կլեցներ, ափը կգոցեր, մյուս ձեռքն ալ վրան դնելով, կցնցեր, կշարժեր և ապա իր մոտ եղող սեղանին վրա կնետեր և գարիներու ինկած դիրքեն ու ուղղութենեն գուշակություններ կըներ։

[6] «Պիթ-Պազար» Վանի այն շուկան էր, ուր կձախվեր ամեն բան։

փետուրե գրիչը ձեռքն առնելով, երկու տարբեր գույն թուղթերու վրա սկսավ խղբզել այլանդակ նշաններ՝ կանաչ մելանով։ Ապա այդ երկու թուղթերը եռանկյունի ձևով ծալեց ու մեկ կողմ դրավ։

Անցավ կես ժամ և Մարանոս Խաթուն վերադարձավ, աջ ձեռքով բռնած կապոցներ և ձախ ձեռքով ալ աքաղաղ մը, ոտները թելով կապած և գլխիվայր բռնած։

— Ուզածներստ պիրիցի, Սուրբ Խամաս։ Էսա այլօր։ Էսա տաս կուռուշ սաղ փաՐէն, էսա ծաՐվար, էսա կարաքյ, էսա էլ թաթեր ու խավծվրներ։

— Շա՜տ աղէկ, Մարանոս Խաթիւն։

Սուրբ Խամաս աքաղաղը բակ տարավ, մորթեց գավաթի մը մեջ քիչ մը արյուն լեցնելով, ներս եկավ։ Մորթած աքաղաղը հարսին տվավ և պատվիրեց, որ փետտե։ Ապա առավ փետուրե գրիչը և նախապես խզբզած գունավոր և եռանկյուն ծալված թուղթերու վրա աքլորի արյունը որպես մելան գործածելով, լուսնի, արևի նման բաներ մը գծեց, մեղրամոմով կնքեց և Մարանոս Խաթունին տվավ։

— Մարանոս Խաթիւն, առ էսա էրկու թխթեր։ Էսօր ուրպաթ ի, բաՐխտավոր ես։ Էսա իրիկուն, լյոս շաՐաթ օր, էսա մէկ թուխթ առանց պանալու կարտալու, Լևոնի պանցի տակ տիր։ Էսա մեկ թուխթն էլ Լևոնի իշլկի ընթի (անութ) տակ կարի։ Թէ որ թամբեխիս պէս հմէն պան տեղ-տեղօք անես, Լևոնի ցավեր կփարատվեն քյանիմ օրից սօրա կաղէյնա։ Թէ վոր չաղէյցավ, արե, ձիկ խաՐաՐ պե, ուրիշ զօռլու թուխթմ կանեմ։ Ամա, թևոր շրսաՐաթ անեքյ, յա տիւ յա Լևոն թխթեր պանաք կարտաքյ, տրլրսմ կավիրի, խուրի-փերիներ կխոլվեն Լևոնի ցավեր դհա բեթաՐ կէլնեն։ Էսա ըսկընա։ Մենքյ էլ քյո սայից վաղ ըռըշտավ ինան խավօվ փլավմ կուտենքյ։

— Անուշ էլնի, Սուրբ Խամաս, խալալ էլնի։ Թօզ մեխա Լևոնի ցավերն ընցրնեն, փլա՜վն ինչ ի, ես դհա շատ ուրուշ փէշքյէշներ կպիրեմ։

Մարանոս Խաթուն զգուշությամբ առավ եռանկյունի ծալված թուղթերը, գրպանը դրավ և պատրաստվեցավ մեկնելու։

— Դէ՜, մնաս պաՐօվ, Սուրբ Խամաս։ Շա՜տ, շատ շնորհակալ եմ։ Քյո աղեկութեն չեմ մոռնա։

Ապա Սուրբ Խամասի փողոցի կիսաբաց դռան շեմքին վրա կանգնելով ձեռքերը բազկատարած, աչքերը դեպի երկինք առած, սկսավ բարեմաղթել։

— Ո՜վ ջահէլ-շիվանների պահապան սուրբ Սարկիս զօրավոր, քյե եմ ապավինե, քյո ոտն եմ ինդյե, իմ Լևոն քյե ամանաթ եմ տվե։ Տիւ իմ Լևոն փժըշկես, սո՜ւրբ Սարկիս, քյո ոտաց խոզին, դիվան-դարգյրխին կուրբան էլնեմ, ինչխ որ տիւ ախչիկ փախցուցիր, քյո մուրազին խասար, իմ Լևոնն էլ ուր մուրազին խասուցես, ինոր բարն ուտեմ՝, նոր մեռնեմ։

Մարանոս Խաթուն Քազաքամեջեն աճապարանոք և քրտնաթոր Այգեստան հասավ։ Տուն մտնելուն պես շնչասպառ, Լևոնի սենյակը գնաց։

— Ալա՜ պառկի՞ր ես, որտի։ Կյլխուտ ցավ ընցա՜վ։

— Չէ մարէ, ինչ ի՝ էն ի։ Կասես ցավս քիչմ դհա-դհա զօռեց։

— Վա՜խ, վա՜խ, խոկյիս էլնէր, բալամ։ Մկա՛, մկա՛, Լևոն շան, մկա կաղէյնաս։ Ես տեղ-զարման պիրիցի։ Մկա կաղէյնաս, մառախ մանե։ Էսա մէկ կտոր թուխթ պաՐցիտ տակ կտնեմ։ Էսա մէկէլ կտոր թուխթն էլ իշլկիտ թեի տակ կկարեմ։ Էթամ իշլիկտ պիրեմ, շապիյտ խան, իշլիկտ խակյի։ Եվ ցավերդ բիւթիւն, բիւթիւն կընցնեն կէթան կժրես։

— Թխթեր աղէկ, մարէ, ապա քյաֆուր վա՜Րթ։

— Մկա՛, Լևոն ջան, մկա իկյին կէրթամ, քյե վաՐթ էլ կպիրեմ։

Մարանոս Խաթուն ձգեց սենյակ, գտավ Լևոնի իշլիկ և թեի տակ եռանկյունի թուղթը կարելով, բերեց ու Լևոնին հագցուց և աճապարանոք այգին գնաց վարդ բերելու։ Լևոն առիթեն օգտվելով, թուղթը բարձի տակեն հանեց ու սկսավ կարդալ, որու վրա շատ տգեղ գրերով հետևյալը գրված էր, քրդերեն կամ ֆարսի լեզվով.

Ալէ՜հ, Մալէ՜հ։
Վոհա պրկա, վոհա պրկա։
Տավր ու պերա կյար կեն
Ջար ժի մրն

---

[1] Թոռս տեսնեմ։

Զըլ Ժուա, և այլն, և այլն[8]։

Եվ շատ ուրիշ այլանդակ նշաններ ու անհասկանալի բառեր։ Մոր ոտնաձայներ լսելով, աճապարանքով ծալեց թուղթը և նորեն բարձի տակը դրավ։

— Էսա էլ քյաֆուր վարթ, քյե մեռնեմ։

— Մարէ, կյլխուս ցավ ընցավ, մկա էլ սիրս կցավա։ Օ՜յ... օ՜յ... օ՜յ... ամա՜ն, ամա՜ն, մարէ՛, սի՜րս, սի՜րս։

Լևոն կսկսի անկողնո մեջ այս ու այն կողմ դառնալ, կոտրտվիլ, անհանգիստ ըլլալ, տքալ ու լալ։

— Ի՞նչ ի, զավակս։ Ի՞նչ էլավ, ինչի՞ կուլաս։ Չէլնի՞ թէ թուխթ պացիր կարտացիր։ Դօղրին ասա։

Չէ՞, մարէ։

— Սուտ մասե։ Թէ որ թուխթ պացիր կարտացիր, սաղն ասա, որ ուրիշ ճարմ անեմ։

Լևոն կսկսի լալ և լալաձայն կսե։

— Խա, մարէ, պացի թուխթ, փայց չկարտացի, չկառցա խասկնալ։ Վախէցա, ծալիցի, նորից պառցի տակ տրի։

— Վո՜ւյ, արևս խավարէր։ Տղա, տըլըսմ ավիրեր ի։ Ինոր խամար ցավ սրտիտ ի զարկե։

Մարանոս Խաթուն, միտքը երկար շարշարելե ետք, վերջապես որոշեց նորեն Արմաղանին երթալ և խորհուրդ հարցնել։ Աճապարանոք տունեն դուրս եկավ, Խանկե փողոցեն անցավ, Պարոնկանց թաղը հասավ և Արմաղանի դռան ուռնակը զարկավ։

— Պարի լյոս, Արմաղան,—ըսավ Մարանոս Խաթուն։

— Պարին վէրէտ, պարին տղիտ վէրէն էլնի։ Պարու մեջ մնաս։ Դէ ասա տիսնա՞նքյ, Լևոնի ցավ ընցա՞վ։

— Չէ՛, ախչի Արմաղան, տղէս դհա կտանջվի։ Քյո խաբարն արիցի։ Սուրբ Խամասին կնացի։ Ինոր ասիցի, որ տիւ ես օրոխկե։ Մատս էլ շանց տվի, որ խօսքիս ավատա։ Քյո անուն լսելուն պես, քյո խաթրի խամար էրկու թուխթ արաց, փոխանակ մեկու։ Առի թխթեր, պիրի, ուր ասածի պէս արի։ Մեկ Լևոնի պառցի տակ տրի, մեկն էլ իշկի թիվի տակ կարիցի։

— Է՞... դհա աղէկ, ցավն ընցա՞վ։

— Հը՞մմ... ցավն ընցա՞վ։ Թուխթ պառցի տակ տնելուս պէս, ցավ կյլխուց սրտին զարկեց, դհա-դհա բէթար էլավ, մկա սանջուն ինգյե սիրտ ինըն փոր։ Տղէս յաթղի մեջ կկյալրի, կուլա։ Կիտե՞ս ինչի։ Եփ ոտս Շդից քաշիցի, որ էրթամ քյաֆուր վարթ պիրեմ, Լևոն, տիւ Լևոն, մոն մէլնե, պառցի տկի թուխթ պաց, կարտա։ Չիկ կէրևա որ տըլըսմ ավիրեր ի, ինոր խամար ցավ կյլխուց սրտին ի զարկե։

— Մարանոս Խաթուն, ասածս դօղրի ի։ Տըլըսմ ավիրեր ի։ Էլ Սուրբ Խամասին չէթաս, կպարկանա։ Իմ իրիսատեղն էլ կպայսի։ Արե, քյե ուրուշ պամ սովրցուցեմ։ Շիտակն ասած, Սուրփ Խամասի թխթեր շատ զօրավոր չեն։

— Դէ, շոտ արա, ուրիշ ճարմ կիսես, ասա, տղէս շատ կչըրչըրվի։

— Արե, քյե օրոխկեմ Կարիբի Վարտանի մօտ։ Վարտանի արած թխթեր զօրավոր են։ Դհա շատ Վարտան փոխանակ կյարու, ցորէն կթալի, զար[9] կթալի։ Վեցխազարյակ ունի, հմէն պան տեղն ու տեղ քյե կասի։ Զմոռնաս, եփ Վարտանին կէթաս, էրկու մատկերտ[10] նշանց տուր, որ ավատա, թէ ես եմ քե օրոխկե։ Վարտան քիչմ շատ փարա կուզի, ամա ի՞նչ անես, կարժի, ուր քործ կիտցուղ մարթ ի Վարտան։ Սուրբ Խամասի պէս չի։

— Աղէկ ասիր, Վարտանին էրթամ։ Ինոր անուն լսիր եմ։ Կարծեմ Նորաշէնա թաղ կմնա։ Մեկ էլ վո՞վ քյաղաքյ պիտի էթա՝ Սուրփ Խամասին,—ըսավ Մարանոս խաթուն։

— Խա՛, խա՛։ Վարտան շատ ալ չափուխ պան ի։ Բախտ կըպանա, կուրիսած պաներ կկընդրնի։ Կյուզութներ էրևան կխանի, շոկապ[11] անելով։ Սիրահարվածներաց ու-

---

[8] Վհուկներ շատ անգամ միամիտներե կպահանջեին անկարելին։ Այսպես՝ չածիլված կրոնավորի գլխեն երեք թել մազ, ճնճղուկի մը թիակոսկր, խաղողի որթի գարնան շուր, տասներկու տարեկան անդրանիկ տղայի մը եղունգ և այլն։

[9] Զար-նարդի գարերուն նման չորս զարեր էին, արույրե շինված, որոնց վրա կային կետեր, այս զարեր ծակ էին և երկաթե բարակ թելով թույլ կերպով իրար միացված, և ամեն կողմ կրնային դառնալ։

[10] «Երկու մատներ» կնշանակեր երկու անդամ տաս զուրուշնոց, այսինքն՝ մեկ մեճիտիեի հանձնարարողչեր։

[11] Շոկապ.—Որպես թե Կարիպի Վարդան, թուղթ

րենց մուրազին կխասուցի։ Խիվնդութեան-ներաց պատճառներ կկընդրնի։ Ի՞նչ կիտնամ, դհա շատ ուրուշ պաներ։ Կնա կասեմ, չմոռնաս ասէլու, որ ես եմ քյե օրօխկե, չմոռնաս էրկու մատկերտ էլ նշանց տաս,— ասաց Արմաղան։

— Էթամ, անկյնցա, տղէս շատ կշարշրրվի։

— Խա՛, Մարանոս Խաթիւն, մոռցա ասելու, որ հիւրիւթից սօրա, երբ ճամպրըխներ պացվան, Վարտան առեց ուր կնիկ—ղաթի զավակ չունէր—իր կյրքյեր, ցորնի խատեր, զարեր, փէտուրէ քրիչ, Վեցխաղարյակ ու կնաց Ուռուսաստան։ Դաշ Թիֆլիզ հաստատվավ, սօրա կնաց Բաքու։ Տիւ Կիտե՞ս, որ շատ-շատեր կարքի կկայնին, Վարտանի տուն առաջ ուրենց բախտ իրիշկալու, ինչ կիտնամ, դհա ուրենց ուրուշ դարդերաց դարման անելու խամար։ Լսը, որ մէկ տարվա մէջ խաղարավոր մանէթներ կօլօնեց, յավաշմ էլավ նորէն Վան էկավ։ Մկա նստե, խանգյիստ-խանգյիստ կծամի։ Դէ կնա։ Անկյնցար։

— Մնաս պարի,—ըսավ Մարանոս Խաթուն։

— Էթաս պարի։

Մարանոս խաթուն հազիվ մեկնած, Արմաղան սկսեց ուրնուր փնթփնթալ։

— Հիմար կնիկ, կկարծի, թե ուր լաճ խիվանդ ի, փորի ցավ ունի։ Հը՛... Լևոն տեղմ ախչիկ ի տիսե, ախչկան զարկվեր ի, փսայվել կուզի։

Կէս ժամ հետո Մարանոս Խաթիւն Վարտանի տունը կդտնե, պատահող անցորդներու հարցնելով։

— Պարի լյոս, Վարտան աղա։

— Ասսու պարին։ Խէր էլնի։ Նստի տիսնա՞նքյ։

— Վարտան աղա, մեր լաճ, Լևոն, շատ կյէշ խիվանդ ի։ Կյլօխ, սիրտ, փոր հմէն կցավա։ Սուրփ Խամասին կնացի։ «Աղվեսակյիրքյ» կարտաց, ուրնուր խարար իտու, պտպտաց, ապա էրկու թուխթ արաց։ Ասաց՝ Լևոն խիվանդ չի, սիրահարվեր ի, ախչկա ի զարկվե։ Պիրիցի թխթեբ, ուր ասածին պէս արի, փարա չարաց։ Ջանմ, ի՞նչ սիրահարութեն, ի՞նչ պան։ Տղես ցավերաց մեչ կխեխտվի, կտառապի, կտանջվի, տեղաց մեջ կտառնա, կկյալրվի։ Քյե մեռնեմ, Վարտան աղա, քյո բախտն եմ ինգյե, խօրհուրթմ կանաս, տու, ճարմ կանաս, արա, տղէս շատ կշարշրրվի։ Ջմոռնամ ասելու, որ Արմաղան զիկ օրօխկեց և ասաց, որ էրկու մատկերս տնգյեմ որպէս նշանապան։ Վարտան աղա, Արմաղանի խաթրի խամար զօրավոր թուխթմ արա, քյե մեռնեմ, տղես խեղճ ի։

— Հը՛մմ... Սուրբ Խամաս... էտա կախառթ խապէպայի, անօթիի մէկն ի։ Հէչ պամ էլ չի կիտե, և միամիտներաց կխապի, ինոնցից խավ, ալիւր, այլօր ճլալտուն վառէկ, կարաքյ, ծավար, կուրկոտ, փարա կառնի։ Մկա կյանք քյո լաճու ցավին ...լաճուտ անուն Լևո՞ն ի, ասիր։

— Խրամանքյտ ես, Վարտան աղա։

— Խրամանքյտ ի պարին կատարէսցէ։

Վարտան «Լեվոն» բառ թխթիմ վրեն կկյրի, կյրեր զատ-զատ, ըսկանա՝ Լևոն վէրուր մատին կխամբրի, կասի.

— Հը՛մմ... «Լեվոն» խինդյ կյիր ի։ Խինդյ պարի թիվ ի։

Ապա կառնե իր հանրածանոթ «ավետիք»[12] ցորենի յոթ պարարտ հատիկները, ափին մեջ կլեցնե, ափը կգոցե։ Երկու ձեռքով կցնցե և իր առջև գտնված սեղանին վրա կնետե։ Շրթունքները կշարժե, կիցկըտուր բառեր կարտասանե։ Այսպես կնայի։ Այնպես կնայի։ Կծռի, կողմեն կնայի, կդիտե պահ մը, կհաշվե և փետուրե գրիչով թուղթի մը վրա բաներ մը կգրե ու կըսե.

— Հը՛մմ... Խորհուրթ խորին անհաս անսկիզբ։ Խասկցա՞ր, Մարանոս Խաթիւն։

մը, հմայակ մը կգրեր, որու զորության շնորհիվ գողեր չէին կրնար միզել, մինչև որ իրենց գողցած իրը կամ առարկան սիրոջ չվերադարձնեին։ Նորածիններու ծննդկաններու և առհասարակ ամեն տարիքի անձերուն վնասողներն էին գիշերվա չարքեր, չար աչքեր և կենդանակերպ ոգիներ, ինչպես գայլ, օձ, կարիճ, գորտ, մրջյուն և այլն, որոնք կառաջացնեին գորտնուկ, միջմուկ, օձուկ և այլն հիվանդություններ։ Վարդան այս հիվանդություններու համար ալ կշիներ հմայակներ, օրինակ՝ գելկապ, կարիճկապ, գորտկապ, օձկապ և այլն, և հիվանդներու վզեն կախել կուտար։ Այս հմայակներ որպես թե խնդրանքներ էին ուղղված բարի ոգիներուն, ընդդեմ չար ոգիներու, անհետացնելու համար արկածներն ու հիվանդությունները։

[12] Ցորենի անուն։ Կլոր կարմր խատ։

— Չէ՛, Վարտան աղա, քրաբառի պոպիկ եմ։

Ես էսա տեղ ախչիյմ կտիսնամ։ Դողրին ասա, Լևոն տեղմ ախչիկ տիսե՞ր ի։

— Ի՞նչ մեղքյս պախեմ, օրմ ասաց՝ մարէ, էսօր Սրփիկ տիսա։ Էն էր, էն։ Էլ չում մկա պամ չասաց։

— Սրփի՞կ, — կհարցնե Վարդան, — և թուղթի մը վրա կգրե «Սրփիկ» բառը, նորեն զատ-զատ՝ «Սրփիկ», և մատներու վրա կհամրէ,—էսա էլ խինգյ կյիր ի, պարի թիվէր։ Աղէկ էլավ, պարի նշան ի։ Մարանոս խաթիւն, ցորէյտեր կասեն, որ Լևոն և Սրբփիկ անուն ախչիկ երջանիկ պիտի ըլլան և իրենց մուրազին պիտի խասնեն, որովհետև անուններու գրերը խավսար ին։

Ապա «Լեվոն» և «Սրփիկ» բառերը կապույտ թուղթի մը վրա կգրե։ Թուղթը մեղրամոմի մը վրա կոլորե և Մարանոսին տալով, կըսե.

— Մարանոս խաթիւն, ա՛ռ էսա մոմ, վաղը ուրպաթ ի, ամբողջ օր տիւ ինան Լևոն ծոմ պախէքյ։ Միայն կեսօրին կաղախ մը ջուր խմեցեք։ Իրիկուն մութը կոխելուն պես, տիւ ծեր փագյախը կնա մտի, էսա մոմը մթան մէջ վառի և սպասի, ջուր մոմ վառվի լմնա, գրածս թուղթն էլ խետը։ Էտա մոխիր պախի։ Ապա ա՛ռ էրկու ճող հոտ։ Էտա փէտերն էլ վառի փէտի ու մոմի մոխիր թխթիմ մէջ լցէլով, կապոցմ շինի և պախի, զգուշ եղիր, որ ոչ-ոք չտիսնա։ Ուրբաթ իրիկուն, երբ Լևոն քնանալու կպատրաստվի, թող կաղախմ աղճիւր խմի[1] ու քնանա։ Կես ժամեն նա երազի մեջ ախչիկմ կտիսնա, որ իրեն ջուր պիտի տա խմելու և պիտի ասի, թե վիր ախչիկն ի։ Երբ մյուս օր Լևոն քյե կասի ախչկա լղարի անուն, տիւ ուրպաթ իրիկուն առ մոխրի կապոց, Լևոնի կյլխուց իրեքյ թել մազ, ճնշղկան փիտուրմ, յօթ ծիլ ունեցող խնձորի ճոդմ, հմեն մէյ կապոց արա և ախչկա փողնի դռան մօտեր, կյաոտիկ տեղմ քյարիմ տակ տիր կամ խորի կյէտնի տակ։ Նորէն կասեմ, ըսքուշ կաց, որ մարթ չտիսնա։ Եվ եթե հմէն պան ասածիս պէս անես, ախչիկ խենթի պես Լևոնի վէրէն կսիրահարվի։

Երբ Մարանոս խաթուն կառնե մոմն ու թուղթը և երթալու կպատրաստվի, Վարդան կըսե.

— Կեցիր, Մարանոս խաթիւն, դհա չլմնցա,—և իր կնոջ դառնալով.—Ախչի, Օղիկ, մէկ Վեցխազարյակ[13] պե տիսնանքյ։

Վարդանի կին, Օղիկ, կբերե շուշփաներու մեջ փաթթված գիրքը։ Վարդան երկյուղածությամբ՝ մեկիկ-մեկիկ կբանա շուշփաներ և գիրքը երևնալուն պես կհամբուրե։ Ապա ձեռք կառնե երկաթյա թելով իրար ագուցված արույրե շորս զարեր և սեղանի վրա կը նետե ու զարերու վրա եղած կետերը հաշվելով՝ թիվեր մը կմրթմրթա։

— Յոթ, ինն, տասներեք, որով կընե քսանևինն։

Կբանա գրքի էջ 29, ուր կկարդա՝ մանրամասնություն տեսնել էջ 69-ի վրա։ Կը բանա էջ 69-ը, հոնքերը կկիտե, նորեն կկարդա։ Գլուխը կշարժե։ Շրթունքները կկրծե և իրար կուտա, որպես թե կկարդա և աչքերը դեպի առաստաղը հառելով կբացականչե.

— Յահո՜։...[14] Վահո՜։ Ահրիմա՛ն։ Վահո՜։ Իպլի՛ս... Յահո՜։՝ Հազար-Ցենտ, Ույդ։ Յահո՛։ Վահո՛։

Ապա, լուռ մտիկ կընե, ձեռքով ականջի ձագարը լայնցնելով, որպես թե մեկը իրեն բաներ մը կըսե։ Գլխի խոնարհումներով հասկնալ կձևացնե։ Ապա կառնե փետուրե գրիչ և թուղթ մը, որուն վրա մեղրամոմի պաղած կաթիլներ կան։ Գրքին կնայի մերթ ընդ մերթ։ Կգրե անհասկնալի բառեր։ Կքաշե կլոր և ուղիղ գծեր, կգծե արևի պատկեր ճաճանչներով, կդնե քանի մը թվանշաններ։ Թուղթը եռանկյունի կծալե, կվառե մեղրամոմ մը և մոմին կաթած կաթիլներով կկնքե, որպեսզի չբացվի և Մարանոսին տալով, կըսե։

— Էսա նուխսէն շատ զօրավոր ի,

---

[13] Վեցհազարյակ՝ գուշակություններու արհեստ ուրվեցնող գիրք մը։ Ախթարք ընողներու հավատո հանգանակը։ Կպարունակե թվանշաններ, զանազան ձևերով գծեր, նշաններ ու թելադրություններ։ Ըստ ոմանց՝ գիրք համարողական արհեստի և ավելորդապաշտության, հիմնյալ յոթ ձայնավոր գրերու վրա։

[14] Յահո՜։, վահո՜։, վահե՜, ախ-վա՜խ բացականչություններ գուցե հին չաստվածներու, գուցե Վահեի, Վահագնի կամ Հայկ-Օրիոն չաստվածներու աղավաղյալ ձևերն են, որոնք կհիշվեին խրախճանություններու և տրտմություններու ժամանակ, որպեսզի չաստվածներ գային և աներևութաբար մասնակցեին կամ ընկերանային իրենց պարերուն կամ զորացնեին զիրենք իրենց ցավերուն մեջ։

յկոտրում կտավի մէջ փաթիւթի էրկու յանից թել ընցու Լեոնի վզից կախի։

— Շատ շատ շնորհակալ եմ։ Աստված էյե պակաս չանի մեր կյլխուց։ Ուրախութենի, երշանկութենի մէջ մնաս. Վարտան աղա։ Դէ՛, մկա քյո ուզածն ասա։

— Մարանոս Խաթուն, էսա մեղրամոմ ծաբյոց մեղրից ի շինուկ. ես խազար ղոռուվ եմ կընդե։ Շատ թանգյի։ Ախթարքյի կյին քսան կուռուշի, իսկ նուխսու համար ես քեզնից մենակ քսան կուռուշ կառնեմ։ Ուրիշներաց մոտէն էրկու մաշիթիե, յա թէչէ շատ կյախ էլ ավել կառնեմ։ Արմաղանի խաթրի խամար քյե մեկ մաշիթիե թող պակաս էլնի։ Էրկուս մէյտեղ կանի քյառասուն կուռուշ։

— Կլխուս վէրեն, Վարտան աղա, քյառասուն կուռուշ թող քե կուրրան էլնի,—ասավ Մարանոս Խաթուն, վճարեց և պատրաստվեցավ մեկնելու։

— Ես կավատամ, որ էսա էրկու թղթեր Լեոնին շատ պիտի օքնի խարսնիսմ պիտի անեքյ ձիկ էլ հրավիրէք։ Է՞ ապա որ չէլավ։ Կիտես յա, աշխար ի, կպատահի։ Թէվոր քորձեր հաչող չկնացին, ձիկ շոտրմ խարաբ արա։ Կիտե՞ս, Լեոն խիվանդ չի, Լեոն սիրահարվեր ի ախչկա վէրէն։ Մէ կմնա ախչիկն էլ Լեոնի վէրէն սիրահարուցել։ Իտոր խամար կասեմ, թէվոր գործեր հաչող չկնացին, մե կմնա մէկ ճար։ Ստիպված հուրիներաց ժողովին պիտի էթամ անցամփ տիսնամ ինոնց կյլխավոր Ահրիման, ինոր խեա խոսեմ քյո խնթիր և նոր խորհուրթներ առնեմ։ Հուրիներաց ժողով տեղի կունենա ամիս մեյ տիր, ուրպաթ օր, կիշեր կյախ մութ կամ կյաղտիկ տեղեր։ Կախ-կախ էլ ցամքյուկ խորերաց մէջ, կախ-կախ էլ Սապունջու ծիթխացի Կոճի տան մութ փոսի մէջ։ Տէլ ձիկ խարաբ չտվին, թէ էկող ժողով ե՞փ և ո՞րտեղ պիտի անեն։ Եվ ես Արմաղանի, քյո և ջահէլ-ջիվան Լեոնի խաթրի խամար կիշերմ անքյուն և նատոռ պիտի մնամ և ախնվեմ Ահրիմանի կամ ինոր փոխանորթի խետ։

Ապա Վարդան աղան զգուշությամբ և երկյուղածությամբ «Վեցհազարյակը» նորեն շուշփաներու մեջ փաթթեց ու տոպրակին մեջ դրավ։ Մաքրեց փետուրե գրիչը և զարերու հետ միասին իրենց պատկանյալ դարակին մեջ տեղավորեց, պատրաստ՝ նոր հաճախորդի համար։

Իսկ Մարանոս Խաթուն խոնարհություն ընելով և շնորհակալական ու մաղթանքի խոսքերով հրաժեշտ առավ և տուն վերադարձավ։

Լեոն հանգիստ անկողնո մեջ նստած կկարդար։ Մոր ոտնաձայներ լսելուն պես, իսկույն գլուխը վերմակին տակ քաշեց, սկսավ նորեն հիվանդություն կեղծել, գալարվել, լալ և տքալ։

— Վա՜խ... վա՜խ... բալամ։ Դհա կըտանջվես։ Էսա ի՞նչ չար սհաթի ռաստ էկանքյ։ Իշալլահ էտա ցավտ էլ կընցնի, մառախ մա՛նե, բալամ։

Մարանոս Խաթուն կբանա Լեոնի կուրծքը և եռանկյունի ծալված նուխսեն թելով մը Լեոնի վզեն կկախե։

— Էսա մէկ։ Դհա էսա իրիկուն էլ փադյախ պիտի էթամ, մեղրամոմը վառեմ, և... և... մնաց տիւ ձիկ թո՛ղ, իշալլահ հմեն պան աղէկ պիտի էթա և լավանաս, Լեոն ջան, մառախ մա՛նե։ Կիտե՞ս թուխթ արող Վարտան ի՞նչ ասաց.

— Ի՞նչ ասաց, մարէ։

— Ասաց, որ տիւ ախչիյմ ես տիսե, ինոր անվան առաճի կյիր Ս-ի։ Կամ տիւ ախչկան զարկվիր ես, կամ ախչիկ քյե ի զարկվե։ Էսա իրիկուն սհաթի տասին քյնէլուցտ առաճ կադխմ աղճիւր խմի պառկի։ Անպատճառ էտա ախչիկ պիտի տիսնաս էրազիտ մէջ։ Չէ՞ որ աղճիւր խմիր ես, ծարավ ես՝ էտա ախչիկ պիտի կյա, քյե ճիւր տա, որ խմես։ Խա՜, չմոռնաս ախչկան խառցու, թե վի՞ր ախչիկն ի։ Իշալլահ էրազտ ի պարին պիտի կատարվի, ախչիկ պիտի տիսնաս և սուրփ Սարկյիս զօրավոր քյո ցավերաց տեղ-դարման կանի։

Լեոն մոր բերանեն այս նոր լուրը լսելով, կիսաժպիտ կազդուրման նշաններ ցույց կուտա և շտկվելով, անկողնո մեջ կնստի։

— Դյօ ըտրսկնա, քյե մեռնեմ, աղէյցար, աղէյցի, կաղէյնաս, մառախ մա՛նե։

Արդեն երեկո էր, մութը կոխած, Մարանոս ախոռը գնաց մեղրամոմը այրելու, իսկ Լեոն ըստ մոր խրատին, քիչ մը թթու բանջարեղեն կերավ, գավաթ մը աղջուր խմեց և պառկեցավ քնանալու։

Հաջորդ առավոտ, Լեոնի մայրը կանուխ և անհամբեր Լեոնի ննջասենյակը մտավ ու հարցուց։

— Էրազ տիսա՞ր, Լեոն ջան։

— Խա, մարէ, տիսա։
— Էրազիտ մէջ ախչիկ տիսա՞ր։
— Խա, Մարէ, տիսա։
— Ախչիկ ճիւր իտո՞ւր քյե։
— Խա, մարէ, իտուր։
— Անուն խաոցուցի՞ր։
— Խա, մարէ, խաոցուցի։
— Դէ ասա տիսնամ, վի՞ր ախչիկն ի։

Լևոն, որ միշտ և շատոնց գիտեր աղջկան անունը, ըսավ.

— Խոտի Մկանց Սրփիկ։
— Է՜... քե տիւր էկա՞վ։
— Խա, մարէ, շատ տիւր էկավ։
— Ասելի կսիրես էտա ախչիկ։
— Խա մարէ, կսիրեմ, հա՛լբաթ կսիրեմ։
— Աղէկ։ Էլ տիւ հմէն պան թող ձիկ։ Ես Արմաղանին կասեմ։ Արմաղան հմէն տուն կմտնի կէլնի։ Էն շատ ախչկներ կճանչնա։ Շատ ախչկներաց էլ փեսացու ճարեր ի։ Էն հմէն պան կշարապրի։

Մարանոս Խաթուն Արմաղանին լուր կղրկե և իր տունը կհրավիրե։ Արմաղան երկու օր հետո կուգա։

— Պարի լոս, Մարանոս Խաթիւն։
— Պարին վերէտ, վէր ծաքյերացտ, Արմաղան, պարով էկար։ Ինչի՞ անկյնցար։ Չէ՞ որ էրեկ պիտի կյիր։ Է՜... ասա տիսնանքյ, ի՞նչ կա-չկա։
— Սաղութեն։
— Շատ տներ կմտնես, կէլնես։ Տիւ շատ պան կիտես։

Երբ Արմաղան կպատրաստվեր Մարանոսի հարցումներուն պատասխանել, Լևոն կիսահագնված ներս եկավ և սեղանի վրայեն գիրք մը առնելով նորեն իր ննջասենյակը գնաց։ Արմաղան Լևոնը տեսնելով, պատեհ առիթ համարեց խոսակցությունը բանալ։

— Մարանոս Խաթիւն, Լևոն ի՞նչխ ի, աղէյցա՞վ։ Վարտանի մօտ կնացի՞ր։ Թուխթ իրիշկալ տվի՞ր։
— Խա, կնացի։ Վարտան հմէն պան տեղբաս տեղ ասաց։ Ասաց, որ Լևոն խիվանդ չի։ Լևոն զարկվեր ի ախչկամ և ախչկա անվան ուռճին կյիր Ս-ի։ Էրէկ կիշեր Վարտանի թխթի զորութեամփ Լևոն ախչիյմ Վարտան թխթի զորությամփ Լևոն ախչիյմ մոն մէջնե Լևոնին կաղախմ ճիւր տուր, որ խմի էրազի մեչ։ Վով էլնի աղէկ ի։ Խոտի Մկանց Սրփիկ։ Էրազ տիսնալուց սօրա, Լևոն քիչմ աղէկ ի։ Փորի ցավ ընցե, ամմա սրտի ցավ գյինա՞ տեղն ի։ Արմաղան, թեև տղէս տէլ շատ ժամանակ ունի, ամմա ես կխնթրեմ, որ տիւ մէյ խատ գյլոխտ զանես։ Խոտի Մկանց տուն Վրզվրզի թաղն ի, քյոշի տուն։ Մէ հա մտի, ախչկան տես, թե վոր խավնար, պատ շարի, որ Լևոն շոտմ նշանենքյ։

— Տիւ զիկ թող։ Զիկ Արմաղան կասեն։ Շատ ախչկներաց խամար եմ փեսա կնդե։ Լևոնի խամար էլ ճարմ կանեմ. մանաչ մանե։ Լևոն քյոն չի, իմ տղէն ի։ Տղէն ախչկա վէրէն սիրահարվեր ի, մե կմնա ախչկան էլ աղի վէրէն սիրահարցուցենքյ։

Մարանոս խաթուն վեր կելլե։ Հացի սլան կբերե, սեղան կպատրաստե։ Մրգեղեններ, հաց, պանիր, շիշ մը գինի սեղանին վրա կդնե։ Կուտեն, կխմեն, կշաղակրատեն։ Մարանոս Խաթուն երկու շարեք Արմաղանի ափը կդնե ու կսե.

— Ա՛ռ, Արմաղան, բազառ էթաս պէտք կուկյա։ Ամմա եփ Լևոնի խնթիրն էլ հաշողցուցես, էն կյախ տես թե ի՞նչ կանեմ։ Դե, քյե տիսնամ, Արմաղան, շոտ պարի խաբարմ պիրես։

Մնաս պարի, Մարանոս խաթիւն։ Շա՜տ, շատ շնորհակալ եմ։ Տիւ զիկ թող։ Ես հմեն պանի ճար կկընդրնեմ։

Անցան օրեր։ Լևոն կամաց-կամաց կազդուրվեցավ և գործի գնաց, իսկ դրացիներն ու պառավները բացին իրենց բամբասանքի տոպրակները։ Այսպես.

— Ախչի, լսը՞ր։ Օհանէսենց Լևոն սուտ խիվանդ ի էլե, մանգյար փսայվել կուզի։
— Խա՛ լսը։ Լաքյոշ պէրան Արմաղանն էլ մքյուքյի պես կեթա-կուկյա, խաբար կտանի-կպիրի։ Վա՜յ, շիվա՜ր էլա։
— Հը՜մմ... Խոտի Մկանց Սրփիկ սիրահարվերի։ Քյա Մո՞ւկն էլ օրօճ։
— Մեղա, տե՜ր։ Օշնյալ է աստված։ Ի՜նչ օրվա խասանքյ։ Սիրահարութեն։ Դե խո՛ղ մտնեքյ, անամօթներ։ Իմ օղորմած խոկյի մէրս կասէր, ծիանքյ կնալին՝ կըրբեն էլ ոտկեր պարղեց։
— Քյա, տիւ հմէն չես կիտե։ Կախարթ Կարիբի Վարտանին կնացիր են, թուխթ անել են տվե, որ ախչիկ Լևոնի վէրէն սէր թալի։
— Ախ, էն թոլախավատ վարժապետներ, սիւսլի-փիւսլի պախսակերներ, սիրուհի փնտռողներ։ Մուխսի խաթիւն, ես ղաթի

օրրմ պիտի կպնեմ էն վարժապետներաց։ Մեկ սուրբ օրենքյմ ունինք, պախսն էր, էն էլ կուտեն, էն կյրողի տարածներ։ Սաղմոս, Նարէկ կարտալ մոռցան։ Ի՞նչ կկարտան։ Նորելուկ կյրքյեր, շուն, կատու, ախչիկ, սէր, սատանա։

Սրփիկն էլե էօրօսպաց,
Քյամին իզարկ իրեսն իրաց.
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Աչկով-ընքյվով սիրտս կդաղես
Կաքյավ քյէլքյօվտ խոկյիս խանես.
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Կարմիր շուխա, կանանչ ատլաս
Քյե պոնելու ունեմ խավաս,
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։
Քյե խամար ջինեմ կաֆաս,
Մէջ տնեմ կայիմ կէնաս
Ջան Սրփիկ, ջա՛ն, ջա՛ն։

* * *

Թէ կը սիրես սրտով սիրի
Աստվորի մալն ի՞նչ անեմ։
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Թուխ աչք թուխ ունք, Լևոն ջան,
Բիլա քյե հալն ինչ անեմ։
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Լևոն աղի ծին փոթեր ի,
Էրկէն չմբիւլ տուն թողեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։
Համէն սարի խոտ կիրեր ի,
Պաղ ախպրի ճիւր խմեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։

Դրացիներու չարախոսություններն ու երդերը ստեղծեցին նախանձորդներ ալ, որոնք նամակով և ուրիշ միջոցներով ազդարարեցին և սպառնացին Լևոնին և իր մորը, որ հեռու մնան Սրբիկեն[15], բայց Մաբանոս խաթուն կարևորություն չտվավ և ըսավ.

— Ես էտա ճոռոթնի ծակից խաճող ղաղարներաց չեմ վախենա, ինչ կուզեն թող անեն։

Տարաձայնությունները և բամբասանքները շրջան ընելով, վերջապես Հովհաննես Աղայի ականջը ինկան։ Երեկո մը Հովհաննես Աղան դործեն տուն դարձին, խոժոռ ու բարկացած, ըսավ.

— Էսա ի՞նչ ի, կնիկ։ Ի՞նչ խորհրդավոր, կյաղտիկ-մազտիկ քյո՞ կյլխու պաներս կանես։ Սուրբ Խամասին կէթաս, Կաբիրի Վարտանին թուխթ անել կուտաս, ջատախաս Արմաղան օրթէն թալիր ես, տղիտ խամար ախչիկ կփտռես։ Տան կյլխավոր ե՛ս եմ։ Համէն պան իմ հրամանով պիտի էլնի, խասկցա՞ր։

— Արիվուտ մեռնեմ, մա՛րթ , էսա մէկ պան էլ թող իմ խոսքով էլնի։ Օրմ չէ օր Լևոն պիտի փսակենքյ։ Թող մէկ-էրկու տարի էլ շոտ էլնի։ Ի՞նչ զարար կա։ Տախ էծում ումր ի մնացե ձիկ։ Թող Լևոն փսակեմ, ինոր բարն ուտեմ, նոր մեռնեմ։

— Ես ալա չեմ մեռե, որ տիւ տան չմբիւլ ծեռտ առնես և ուղածտ դեխ քյաշես։

— Քյե մեռնեմ, մա՛րդ, ինչի՞ պէրանտ ըսկնա կյէշ կպանաս։

— Հը՛մմ... Լևոն փսակենքյ։ Փսակենքյ ամմա, ախչիկն էլ քիչմ մեր ցեղին լայեղ պիտի էլնի։ Հո՛ւհ.... Խոտի Մկանց Սրփիկ։ Խոտի Մկանքյ, խոտի Մկանքյ պստիկ ծաքյմ ունե՞ն։ Թաղի, թաղակայտեր, Եկէղեցվոր Հոքափարցության մէջ պատիվ ունե՞ն։ Լևոն փսակենքյ։ Աղէկ։ Քոնէ ջուկայի մէջ պատվավոր առևտրականմ աներ ունենանքյ, վեր օրմ մե պէտք պիտի կյա։ Խիկար իմաստուն կասի (մատը քունքին դնելով)՝ կնա պոնի քյե խնամի, որ պոչ քյո պոչին կնմանի։

Հովհաննես Աղան ապա կսկսի երգել աղքատներու երգած երգին վերջին համարը, ծաղրելով, կրցածին չափ եղանակ հարմարցնելով և ձեռքերը երերցնելով։

Լևոն աղի ծին փոթեր ի,
Էրկէն չմբիւլ տուն թողեր ի,
Համէն սարից խոտ կիրեր ի,
Պաղ ախպրրի ճիւր խմեր ի,
Ջան Լևոն, ջա՛ն, ջա՛ն։

— Ի՞նչ անեմ, մարթ, ի՞նչ սև խոզ տամ կյլխուս։ Լևոն իշտե Սրփիկին ի զարկվե։

— Կնի՛կ, իմ համէն խրատներս քյո մէկ ականջից կմտնի, մէկէլ ականջից տիս կէլնի։

— Իմ կյլոխ էնկանդար ճոչ չի, որ քյո՞ համէն ասածներ էնտեղ տեղավորեմ։

— Կնիկս, եղնիկս, ուլիկս, ջեյրանս։

[15] Երբ խոսեցյալներն առ ոչինչ կհամարեին ազդարարություններն ու սպառնալիքները, նախանձորդներ կդիմեին կախարդին և անոր առատ դրամ վճարելով, կխնդրեին, որ «Կալկապա» ըներ, այսինքն՝ հիվանդացներ խոսեցյալները, կամ ատելություն ձգեր անոնց մեջ, կամ փեսան անկարողության դատապարտեր և կամ հարսնացուն «թրպրդ» հիվանդությամբ վարակեր։

Ես փորցառու մարթ եմ։ Մշու Սուլթան Սուրփ Կարապետ տա քյո՜ մուրադ ուխտի կնացիր եմ։ Խոսքիս ավատա։ Սիրահարութեն ծառութեն ի, հիմարութեն ի։

— Ինչի՞ ըտկնա՜ կասես, ջա՛նմ, իշտե՛նոր մոդա ի էլե։ Հմէն ջահէլներն էլ դաշ կսիրահարվեն, սօրա կփսայվեն։

— Կնիկ, ես կյրքյի մէջ կարտաշիր եմ, էր սիրահարված ամուսնություն կնմանի պաշարված պեռթի, ինոնքյ, որ պեռթի մէջն են ու պաշարված՝ տուրս էլնել կուզեն, ինոնքյ, որ տիսն են՝ ներս մտնել կուզեն։ Տիւ կիտես, Լևոն կփսակես, փսակի, մեխքյ քյո՜ վիզ։ Քյո մուր քյո՜ ճակատ։ Ես պաճառ չեմ էլնե։

— Մարթ աստուծօ, ալա՜ կայնի տիսնանքյ Արմաղան ի՞նչ խաբար կպիրի։ Բալքյի կրէհրե՞ն.

Հովհաննես աղան ու Մարանոս Խաթուն այդ երեկո երկար վիճաբանեցան Լևոնի ամուսնության խնդրույն վրա։ Վերջապես Հովհաննես աղան կիսաբերան կամք տվավ, ըսելով.

— Տիսնանքյ վաղ աստված ի՞նչ տուռ կպանա՜։

Առտուն, ըստ սովորականին, Հովհաննես աղան գործի գնաց, տալով որոշ պատվերներ իր կնոջ և մշակ Սերգոյին։

Արևը հազիվ նիզակ մը բարձրացեր էր երկնակամարի վրա, երբ Արմաղան Հովհաննես աղայի դռան ուռնակը զարկավ։ Մարանոս Խաթուն բացավ դուռը ուրախ դեմքով։ Ներս հրավիրեց Արմաղան։ Մեկմեկ աթոռի վրա նստան և անհամբեր սկսան իրենց խոսակցություն։

— Դէ ասա տիսնանքյ, Արմաղան, պարի խաբարմ պիրիցի՞ր։

— Էնա Տիրամէր[16], որ պիրիցի։

— Է՜... ասա տիսնանքյ, ախչիկ խորոտ ի։

— Համ խորոտ ի, համ մորոտ։

— Ախչիկ խօ տախ չի՞։

— Տախ որն ի, տալար որն ի։ Գյո՜ շնորքով ախչիկ ի։

— Է՜... պէրան խոտոտացի՞ր, կյէշ խոտ կուկյէ՞ր։

— Խոտոտացի։ Քյաֆուր վարթի խոտ կուկյէր։

— Խեռ զրուցիցի՞ր, լեզուն խօ կըլվատ չի։

— Լեզուն վարժուհու լեզու ի։

— Է՜... Բոյ-բուսո՞ւ։ (Բուսաթ)։

— Բոյն էլ տեղն ի, բուսուն էլ։

— Ը՜... ապա խաբայա՞թ։

— Խաբայաթ, մաքյու պէրան։

— Է՜... աչքե՞ր։ Աչքեր խօ շիլ, յա՜ խոդ խումար չե՞ն։

— Հը՜մմ... աչքե՞ր։ Աչքեր կապոտ, ընքյվեր կամար, կասես ստեղծվեր ի Լևոնի խամար։ Ձեռքյեր փմփուս, ճակատ սիվտակ կաթի կյոն, թշեր կարմիր, չանէն կլոր։ Ջուտես, չխմես, ինե իրիշկաս։

— Է՜... Դէ որ քյո՜ ասած դոդրի ի, ի՞նչխ անենքյ, որ շոտմ նշան տնենքյ։

— Նշանտրէս քյո ծեռն ի,—ըսավ Արմաղան,—ամմա դհա շատ պան կա անէլու։ Ալա՜ պիտի էթամ Խոտի Մկանց Զարուխու (Սրբիկի մայր) պէնի կյոլն առնելու՝ տիսնանքյ ախչիկ կուտա՞։

Մարանոս Խաթուն տաս զուրուշնոց մը գրավ Արմաղանի ափը և ըսավ.

— Դե՛, քյե տիսնամ, Լևոն քյո՜ տղէն ի, թէ որ էսա պան շիտկիցիր, քյե չեմ մոռնա։

— Տիւ հմէն պան ձիկ թող,—ըսավ Արմաղան։

Արագ մեկնեցավ և ուղղակի Խոտի-Մկանց տունը գնաց։

— Պարօվ, Զարուխ Խաթիւն, ի՞նչխ ես, աղե՞կ ես։

— Աղէկ եմ, շնորհակալ եմ։ Տիւ ի՞նչխես։

— Աղէկ կյէշ կարպետ ճրից կխանեմ։ Գյօ կապրենքյ։

Արմաղանը խոսակցության թելը դարձնելով, ըսավ.

— Զարուխ Խաթիւն, խերիքյ չի՞ Սրփիկ պախէքյ, մէկում տվէքյ, թող էրթա՜։

— Մանգյար ես չե՞մ ուզե, անկալատ ջահէլմ որ էլնի, մէկ սհաթ չեմ աչկե։ Մե խամար զօր պան ի փեսա կնդնել։

— Աստծու կամքով ես Սրփիկին ըսկուն կանաչ-կտրիճ իրիկմ կնդիր եմ, որ տիւ էլ զարմանաս։

— Էն վո՞վ ի, Արմաղան։

— Օհանէս Աղենց Լևոն։

— Արմաղան, ես քյո՜ շախկեն չեմ։ Օհանէս Աղենքյ դոր, մենքյ դոր։ Ինոնքյ

---

[16] Տիրամայր, կանանց հատուկ երդում, Տիրամայր Վանքի անունով։ Տիրամայր Սուրբ Աստվածածնի կամ Խաթուն Տիրամայր Վանք կգտնվի Վասպուրական նահանգի Թիմար գավառին մեջ։

մե կխավնե՞ն։ Ինոնց մոութ մզրաղմ պանցր ի։

— Զիկ Արմաղան կասեն, մառախ մանե, ես մեկ-էրկու օրից քյե պարի խաՀրամ կպիրեմ. ես ըսկուն պիտի անեմ, որ էրկու շաՀպաթ սորա ախչիկ-տես կյան։ Թէ որ խավնան, էլ տիւ անելիքյ չունես, ես հմեն պան կշիթկեմ։ Դէ մնաս պարի։ Տիւ էլ կնա ժամ, Սուրփ Սարկյսի պատկոքյի առաՀ էրկու ծունդր տիր, աղօթք արա, մնմ վանի, դիլաքյտ արա։ Ես էլ իմ խունար պանցուցեմ, իշալա հմեն պան աղէկ կէթա։

Երկու օր հետո, Արմաղանը Հովհաննես Աղայենց տունը գնաց։ Մարանոս Խաթուն ուրախ և անհամբեր, ըսավ.

— Ախչի Արմաղան, տիւ կսմաթով ես, ես տէլ սեղան չեմ վիրուցե։

Արմաղանը սեղանի նստավ և փոքր գավաթ մը գինի խմելե հետո, ըսավ.

Հմէն պան շիտկիցի։ Կյալ կիրակի հանսա տիւ կնա ախչիկտես։ Թե վոր կուզես Կուշոյի Մարան[17] էլ խետտ տար։ Էրկուստ կնացեքյ, ախչիկ տիսեքյ, թէ որ խավնաքյ՝ ակընչին կինդմ կամ մատին մատնիկմ նշան տրէքյ, էլէքյ իկէքյ։ Դհա սորա նոր օյին-նոր պարին, նշանտրէս կանեքյ։

Ավելորդ է ըսել, որ Մարանոս Խաթուն Լևոնի սիրույն ոչ մեկ ջանք կխնայեր նշանտուքը հաջողցնելու համար։ Լավ գիտեր, որ Լևոնը աղջկան սիրահարած է։ Ուրեմն շատ երկար-բարակ չմտածեց։

ԱԽՉԻԿՏԵՍ

Հարմար կեսօր մը, իր հետ առնելով Կուշոյի Մարանը, Խոտի-Մկանց տունը գընաց։ Տեսավ աղջիկը։ Կուշոյի Մարան իր կողմե ըրավ լրացուցիչ գովասանքներ Լևոնի մասին։ Տիկին Զարուհին ալ ըստ կարգի գովեց իր աղջկան լավ հատկությունները։ Մարանոս Խաթունը հայտնեց իր հավանությունը և որպես առժամյա նշան՝ իր ականջի մահմուտիե ոսկի գինդեր աղջկականջին կախեց, որպես նախանշան, աղջրկան երեսը համբուրեց և վերադարձավ։

Երեկոյան Հովհաննես աղան, հոգնած ու պարտասած, տուն եկավ։ Հազիվ ընթրիքը լրացուցած, Մարանոս Խաթունն ըսավ.

— Կիտե՞ս ինչ, մա՛րթ, Լևոն նշանիցի Խոտի Մկանց Արփիկի խէտ։

— Տիւ քյա կամք արիր։ ԼաՀուտ խամար կնիկ ճարիցիր։ Հմէն ախչիկ որ կնիկ էլնի, սարանդոստիկն էլ խաթիւն կէլնի։ Սպասենք, տիսնանքյ։

— Մարթ աստուծо, աղէկ-կյէշ, ըղաՀանքյ կանեմ, իմ խաթր մի կնտրե։ խումար չե՞ն։

— Հը՛մ... դէ մկա կնա փարա ճարի, տաս-քսան ոսկի իրար մօտ պե, որ խարսնիս անես։ Զիկ Օհանէս Աղա կասեն, ես ճոչ խարսնիս կուզեմ, ես իմ աղութեն չեմ կիրցուցե պստիկ խարսնիս։ Մորէ մէկ լաՀմ ունես, աշխար ալամ, պարեկամներ, տըրկըցներ հմէն խարսնիս պիտի կանչեմ և ըսկուն ճոչ խարսնիսմ անեմ, որ աշխար հմէն ծէն տա։

Հմէն կյախ խըղեղ չի կյա կոՀ պիրե։
Հմէն կյախ մէր չի կայնե լաՀ պիրե։

Հաջորդ կիրակի օրինավոր նշանտուքի օր նշանակված էր։ Հովհաննես Աղան վարձած էր Գևորգ Ախպոր երկձի կառքը և երեկոյան մութը կոխելուն պես, ծխատեր Տեր-Պետրոս քահանան, կնքահայր Գզիր Հարությունի Պողոս, Հովհաննես Աղան և իր կին Մարանոս Խաթուն կառքը նստան, որ սուրաց և Խոտի-Մկանց տան առաջ կանգ առավ[18]։

Խոտի-Մկանց դուռը բացվեցավ։ Նախ Տեր-Պետրոսը ներս մտավ, որուն հետևեցան մյուսները և նախապես պատրաստված սենյակի կակուղ բազմոցներու վրա նստան (աթոռներու սովորություն չկար այն ատեն)։

Խոտի-Մկանց Ավետիս, հարսնցու Սրբիկի հայրը, բարի գալուստ մաղթեց հյուրերուն և ապա սկսան խոսակցություններ սարեն-ձորեն։ Օրվա լուրերուն վրա ծան-

---

17 Կուշոյի Մարան, հասակ առած կին մը, ամուսինը մեռած։ Սա ալ միշնորդ Արմաղանի նման ամեն տուն կմտներ ու կելլեր, որոշ պատրվակներով։ Բամբասանքի մասնագետ էր և շատ մը ընտանիքներու գաղտնիքներուն ալ ծանոթ։

18 Հին ատեններ արգիլված էր (գյուղերու մեջ նույնպես փեսացուն նշանտուքի տանիլ։ Փեսայի մոր պարտականությունն էր քննել հարսի գեղեցկությունը, բնավորությունը, հասակը և ստուգել ուրիշ անհրաժեշտ կարևոր կետերը։

բացան, թե Քեռին (Ռուսիա) շուտով Վան պիտի գրավե։

Կես ժամ հետո հարսնցու Սրբիկը, հագած իր լավագույն զգեստները, ձեռքը ափսե մը, որուն վրա շարված էին օղիի լեցուն գավաթներն և անուշեղեններ, առաջացավ համբաքայլ և Տեր-Պետրոսեն սկսելով, հյուրերուն մոտեցավ մեկիկ-մեկիկ և մատույց օղի։ Այս ատենն էր, որ հյուրերը կողմնակի և աչքի ճոթով հարսնցուն տեսնելու և վերեն- վար զննելու պատեհությունը ունեցան։

Տեր-Պետրոս խոսք առնելով, ըսավ.

Հովհաննես աղա, կարծեմ ա՛լ ժամանակն է, որ սկսինք նշանտուքի արարողությունը։

Հովհաննես աղան հպարտ շեշտովմ ըսավ.

— Տէր հայր, նշան հաղր ի, ալա, տիսնանքյ Ավիգիս աղէն ուր ախչիկ կուտա՞ մեր Լևոնին։

— Տալու-չտալու խոսք չեմ անե։ Ախչիկ մարգկյրտի պէս ախչիկ ի։ Ծեռով-ոտով ախչիկ ի։ Ես իմ զավակներու պէրան լիմոն քյամիր եմ, կյրել-կարտալ սովրցուցիր եմ և էրկթէ ձեռքով մեծցուցիր եմ, կիտեմ որ պատվավոր են։ Մէնակ էսքան կասեմ, որ աստված շնախավոր անի և էրկուսն էլ մեկ պաղցի ծերանան։

— Եթէ այդպէս է, դէ Մարանոս Խաթիւն ընցի ու պարտքտ կատարի,—ըսավ Տեր-Պետրոս։

Մարանոս Խաթուն վեր ելավ, Սրբիկին մոտեցավ, որ սենյակի դռան մոտ անկյուն մը կանգնած էր, դիտեց Սրբիկի հասակը, քննեց երեսները, աչքերը ձեռքերը և հոտոտաց բերանը և աղջկան լսողությունը փորձելու համար ցած ձայնով քանի մը հարցումներ ըրավ։ Ապա դրպանեն հանելով յաղութ քարով ոսկյա մատանի մը և կուրծքի ժամացույց մը, Տեր-Հոր տրվավ, որ օրհնե։

Տեր-հայրը կարդաց պատշաճի աղոթքը, իաչակնքեց, օրհնեց մատանին, ժամացույցը և քանի մը օր առաջ Մարանոսի Սրբիկի ականջեն կախած մահմուտիե դրնգերը։ Մարանոս Խաթուն մատանին Սրբիկի մատին անցուց և ժամացույցն ալ անոր կուրծքին կախելե հետո, համբուրեց Սրբիկի ճակատը և բարեմաղթեց։

— Աստծոաց դիլաքյ կանեմ, որ ձեռտ չոր զանես՝ տալար դանա և սէրն ի տանեդ պակաս չէլլնի, Սրփիկ ջան։

— Սիմոն Ծերունի ըլլան և անթառամ պսակին արժանանան,—ըսավ Տեր Պետրոս։

— Ճերմակ մօրուք և սիվտակ մազ էլնեն երկուքն էլ,—ըսավ Գզիր Պողոս։

Գինիի և օղիի գավաթները նորեն սկսան շրշագայիլ։ Հյուրեր սկսան իրենց բաժակները ավելի հաճախ պարպել, շարունակելով բարեմաղթությունները։

— Մտնեն մառան, ձեռ զանեն վոսկու ամանն,—բարեմաղթեց հարսի մայրը։

Երեկոյան ուշ ատեն Հովհաննես աղան, իր կին և իր հյուրերը տուներնին վերադարձան քալելով։ Մարանոս Խաթուն շտապեց Լևոնի ննջասենյակը։ Լևոնը քուն կեղծելով կխոմփար։

— Լևոն ջան։ Նշան[19] տրինքյ։ Համէն պան լմնցավ։ Դէ արե ճակատտ պաքյեմ, վորտիս։ Աստված ուր աչք քյո՞ վիրվուց պակաս չանի, բալա ջան։ Պարով փսայվի, քյո՞ բարն ուտեմ, նոր մեռնեմ։

Հաջորդ առտու Հովհաննես Աղան ալ, նախաճաշեն առաջ Լևոնի ճակատը համբուրեց, շնորհավորեց ու ըսավ.

— Աստված շնախավոր անի, տղաս։ Յոթ որտիներով սեղան նստես Թոռներով շրջապատվես և խորտ տան ճրաքյ վառ պախես։ Մէրտ աղորթ կասի, դէ փսայվի, քյո՞ բարն ուտենքյ, նոր մեռնենքյ։

* * *

Հովհաննես Աղան, բարեպաշտ քրիստոնյա և ընդունված սովորությունները հարգող, նախ և առաջ Առաջնորդարան գնաց հարսնիքի արտոնագիրը ստանալու համար։ Առաջնորդարանի համեստ և երկարամյա

---

[19] Վասպուրականի գյուղերու մեջ սովորություն էր, որ նշանտուքեն երկու կամ երեք շաբաթ հետո հարսի հայրը փեսային այցելության երթար և կարգադրեր դլխավաճառքի խնդիրը, որ սովորաբար պարարտ ոչխար մը կլլար և կկուլեր դանակի կամ դանկի ոչխար։ Եթե հարսի հայրը ոչխարի մը հետ տուն վերադառնար, կնշանակեր, թե ամեն բան կարգին է և ամուսնությունը շուտով տեղի պիտի ունենա։ Իսկ եթե փեսայի հայրը ոչխար մը տալ դժկամեր և հարսի հայրը ձեռունայն վերադառնար, այն ատեն տրված նշաններ, մատանի, ականջող և այլն ետ կդրկվին և խնդիրը կատարյալ կլլար։

յարտուղարը՝ Մովսես Մալոյանը, գրեց ու Հովսեփ եպիսկոպոս Ծարաճյանին ստորագրել տվավ արտոնագիրը և տոմարներու մեջ պատկանյալ տեղերը արձանագրելե հետո, զայն Հովհաննես Աղային հանձնեց ու ըսավ.

— Աստված շնորհավոր անի։

Հովհաննես Աղան վճարեց 50 ղուրուշ Առաջնորդարանին և արտոնագիրը ծոցը դնելով, տուն վերադարձավ։

Վանի մեջ Պահք և Տոն օրերուն պսակը արդիլված էր։ Չորեքշաբթի և ուրբաթ պահքի օրեր էին, շաբաթ իրիկուն ալ կիրակնամուտ էր, որովհետև շաբաթ իրիկուն կիրակի օրվան մուտքը կհաշվվեր, որմե առաջ եկած էր կիրակն մուտ ասույթյունը, որ մեր մամիկները կանաչ-կտրիճ կիրակնամուտ կկոչեին և անոր անունով կերդվեին, կանիծեին, կաղոթեին։ Շատերն ալ շաբաթ գիշեր ճրագը վառ կպահեին մինչև առավոտ, որովհետև կհավատային և կպնդեին, թե արդիլված օրեր ամուսնացողները կհիվանդանային, կմեռնեին առանց իրենց մուրաղին հասնելու։ Ըստ քաղդեական հասկացողության, ամսվան յուրաքանչյուր օրն ունի իր բարիքը ու չարիքը, որոնց պատճառները կենդանակերպերն են, որոնք կիշխեն օրերու վրա և կընեն բարի ու չար ազդեցություններ։

Հովհաննես Աղան նկատի ունենալով ավանդական սովորությունները, հարսանիքի օրը նշանակեց Որթկաթողի կիրակի երեկո, որովհետև կիրակի երեկո կհաշվվեր երկուշաբթի օրվան մուտքը[20]։

Նա հարսանիքը փայլուն և շքեղ ընծայելու համար ոչ մեկ շանք խնայեց։ Գնեց երկու ոչխար, ապսպրեց Շահբաղիի համբավավոր գինի և Մեյխանաջի Աեդրակեն ալ մեծ խասիլին օղի։ Վարձեց հմուտ հացթուխ տիկին Անթառամ, որ մեկ օր ամբողջ լավաշ հացեր թխեց։ Մարանոս Խաթունի խաթր համար Կյորկանց Վուսկունն ալ քանի մը տեսակ բաղարջներ պատրաստեց, իսկ հարսանիքի տեսողությունն խոհարարի բոլոր գործերու հոգը ցնփոր Յղտան Բաղսարին հանձնվեցավ։

* * *

Հարսնևորներու ցանկ.—Հարսանիքի որոշյալ օրեն շաբաթ մը առաջ, Հովհաննես Աղան հրավերներ ու հրավիրագրեր ղրկեց իր հետևյալ բարեկամներուն ու դրացիներուն, որք էին։

Կյզիր-Արթնի Պուղոս.—Նա ընտրյալ կնքահայրն էր։ Ճմած քթով, խոժոռ դեմքով, հսկայամարմին անձ մը, նահապետական և բազմանդամ ընտանիքի գլխավորը և Արարքի գզիրը։ Իր խոսքը թաղականական և թաղային ուրիշ խնդիրներու մեջ կշիռ ուներ, իսկ իր անձը արարքցիներեն շատերուն հարգելի։

Օխաշ վարտապետ.—Հակառակ տեղական սովորության, այս վարդապետը վանքերու մեջ չէր բնակեր, այլ Այգեստան, եղբոր տունը։ Կսեին թե համարձակեր էր կնոջ մը այտերուն համը նայիլ, օխէ՜ր... օ՜խ... կամ օխա՜շ բացականչություն մը ընելով, որմե ստացեր էր օխաշ մականունը։

Կանա՞մ Որ.—վարդապետ մը լեսկ գյուղացի, վերջեն կաթոլիկության հարած։ Իրեն գործ մը կառաջարկվի, գործը կատարելուն անվստահ, կըսե՝ կանա՞մ որ, ուժ ունի՞մ ընելու, և կստանա «Կանա՞մ Որ» մականունը։ Իր ճիշտ անունը ու ազգանունը շատերուն անծանոթ էր։

Տէր Սողոմ.—Այս քահանան Մոկս գավառեն էր։ Քուրդերու նեղություններեն ազատ մնալու համար Վան ապաստաներ էր և կբնակեր Կլոր-Դար թաղամասը։ Հոժարակամ և առանց վարձատրության կմասնակցեր Արարք եկեղեցվո ժամերգություններուն։ Արտաքո կարգի երկարահասակ (7,5 ոտք) ըլլալուն համար ստացած էր Զոդ կամ Զոդի մականունը։

Տէր Աջալէն.—Կեմ գյուղի քահանան, Վան, Արարուց շրջանը ապաստաներ էր որոշ խնդրով։ Կքահանայագործեր Արարք եկեղեցին առժամյա կերպով։ Եկեղեցվո մաղթանքները և Ավետարանը շատ արագ կարդալուն կամ արտասանելուն և կամ. մաղթանքներու բառերը կուլ տալու համար ստացեր էր Տեր Աջալա մականունը։

---

[20] Այս համոզումին վրա էր, որ ոմն Ստեփան Մանդոյան, չորեքշաբթի և ուրբաթ երեկոներ կլուծեր պահքը, առարկելով, թե հաջորդ օրվան աստղեր արդեն ելած են, արժանանալով սպառնալիքներու և «պախսակեր» ու «տաճիկ» ծաղրական մականուններու։ Ինչու հեռուն երթալ, երբ նույն սովորությունը կար մեր մեծ ու փոքր զատկի օրերուն, երբ պահքը կլուծեին խթման երեկոներ։

Ճգնավոր Մինաս.—Ամուրի, հեզ, կարճահասակ, նիհար ծերունի մը։ Կհագներ երկար ու կտրված կամ բաժնված ծոպերով պճղնավոր զպուն մը։ Կաղոթեր գիշեր ու ցերեկ։ Հանրության մեջ կերևեր միայն Մեծ Պահոց օրերուն։ Այս խեղճ, թույլ ու դեղնած ճգնավորը ուներ եղանակավոր խոսակցություն։

Ծուռ Օրման.—Հայ դերվիշ մը, բայց էր նշանավոր յուղանկարիչ։ Իր նկարած պատկերները հարդի էին և ոմանք ալ եկեղեցիներու և վանքերու սեղաններու վրա տեղավորված։ Ուներ ալեխառն անխնամ մորուք, կհագներ ցնցոտիներ, քալած ժամանակ միշտ դետին կնայեր՝ ձեռքերը գրպաններուն մեջ։ Պարապ ժամերուն փողոցներեն սիկարեթի մարած ծայրեր կհավաքեր, իսկ աշնան երբեմն դաշտ կելլեր և իրենց արտի շոր խոտերն կամ փուշերը կայրեր, հողը բեղմնավորելու նպատակով, ստեղծելով մուխի երկար պալաններ։

Սալախ Խաչոն.—Երկարահասակ, բարեձև, լավ հագնված, ճերմակ մազերով անձ մըն էր։ Հավիտյանս-հավիտենից Արարք եկեղեցվո թաղականն էր կամ հոգաբարձուն, միշտ կնտրվեր։ Թե ո՞վ կնտրեր զայն՝ ինծի մի՛ հարցնեք, միայն սա լավ դիտեմ, որ միշտ կգանգատեր այսպես՝ եղբայր, ազգին ու եկեղեցիին ձրի ծառայել են հոգինիս կելլա։ Այո, և հոգաբարձու ընտրվելու համար ալ հոգի կուտար։

Աման Շինող Մանուկ.—Բրուտ, միակը իր արհեստին մեջ, ուներ քանի մը էշեր։ Դաշտերեն որոշ հողեր կկրեր այդ էշերով, կշիներ ու կծախեր զանազան տեսակ խեցեղեն կանանչ չնարակված ամաններ։ Ճատրակի մասնագետ էր և երբեմն երկու կամ երեք քար կհաներ[21] խաղի ատեն։

Վրուրջի Կարոն.—Մականվամբ՝ Պաշոլ։ Անգրագետ, անգործ, ամուրի, տգետ շատախոս մը, որ միշտ ապուշ ունկնդիրներ կփնտրեր, և շատ անգամ ալ անոր կուրծքը կուռեր և մեծամիտի հովեր կառներ, երբ դրացիներ զինք ծաղրելու մտոք կըսեին՝ Կարո՛, եկուր տեսնենք, ի՞նչ լուրեր կան։ Կարոյի մոտ լուրեր պակաս չէին։ Անոր լուրեր միայն ու միայն հեղափոխական լուրեր էին։ Նա միայն հեղափոխականներով կհետաքրքրվեր կամ հեղափոխական լուրեր կհնարեր։ Կարոյի խոսքով Ռուսիան շուտով Վան պիտի գրավեր։ Ըստ Կարոյի, ամեն շաբաթ Պարսկաստանեն զինված խումբեր գաղտնի ճամփա կելլեին և Խանասորի կամ Բարդուղիմեոս վանքի կամ Սարայի գծով Վան կհասնեին, զենքեր կփոխադրեին Վան, և զինավարժություն կնեին։ Գիտեր նոր եկող երևակայական խումբերու և կովկասահայ խմբապետներու անունները։ Անոր խոսքով մինչ մեկ-երկու խումբեր Վան կհասնեին, Վանեն ալ ուրիշ խումբեր Պարսկաստան կմեկնեին զենքեր բերելու։ Կարոն կպատմեր իրարու ետևե սահուն լեզվով և գոց ըրած ոտանավորի պես, որովհետև միևնույն երևակայական լուրերը այնքան կրկնած էր, որ գոց գիտեր՝ այսինչ խմբապետը իր խումբով Բարդուղիմեոս վանքեն ճամփա ելավ երեկ և շուտով Վան կհասնի։ Սարայի դաշտի վրա այսինչ խումբի զինվորներ մոսիններով զինված օր-ցերեկով դեպի Պարսկաստան գնացին։ Շաբաթ մը առաջ այսինչ խումբ 23 սնդուկ հրացանի և ատրճանակի մասեր ներմուծեց Վան։ Այսինչ խումբը մեկ շաբաթե ի վեր Վարագա վանքի լեռներու վրա զինավարժություն կընե, և այլն, և այլն։ Սուտեր և երևակայական դեպքեր ու վրոեր։ Կարոյի համար մլուկը ուղտ շինել մեծ բան մը չէր։

Կոկէ Խաչոն.—Երկարահասակ, տղեղ և աղքատ հագնված, բազմանդամ ընտանիքի հայր։ Տան մեջ կտավ կգործեր, և հաղիվ-հազ իր ընտանիքը կպահեր։ Երբեմն-երբեմն ստիպված էր կողմնակի գործեր ալ ընել։ Փոքր զմելիով ոչխար կմորթեր, կքերթեր և կմաքրեր երկու ղուրուշի համար։ Այդ երկու ղուրուշը վայրկենապես փուռը կտաներ, երկու օխա հաց կգներ և ուրախ-ուրախ տուն կերթար, ճանապարհին ուտելով գնած ցամաք հացին գրեթե կեսը[22]։

Դերձակյան Հակոբ.—Մականուն՝ Կլոր-կօտ։ Անգրագետ, և թաղի մուխթարը, հարկահավաքը։ Այս մարդու համար դուք գոյություն չուներ։ Կարմիր Սուլթանի փնտրած

[21] Քար հանել.—Երբ ճատրակ խաղցող մը հաղթողի համբավ կհանե և փոխանակ 16 քարերու, 14 կամ 13 քարեր կշարե իր կողմը, ի գիմաց հակառակորդի 16 քարերուն և կհաղթե, քար հանող կկոչվի։

[22] Վանի բարբառում կար Կոկէ Խաչո ասացվածքը։ Ամեն անոնք, որոնք փուռերեն հաց գնելե հետո, ճանապարհին հացը ուտելով տուն կերթային, Կոկէ Խաչո կկոչվեին։

մարդն էր։ Իր ամենօրյա գործն էր, առտուն կանուխ ոստիկանատուն երթալ, ոստիկանի մը ընկերանալ, հայերու խանութներու առջև տնկվիլ ու հարկ պահանջել կամ հավաքել։ Ով որ ոստիկանեն վախնար և վճարեր, կառներ դրամը և իր գրպանը կդներ, քոչան կոչված թուղթի մը անվավեր կտորը տալով վճարողին։ Իսկ այն հայ խանութպանը, որ դրամ չուներ կամ կդժկամեր վճարել, աչքով-հոնքով իր կողքին կանգնած ոստիկանին նշան կներ, ըսելով՝ իշերի էթ։ Եվ ոստիկանը շատ դժվարությամբ ժամանակ կուտար խեղճ խանութպանին իր խանութը գոցելու և առաջնորդեր ոստիկանատան նեղ ու մութ խուցը։ Հակառակ հայ մայրերու ծանր անեծքներուն, Կլորակոտը աշխույժ էր, առողջ և բոլորած 50 տարիներ։ Արժանացած Տաճկի-Ճրադ և Կլորակոտ մականուններուն՝ թրքասեր ըլլալուն և կլոր գլուխ ունենալուն համար։

Կապարուկ.—Իր բուն անունն ու ազգանունը ինծի և շատերուն անծանոթ, 55—60 տարեկան, լճացած աչքերով, կարմիր կոպերով, հաղթանդամ և բարձրահասակ մարդ մըն էր։ Կխաղցներ տիկնիկներ, ձեթի ճրագի լույսով՝ ճերմակ սավանի վրա ցոլացնելով ստվերները խամաճիկներուն, որոնց կմախքները շինած էր կաշիի ու փայտի կտորներե և շարժական առանցքի մը վրա ամրացուցած՝ պատրաստ որևէ կողմ դարձնելու։ Թեև անգրագետ, բայց սուր հիշողություն ուներ։ Կհղանար մտքեր, կստեղծեր խամաճիկներու երկսեռ տիպեր։ Տեսնելու բան էր, թե ինչպես վարագույրի մը ետև նստած, անտես հանդիսականներե, երեք ժամ կամ ավելի, ձեռքերով կխաղցներ անոնց ստվերները սավանի վրա և առանց նոթագրության կուտար հարց ու պատասխաններ անոնց սեռին ու տարիքին համեմատ, կեղծելով իր ձայնի ելևէջներն ալ, դուրս բերելով սիրային վեպ մը կամ ընտանեկան տգեղ պատկեր մը։

Իր խամաճիկներուն հերոսն էր Կարագյոզ[23] ըսվածը և իր բոլոր տրամախոսությունները կներ թուրքերենով, թրքական հանդեսներու և տոներու ատեն փնտրված անձն էր, գիշերները տաճիկներուն զվարճացնելու համար, մանավանդ Բայրամի օրերուն։ Նա Վանեն դուրս ելած չէր, մարիոնեթներու ձևերն ու տարազը, անոնց բերան գրված երկար տրամախոսությունները բոլորն ալ իր մտքի արտադրություններն էին, շարաշար ինքնաշխատությամբ զարգացուցած։

Գաւառեֆերյան Պողոս.—Մականուն՝ Մազաթ Մալի.—Համարձակախոս, զվարթ և կարճահասակ ծերունի մըն էր։ Կխոսեր Պոլսո «քիպար» թուրքերեն։ Կպտտեր հայոց թաղերը օգնականի մը ընկերակցած և կծախեր տնային առարկաներ, ցինկե ամաններ և այլն։ Երբեմն ալ բարձր ձայնով կկանչեր՝ «գեղեցիկ պիտույք»։ Դավոյի դեպքին, գործեն տուն դարձին, թուրքեր կբռնեն զայն և խուզափողը կես կտրած կձգեն, որ շարշարվելով մեռնի։ Կերպով մը ինքզինք իր տունը կձգե և կնոջ ու աղջկան բազուկներուն մեջ կմեռնի քանի մը ժամեն։

Լոռեցի Մնոն.—Արարք գյուղի գյուղապետ։ Միականի, միաթև, արագաշարժ և գործունյա։ Նահապետական բազմանդամ ընտանիքի մը գլխավորը։ Ուներ հրամայելու ազդեցիկ ձևեր և իր հրամանները շուտով և լռելյայն կկատարեին իր ընտանիքի անդամները։ Խոժոռ էր և ջղային։

Կյոռուոյի Մուխսին։—Կաղ, կարճահասակ, դարձ։ Կխոսեր երգեցիկ տոնով։ Կքալեր երկու ձեռնափայտով՝ իր կռները խաղցընելով կամ քարշ տալով։ Անգրագետ ծերունի մը։ Բեկաբույժի անուն հանած էր և երբեմն ալ վհուկություն կներ։

Լիմբցու Մովսես.—Բարի, հեզ, մեղմախոս, սիրահոժար և մատչելի անձնավորություն։ Թեև անգրագետ, բայց կենդանյաց և մարդոց շատ մը հիվանդությունները հմտությամբ կբուժեր և ածան վճարքի մը փոխարեն կպատրաստեր իր դեղերը բույսերե ու արմատներե։ Անոր դեղադիրները, որոնք երեսներ պիտի լեցնեին, կորսվեցան, դեղագիրներ, որոնք կրնային արդի գիտական բժիշկներն ալ զարմացնել։

Խամբոյի Լորքոն.—Համբավավոր իր ուժով։ Ճանապարհներու մասնագետ գիշեր ատեն։ Ծխախոտի անվախ մաքսանենգ։ Կառավարական օրենքներ ոտնակոխող հյանդուգն մը։ Միշտ և գաղտնի ատրճանակ և դանակ կկրեր իր հագուստներու ծալքերուն մեջ։ Բանտարկված քանի-քանի ան-

[23] Կարագյոզ խաղցնող—վերջեն իր երկրորդ մականունը դարձավ։

գամներ։ Քանիցս ալ Ռուսիա փախած։ Տեսա օր մը, թե ինչպես իրենց հիվանդ և ճանապարհին մնացած էշը շալկած տուն բերեց և թե ինչպես այս անսովոր տեսարանին ի տես, Արարուց Մեյդանի շները քայլ առ քայլ իրեն հետևեցան, հաչելով։ Անոր երգած «Գարահիսար լեռան կրծքին» երգը մեկ հատիկ էր։

Կոտկե Սեփան.—Մականուն Խուրանդրրխոկի.—Կըսեին, թե շատ հարուստ էր, բայց ցույց չէր տար։ Ուներ հսկա իրան մը։ Տարիքը 60 անցած, բայց աշխույժ։ Առանց իր իշուն ոչ մի քայլ չէր առներ։

Շիլ Մարկյո.—Շիլ ու կարմրած աչքերով մեկը, 50 տարիքը անց։ Խոժոռ ու անմատչելի։ Կհագներ պճղնավոր, ծոպերը նտրած փեշերով զպուն[24]։ Զափազանց ժլատ։

Քեքրավիզ Խեֆյիմ.—Կարճահասակ ու ծուռվիզ։ Կպտտեր գավազանը միշտ ձեռքին։ Կըսեին, թե բժիշկ է։

Կումարբազ Փանոն.—Միջոցներու մեջ խտրություն չդնող խեցեվաճառ մը։ Ուներ մասնագիտություն քյուրդերուն կոտրված, պատռած խեցիներ վաճառելու։ Միշտ բախտախաղով զբաղած։ Երբեմն ալ մունետիկի դեր կկատարեր։ Կորսված էշ մը կամ եզ մը գտնելու համար փողոցե-փողոց կանցներ բարձրաձայն կանչելով՝ էշ մը կորսված է, եզ մը կորսված է, գտնողին մեկ մեճիտ պարգև կա։

Խանկե Կյէվորֆ.—Յոթանասուն տարիներու բեռը շալակած, բարեկեցիկ ու պատվավոր ընտանիքի մը հայրն էր։ Իր ներկայությունն ու խոսքը թաղային խնդիրներու մեջ միշտ կհարգվեր։

Կուկազի Սանասար.—Հսկամարմին, օժտյալ մեծ ուժով։ Միշտ վերարկուն ուսին կնետեր, քան թե կհագներ։ Կհիշեմ իր հսկա ոտները։ Թե իր ոտներուն համաչափ կոշիկներ ուրկե կգտներ, չգիտեմ։ Տարիքը վաթսունին մոտեցած, միշտ ուրախ։

Մունկէ Նշան.—Երկաթագործ, երկարահասակ, բարձրամիտ մը։ Սա ալ ուներ բազուկի հսկա ույժ, և ակնհայտնի՝ Արարուց հրապարակի վրա։

Ուսթա Խաչիկ.—Պերպեր Խաչիկ ալ կկոչվեր, թեև շատ քիչ անգամ սափրիչություն կըներ։ Իր մասնագիտությունն էր ատամներ քաշել, արյուն առնել, և խորոզ հիվանդությենե բռնվողները բուժել։ Խանութ կամ պաշտոնատեղի չուներ, բայց իր վարպետության համբավը հաճախորդները իր տունը կբերեր։ Ոչ թմրեցուցիչ դեղ ուներ և ոչ ալ թմրեցուցիչ դեղերու մասին գաղափար։ Միշտ խոժոռ էր և լուրջ։ Մեջքին կկապեր քանի մը բաժանմունքներ ունեցող կաշիե գոտի մը։ Անոր մեջ կշարեր մեկ կամ երկու ածելի։ Ատամնաքաշ երկու տեսակ աքցաններ, կեռ երկաթ մը, սանտր մը, փոքր կոտոշ մը և վեց նշտարակներ պարունակող արույրե քառակուսի տուփ մը։

Ատամ քաշել ուզող հաճախորդը պարզուկ աթոռի մը վրա կնստեցներ։ Իր մեկ ոտքը նույն աթոռին վրա կդներ՝ հաճախորդին ետևը։ Վախցող և կիսալաց հաճախորդներուն հոգեբանություն կգործածեր, ըսելով. «Դու ինչո՞ւ կվախնաս, ե՛ս պիտի վախնամ, որ ատամը պիտի քաշեմ։ Դու ինչո՞ւ կուլաս, տխրելու դժվարությունը իմս է, ոչ թե քունդ»։ Զվարթ և կարճ պատմություն մը կպատմեր, հաճախորդին գլուխը՝ աթոռին վրա դրած իր ոտքի ծունկին վրա կհանգչեցներ և կխնդրեր հիվանդեն, որ բերանը բանա։ Քանի մը անդամ բերանի այս ու այն կողմը կնայեր, կեռ երկաթով փտտած ատամը կստուգեր և անդամ մը որ աքցանը հիվանդի բերանը մտներ ու բռներ ակռան, պարապ չէր վերադառնար, հոդ չէ թե հիվանդը որքան շարժեր կամ այլանդակ ձայնով պոռար։ Ապա քաշված ակռայի փոսին մեջ քիչ մը բամբակ կթխմեր, իր վարձքը կառներ ու ճամբու կդներ։ Եթե մեկը իրեն հարցներ՝ ուսթա Խաչիկ, կրնա՞մ քու ատամներդ տեսնել, պիտի նկատեր, որ Խաչիկի ատամներու երեսուներկու սենյակներ վաղուց ամայացած էին ու իրենց վարձքերը վճարելե դադրած։

Արյուն առնելու համար երկու միջոց ու-

[24] Առաջին անգամ Վանի մեջ նեղ տափատ հագած է հայրս՝ Կարապետ Տեր Մկրտչյան, արժանանալով սուլոցներու, ծաղրանքի և մականուններու, օրինակ՝ Զաթալ Տապղին (երկճյուղ ստեպղին) և այլն։ Զորս օր հետո հորս արհեստակից (ոսկերիչ) Խանիկյան Մկրտիչը կսկսի հագնիլ նեղ տափատ, նույնպես արժանանալով ծաղրանքներու։ Ապա տափատը կամաց-կամաց կընդհանրանա։ Դեռ մինչև մեր օրերը կային անհատներ, որոնք կհագնեին փեշով երկար զպուններ։ Այս անգամ ալ անոնք կարժանանային ծաղրանքի, որպես հին սովորույթի կառչողներ։ Նույնիսկ փեշով անունը մականուն դարձավ Տիգրան անուն մեկի մը։

ներ։ Առաջին՝ տղրուկ կփակցներ և կթողուր, որ անոնք ծծեն հիվանդի արյունը մինչև որ հագենան ու ինքնաբերաբար վար իյնան։ Երկրորդ միջոցն էր հիվանդի թեի երակին նշտրակ մը զարնել և որոշ քանակութեամբ արյուն հոսեցնել, հետո դադարեցնել հոսումը՝ վրան բամբակ դնելով ու կապելով։

Խորող հիվանդություն կբուժեր այսպես։ Հիվանդին ճակատեն քիչ հեռու գլուխը կածիլեր հավկիթաձև։ Կոտոշը ածիլված տեղին վրա կդներ, կոտոշի բարակ կողմը իր բերանը դնելով, կոտոշի միջի օդը կծծեր և այդպիսով հիվանդի գլխի վրա ուռուցք կդոյացներ։ Կնշտրակեր այդ ուռուցքը, կոտոշը նորեն վրան կդներ, բերնով նորեն օդը կոտոշեն կծծեր և գլխի այդ մասեն արյուն կհաներ։ Ապա կոտոշը վար կառներ, կոտոշի տակ հավաքված ու լերդացած արյունը կմաքրեր, վրան բամբակ կդներ և կպատվիրեր հիվանդին երեք օր պաղլեղով մածուն ուտել։ Ուսթա Խաչիկ խորող եղող հիվանդներուն դպչելե առաջ, անպայման գիտնալու էր, թե ե՞րբ հիվանդացեր են։ Եթե հիվանդը ուշ մնացեր է, 24 ժամ վրան անցեր է, այդ հիվանդին չէր դպչեր, առ ոչինչ համարելով ամեն թախանձանք։ Կհիշեմ, թե ինչպես մոր մը աղաչանքին պաղարյունությամբ պատասխանեց. «Մարէ, վէրէն ընցեր ի, ինչ էլ անեմ, ինչքան էլ արյուն առնեմ, փարա չանե, երեք օրեն պիտի մեռնի, չորս օր առաջ հոս բերելու էիր տղադ»։ Եվ իր գուշակությունը իրականացավ։ Այս հիվանդությունը, որուն գիտական անունը ինծի անծանոթ է, խուչափողի հիվանդություն էր և միայն 5—10 տարեկան մանչերու հատուկ։ Հիվանդը կդժվարանա խոսիլ ու շընչել։ Խոսած ժամանակ կարծես խուչափողը կքերվեր և խուպոտ ձայներ կհաներ։ Վանեցիք կըսեին՝ հիվանդը ահլորի պես կխոսի։ Հիվանդություն մը, որ 4—5 օրեն հիվանդը կխեղդեր, թեև հիվանդը անկողին մտնելու վիճակին չէր և կրնար ոտքի վրա կենալ, քալել, ուտել և խմել։

Ճոռթոյի Ական.—Լճացած աչքերով և ձեռնափայտով հազիվ քալող ծերունի մը։

Ֆոնչի Պտտուր.—Ուներ սեփական հացի փուռ։ Օրական քանի մը անդամ Բագոսի տաճարը կմտներ երկրպագելու, մանավանդ երեկոները։

Կարիբի Վարտան.—Վհուկ մը, որու մասին նախապես պատմեցինք։

Կասաբ Ավնոն.—Համբավավոր մսագործ։ Զվարթաբարո, համակրելի և դյուրամատույց։

Հրավիրված էին նաև Ցնփոռ Յարիջան. Ցնփոռ Մուխսին, Կակուղ Մուխսին, Վ.զվզի Մուխսին, Ճկուռ Ակոփ և ուրիշներ։

* * *

Մաբանոս Խաթունն ալ իր կարգին հրավերներ ղրկեց իր հետևյալ բարեկամ ու ղրացի տիկիններուն։

Եղսա Խաթուն Գզիրյան.—Կնքահայր Պողոսի կինը և միանգամայն Քավորկին Խաթուն։

Բաշոյի Մարիեն.—Վարժ ու համբավավոր, ինքնուսույց վիրաբույժ մը, եղակի իր ճյուղին մեջ։ Շատ ծանր ու անհույս վիրավորներ մահվեն աղատեց։ Պատվավոր ու բարեկեցիկ ընտանիքի մը մայր։ Իր տղան՝ Հայրիկ, իմ դասընկերս էր Վանի Հայկազյան Կեդրոնական վարժարանին մեջ, 1905-ին։

Կուշոյի Մարան.—Տարիքը առած հսկա կին մը, որու մասին վերը պատմեցի։

Թանգյոյի Պառավ.—Քթախոտի մասնագետ։ Իր պատրաստած քթախոտը կփնտրվեր երկսեռ հասակառուներե անխտիր։ Կըսեին, որ ծխախոտի անպետք ու չորցած կոթերը կաղար և ուրիշ համեմներով կխառներ ու քթախոտ կպատրաստեր։

Մարիամ Փաշեն.—Թիկնեղ, բարձրահասակ, համարձակախոս ու կտրիճ կին մը, որ Վանի Սովի տարին իր համարձակությամբ ու կազմած կանանց խումբերով համբավ հանած էր ու փաշա տիտղոսին արժանացած։

Կաշի Պառավ.—Կհագներ հաղար ու մեկ կտորներով կարկտնված հագուստ։ Կողքեն կախած կունենար ծարիրի տոպրակը՝ լեցուն աչքի փոշիով։ Միշտ կհալածեր ու կանիծեր փողոցի չարաճճի տղաներ։ Ինք տղաներուն հանգիստ չէր տար, տղաներն ալ իրեն։ Ամեն օր եկեղեցի կերթար և չոր տախտակի վրա ծունկի եկած կաղոթեր ու կարտասվեր։

Հրավիրված էին նաև Բաղդկանց Պայծառ, Խամբոյի Ասլիկ, Սապունշու Սաթենիկ, Բազտո Աղասոնց Օղիկ, Տակը թացող Ալ-

մասա, խանկե Մայրամ, Միշնորդ Արմաղան և ուրիշներ։

* * *

Հարսանիքի նախորդ օրը Հովհաննես Աղայի տան մեջ կարգավորվեցան թաբախի և ազաբբաշիի երկու հարցեր։

Թաբախ.—Կեսօրվա ատեն Մարանոս Խաթուն պատրաստել տվավ թարախը, որ հարսի տունը պիտի ղրկվեր։ Առավ գեղեցիկ և ծաղիկներով նկարազարդված մեծ փոլաթափսի մը։ Մեջտեղը գրավ փունջ մը ծաղիկ, երկու նուռ, կողքին շարեց փախլավայի ձևով և զանազան գույներով թուղթերու մեջ փաթթված շաքարներ։ Տոպրակ մը կարմիր հինայի փոշի և նամակ մը, որուն մեջ գրված էր՝ վաղը, այսինչ ժամին կուգանք հարսը առնելու։ Ապա վրան քաշեց մետաքսե ու գույնզգույն ներկված շղարշ մը և իր մշակ խեղ գյուղացի Սերգոյին տվավ թափսին, որ զգուշությամբ Խոտի-Մկանց տունը տանի։ Մարանոս Խաթուն չէր մոռցած նաև այս հանդիսավոր օրվան առթիվ զարդարել իր մշակն ալ։ Գնած էր նոր սև քյազախիկ մը, կարմիրկանանչ գույներով մեջքի շալ մը, նոր ճերմակ քոլոզ մը, մետաքսե սև փոշի մը և նոր ճերմակ Շատխու շալ, շալվար մը։ Մշակ Սերգոն զարդարված այս նոր հագուստով, կեսօրվա ժամը մեկին զգույշ քայլերով, երկու ձեռքերով բռնած փոլաթափսին՝ Խոտի-Մկանց տունը տարավ և վերադարձավ։

Ազբանստում և ազաբբաշի.—Վասպուրականի մեջ սովորություն էր, որ նորապսակներ չար աչքե զերծ պահելու համար, ամուրի երիտասարդները փեսայի տան մեջ ժողով մը գումարեին և ազաբբաշի մը ընտրեին։

Լևոնի պատվերով իր տունը հրավիրվեցան իր ընկեր, բարեկամ ու դրացի հետևյալ ամուրի երիտասարդները։

Քոլոշոն, Վանլի Խորեն, Բոբիկ Գող, Սարուխանի Պլուզ, Թախսե Թուր, Մուճկե Վահան, Թերծկի Մուկ, Լըմբցու Պիսդ, Միապետական Մանուկ (իր կամքը քալեցնող), Մժիկ, Լորեղի Խոսրով, Կյոմշու, Բարեքին, Ոզմա Կյորոն[25], Բախտավոր Թափթափէն (Կլոր հաց՝ մեջտեղը ծակ), Խռանի Խաչիկ, Ճոռոն, Աթոն, Պթոն, Շխու Միրան[2] և ուրիշներ։

Հարսանիքի նախորդ օրը, երեկոյան մինչ հարսի տան Հինադրեսի արարողությունն ու ձևականությունները կկատարվեին, վերոհիշյալ ամուրի երիտասարդներն ալ Լևոնի տունը բազմոցներու վրա նստած, ժողով կընեին ազաբբաշի մը ընտրելու համար։ Ժողովը կարճ տևեց և ազաբբաշի ընտրվեցավ Վանլի Խորեն։ Ազաբբաշիի ընտրության ձևը Վասպուրականի մեջ աճուրդն էր։ Աճուրդին գինն էր խմիչքը։ Ամենեն շատ գինի կամ օղի մատակարարողը կգներ պաշտոնը և կստանար կոպալը։ Ամուրիներու այս խումբը կկոչվեր Մխկներ։ Վանի Արճակ գավառի մեջ հայաբնակ փոքր գյուղի մը անունն էր Մխկներ, և միանգամայն Վանի փոխաբերական ոճերեն մեկը, ժողովրդական ասացվածք մը, որ կնշանակեր երկրորդական, մասնավորապես հարսանիքներու ատեն գործածվող։

Վանլի Խորեն, բարձրահասակ, լայնալանջ, կլոր երեսներով սիրուն երիտասարդ մըն էր, օժտված կատակաբանության և նմանախոսության ձիրքերով, միակ հարմար անձնավորությունը այդ պաշտոնին համար։ Իր անուշ ու համակրելի բնավորությամբ կսիրվեր Վանի գրեթե բոլոր իր հասակակիցներեն և կկոչվեր Սողրաթի ծաղիկ։ Ուրախ էր, գոհ և ծիծաղը միշտ երեսին։

---

[25] Ոզմա գյուղացի, Վան հաստատված։ Գլխիկ կդներ բարձր ու ճերմակ քոլոզ, որու կողքին կփաթթեր մետաքսե և ուլունքներե հյուսված սև փուշի մը։ Քոլոզին դիրքն ու փուշի կապելու ձևերը կհայտնեին հպարտություն։ Բնավ չէր խնդար. միշտ խոժոռ և հոռետես։ Ուներ լավ ձայն։ Կերգեր քրդերեն երգեր շատ գեղեցիկ եղանակներով և քրդերեն երգերու շեմարան մըն էր։

Վասպուրականի գյուղացիներեն շատեր քոլոզի ընտրության և փուշի կապելու տարբեր-տարբեր ձևեր ունեին, մանավանդ շատախցիներ։ Ոզմա Կյորոն ալ շատախցիներու նման փուշի ծայրը ձախ ականջի վրա կախ կուտար։

2 Շխու Միրան.—Խնդացնելու ձիրքերով օժտյալ երիտասարդ մը։ Ինք կհորիներ իր կատակալից խոսքերը։ Կհիշեմ օրինակ մը անոր խոսքերեն. «Այսօր Ավանց նավահանգիստ նավ մը ցամաքեց, որու բեռած ապրանքներն էին՝ 60 հակ մկան բուրդ, 24 պուտուկ ճերմակ մածուն և 24 սնտուկ ալ այծերու կոտոշ, գարնան արտեր ցանելու համար, որ այծեր ուտեն» և այլն։

Կշիներ ու կնորոգեր ամեն տեսակ հովանոցներ, ըլլալով միակը այդ արհեստին մեջ, Վանի հրապարակին վրա։

Հարսանիքի օրը Վանի Խորեն գլխին դրած էր արաբական ակալը, մեջքին կապած էր խոշոր գեղեցիկ պարսկական շալ մը, որուն արանքներուն ու ծալքերուն մեջ դասավորած էր բաղարջ և օղիի երկու լեցուն փոքր շիշեր։ Հագած էր Շատախի շալե հյուսված պենավշե սիրուն ու լայն շալվարը։ Ձեռքին ուներ պաշտոնական կոպալը[26], որուն վրա կպցված էին 20-ե ավելի փոքր ու բարակ մեդրամոմեր և անոնց արանքները դարձդարձիկ փաթթված կարմիր, կանանչ ժապավեններ, զանազան տեղեր ալ փակցված կանանչ-կարմիր թուղթեր։ Մոմերը պիտի սկսեին վառվիլ պսակի արարողության ատեն, եկեղեցվո մեջ։ Հին ավելորդապաշտություններե մեղի հասած հավատքն էր, որ աղաբաշիի կոպալի կանաչ-կարմիր գույներու և վառված մոմերու զորությամբ չարերը կհեռանային։ Աղաբաշիի պարտականությունն էր ամուսնացյալ զույգի տոջևեն կամ կողքեն քալել և եկեղեցիեն տուն առաջնորդել ապահով։

Հարսանիքի օրն է։ Օդը գեղեցիկ ու պայծառ։ Ամուրի երիտասարդներ Խորենի շուրջ հավաքվեցան, հրավիրյալ երկսեռ հարսնեվորներ սկսան մեկիկ-մեկիկ հասնիլ։ Այրեր տարբեր, իսկ կիներ տարբեր սենյակներ առաջնորդվեցան և նախապես պատրաստված բազմոցներու վրա նստան ծալապատիկ և սկսան խոսիլ սարեն-ձորեն՝ զանազան հարցերու վրա։ Ոմանք սկսան շեշտել օդին գեղեցիկ ու պայծառ ըլլալը։ Ոմանք ալ կսեին՝ օդը պայծառ է, որովհետև հարսը թնթնոց չէ լզած։ Երբ հարսանիքին օրը պայծառ ըլլար, կհավատային, թե հարսը թնթնոց չէ լզած, իսկ, ընդհակառակն, եթե հարսանիքին օր անձրևոտ ըլլար կամ ձյուն տեղար, կհավատային, որ հարսը փոքր հասակին ճաշի ատեն թնթոց լզած է կամ թնթոցով հարիսա կերած է, կամ մատները լզած է։

Փեսայի ածիլումն և ածիլվելու երգը.— Լևոն թեև աղվամազ, բայց ըստ տեղական սովորության ածիլվելու պարտավոր էր։ Երբ այրերու սենյակը հրավիրյալներով լեցվեցավ, սենյակին մեջտեղ դրվեցավ թիկնաթոռ մը, որու վրա բազմեցավ Լևոն։ Ուսթա Խաչիկ (որու մասին վերը պատմեցի) եկավ կանգնեցավ Լևոնի մոտ, ածելի սրցնող ու կաշին մեջքեն կախած, իսկ ձեռքին բռնած ածելի մը, պոչավոր հայելի մը և պղնձի պնակ մը, տաք օճառաջուրով լեցված, որոնք փեսայի մոտ գտնվող փոքր սեղանին վրա դրավ և սպասեց։ Սովորություն էր, որ հարսնեվորներեն մեկը հայելիի վրա արծաթ դրամ[27] դներ, և այդ մեկը կլլար առհասարակ փեսայի հայրը կամ Քավոր աղան։ Հովհաննես աղան առաջ անցավ և հայելիին վրա սահեցուց հինգ ղուրուշնոց մը։ Պերպեր Խաչիկ ի տես արծաթ դրամին, սկսավ գործել և Լևոնի երեսը լվալ օճառաջուրով, ու նորեն կանգ առավ, սպասելով որ ուրիշ հարսնևորներ մըն ալ դրամ դնե հայելիի վրա։ Լորեզի Մնոն եղավ երկրորդ անձը, որ հայելիի վրա դրավ ուրիշ արծաթ դրամ մը, սափրիչը նորեն սկսավ գործել և քիչ մը ածիլելե հետո, նորեն կանգնեցավ։ Սափրիչը կանգ առավ և սկսեց գործել ըստ հայելիի վրա դրված դրամներուն, որքան շատ դրամ նետվեր հայելիին վրա, ածիլումը այնքան շուտ կվերջանար, իսկ եթե դրամներու երևումը հայելիի վրա դանդաղեր, ածիլումն ալ կդանդաղեր։ Մինչ փեսայի ածիլումը այսպես առաջ կերթար, Մխկներ խումբը սենյակի մեկ անկյունը առանձնացած, սկսավ երգել փեսայի ածելումի հետևյալ երգը.

Աղբըներ[28], աղբըներ, կտրիճ-մարալ աղբըներ,

---

26 Կոպալ.—Վասպուրականի գյուղացիները ուց կկոչեին։ Գյուղերու մեջ մինչև մեր օրերը կար հետևյալ սովորությունը։ Գյուղի երիտասարդները քանի մը փայտի կտորներե խաչ մը կշինեին և փեսայի գլխին կդնեին, որպես թագ, որը դարձյալ շար աչքե ազատ պահելու նշան էր։ Վանի մեջ այս թագի փոխարեն քահանան պսակի արարողությենեն հետո փեսայի կուրծքեն խաչ մը կկախեր, որ դներ հալածելու զորությունը ուներ և պսակեն հետո եկեղեցիի մեջ շնորհավորելու պահուն հարսնևորները նախ այս խաչը կհամբուրեին, ապա փեսայի ճակատն ու երեսները և կթոթվեին ձեռքը, ընելով բարեմաղթություններ։

27 Այդ դրամները սափրիչի ածիլելու վարձատրությունն էին։

28 Վասպուրականի գյուղերուն մեջ ավելի շքեղ կերպով կկատարեին փեսայի ածիլվելու արարողությունը։ Աղջիկներն ու երիտասարդները կշրջապատեին փեսան, ծաղիկներ կցանեին անոր շուրջ և դափ ու թմբուկ զարնելով, կպարեին ու կերգեին այս երգը, մինչ փեսան կածիլվեր, կհագվեր ու կղարդարվեր։

Հա տիւսկեքյ, ազաբ լաՀեր, ախչկներ,
Կանաչ-կարմիր, ալ-դարաՀի կումաշով.
Պար բռնեցեք թագավորի կշտերով։
Թաքավոր, ի՞նչ պիրենքյ քյե նման
Քյո կանաչ արևն ի քյե նման.
Մեր վարթէնիս որ կպացվէր
Պացվէր քյո արևու նման,
Սարի սուսուն որ կպացվէր
Պացվէր քյո արիվու նման։
Թաքավոր, ի՞նչ պիրենքյ քյե նման
Քյո կանաչ արիվու նման.
Սիպրանց արուն (ծաղկի անուն) որ կը պացվէր
Պացվէր քյո արիվու նման
Վարթ մանուշակ որ կպացվէր·
Պացվէր ալ արիվուտ նման։

Հանդերձորհնեքը.—Տեր Պետրոս Հայրը, որ քանի մը օր առաջ հարսի տունը հանդիպած ու օրհնած էր Սրբիկի հանդերձները, մինչ Լևոն կածիլվեր, ուրիշ սենյակ մը անցավ և օրհնեց Լևոնի նոր հագուստներն ալ, նորին չար աչքե զերծ պահելու համար։ «Մի իշխեսցէ մերձենալ ի սոցա չար աչաց, դիվաց կամ կախարդաց, այլ ամրացյալ զօրութեամբ սուրբ խաչին քո փրկեսցին համենայն որոգայթից սատանայի»։ Քահանայի այս աղոթքով չարեր կհեռանային։

Փեսայի թուր կամ բրամոմ.—Ըստ հնավանդ սովորության, փեսայի կողքեն թուր մը կկախեին կամ փեսայի առջևեն բռնած կտանեին՝ երկու նշանակությամբ։ Առաջին՝ որ փեսան ընտանիքի տերը կլլար և իշխանությունը ձեռք կառներ։ Երկրորդ՝ թուրը որպես պողպատ հակազդիչ էր չար աչքերու։ Որովհետև հայեր թուր կրելու կամ պահելու արտոնությունը չունեին և փեսայի կողքին թուր կախելու պետքը կար, ըստ հինեն մնացած սովորության, ամուսնութենեն օրեր առաջ փեսայի դրացի թուրքե մը թուր մը փոխ կառնեին, քահանային օրհնել կուտային և փեսայի կողքին կկախեին, ամուսնութենեն հետո նորեն թուրքին վերադարձնելու խոստումով։

ԺԸ դարու վերջերը Վանի ազդեցիկ աղաներեն Գարասեֆերյան Ախիջան աղան այս սովորությունը կարգիլե և կորոշե, որ թուրի փոխարեն՝ թուրի երկարությամբ հատուկ մեղրամոմ մը գործածվի և այդ մեղրամոմը վերջեն եկեղեցվույն նվիրվի։ Ահա այս սովորության համաձայն, Հովհաննես աղան մասնավոր շինել տված էր երկար մեղրամոմ մը, որ կկոչվեր թրամոմ և փոքրիկ մը ձեռքին բռնած միշտ փեսայի կողքին կկենար։

Խարսխուր կամ հարսնաս.—Լևոն հազիվ ածիլված իր սենյակը գնաց և հագավ Տեր-հոր օրհնած հագուստները։ Իրեն կօգնեին Մժիկ և Միապետական Մանուկ։ Վանի Խորեն, ըստ հնավանդ սովորության, իր փայտին կամ կոպալին ծայրը հարսնևորներեն շատերուն համբուրել տալով զբաղած էր։

Քավոր աղայի հրամանով հրավիրյալները մեկիկ-մեկիկ փողոցը լեցվեցան, հարսին տունը երթալու համար։ Փողոցը 10—12 կառքեր պատրաստ կսպասեին, որոնցմե Արաբաջի Գէվոյի մասնավոր փայթոնը եկավ և դռան ճիշտ մոտ կանգնեցավ։ Այդ փայթոն նստեցան Տեր-Պետրոս, Հովհաննես աղան, Քավոր աղան և Լևոն։ Օխաշ վարդապետ, Տեր Զողին, Կանամ Որ և Տեր Աջալեն երկրորդ կառքը նստեցան։ Մնացյալներն ալ ուրիշ կառքեր։ Խամբոյի Լոոթոն, Վրոբջի Կարոն, Ցնփոր Յարիջան հեծան իրենց վարձած ձիերը։ Կյոռոտոյի Մուխսին հեծավ իր կովու ջորին, Կոտկե Սեփան և Աման Շինող Մանուկ հեծան իրենց համբավավոր էշերը։ Նախ փեսայի կառքը սկրսավ շարժիլ, ապա վարդապետներու կառքը և անոնց հետևեցան ուրիշ կառքեր, որոնցմե երեքը կտանեին քավորկին և ուրիշ կիներ, և ձիավորներն ու իշավորներն ալ անոնց հետևեցան։

Հոս կուզեմ հիշել, որ Խամբոյի Լոոթոն ցուցամոլությունը ծայր աստիճանի կհասցներ իր նժույգը քառասմբակ վազցնելով, երբեմն կառքերեն առաջ անցնելով, երբեմն ալ կառքերուն հետևելով։ Կյոռոտոյի Մուխսու փոքրիկ ջորին շատ անդամ ցույց տվավ իր համառությունը, խրտչելով ամեն մի սև կետի ի տես, ետ-ետ երթալով կամ կողմնակի քալելով, Կոակե Սեփանի էշը աչքի կիյնար իր ռահվան-քայլվածքով, իսկ Բրուտ Մանուկի էշը իր զոռցով։ Պետք է հիշեմ, որ Բրուտ Մանուկի էշը մինչև հարսի տուն հասնելը շատ անդամ եղանակեց և հարսնևորներու խումբեն միշտ ետ մնաց, որովհետև եղանակը չվերջացուցած քալել չէր սկսիր։

Կառքեր Խոտի-Մկանց տուն հասնելուն պես, ամեն ոք վար իջավ։ Այրերը առաջ-

նորդվեցան տարբեր սենյակ, իսկ կանայք՝ տարբեր և բոլորվեցան ամեն տեսակ ուտելիքներով լեցուն սեղաններու շուրջ։

Այստեղ պարտ կհամարեմ հիշել հարսի տան հրավիրյալներեն ոմանց։

Քոռ Թագավոր[29].—Մեկ աչքը կույր, մեծ գլուխ, ահարկու և ամուրի անձ մըն էր։ Մեջքին կկրեր դանակ մը, որուն ծայրեն արյուն կաթած էր շատ անդամներ, կսեին։ Ուներ երկու ձեռք անկողին՝ մեկը քրոջ տունը կպահեր, իսկ մյուսը բանտին մեջ, որովհետև բանտեն արձակվելեն հետո նորեն բանտ վերադառնալը օրերու խնդիր էր։

Բուլաշըղ Պտտուր.—Ամեն դույն առնող մեկը։ Ուներ ձիեր։ Միշտ ծայրաբերես։

Պեռչի Պաատուր.—Խանութներու գիշերային պահապան։

Ավղլկե Միրան.—Անհնազանդ, անգրագետ, անվախ և միջոցներու մեջ խտրություն չդնող երիտասարդ մը։

Հրավիրված էին նաև՝ Նախրշի Թանգյուլ, Նախրշի Սախոն, Քյարկտի Մուրոն, Ջրովջրովի Կուկագ, Թալբիսդ Խաչոն, Ջոլեոյի Արթեն, Մրոտի Պապժոն, Նադանի Թումպոն, Պալբաջին, Աղաջան Պուպուն, Էլեսանի Կապոտ, Փինաչի Պատուր, Մսե Բլուր, Արտար Կարոն և ուրիշներ։

Այստեղ միջանկյալ կուզեմ հիշել երեք հին սովորություններ կամ միշադեպեր, որոնք տեղի կունենային գյուղական հարսանիքներու ատեն։ Մեկն է մենամարտը, մյուսը՝ Աղվեսը, իսկ երրորդը՝ Խուր պռնել։

Մենամարտ.—Գյուղերու մեջ սովորություն էր առհասարակ աղջիկը տարբեր գյուղե ընտրել։ Երբ հարսի տան հարսնևորները հեռուեն կտեսնեին փեսայի հարսնևորներու դալը, բոլոր այրերը անմիջապես տունեն դուրս կելլեին, մանավանդ երիտասարդները, և բաց դաշտի վրա կարգավ կկանգնեին։ Իսկ իրենցմե քանի մը քայլ առաջ կկանգներ մասնավորապես ընտրված զորավոր կամ ուժեղ երիտասարդ մը։ Կհասնեին փեսայի հրավիրյալ հարսնևորները և քսան քայլ հեռու կարգավ կկանգնեին, առաջ մղելով իրենց ընտրած ուժեղ երիտասարդը։ Այս երկու ընտրյալ ուժեղները նախ իրարու ձեռք կթոթվեին և հետո կսկսեին մենամարտիլ։ Առհասարակ փեսայի կողմի ընտրյալ ուժեղը կհաղթեր։ Մենամարտեն հետո նորեն ձեռքի թոթվում, և թե հարսի և փեսայի հարսնևորներ իրար խառնվելով, ուրախ, զվարթ. կատակելով ու խնդալով հարսի տուն կմտնեին և ճոխ ուտելիքներով պատրաստ սեղաններու շուրջ կշարվեին։ Այս ալ հեթանոսական սովորություն մըն էր մեզի հասած, բայց մեր օրերուն գրեթե անհետանալու վրա էր։ Հայրս ինծի պատմած է, որ Գործոթ գյուղին մեջ հսկա, հաղթանդամ հայ մը կա եղեր Մելիք Մելու անունով, որ բազուկի ահռելի ուժ ունեցած է և իր ուժին համար շատ մը ամուսնացողներ մասնավորապես կհրավիրեին զայն, որ իրենց համար մենամարտեր և իրենց հարսնիքը պատվավոր և հաղթական ըլլար։

Աղվես.—Երբ հարսնառի գացողներ հարսի տունը կմտնեին և ամեն բան կսկսեր կանոնավոր ընթանալ և հարսն ալ կսկսեր իր նոր հագուստները հագնիլ և պատրաստվիլ հարսնառի խումբին ընկերացող և փեսայի մտերիմ երիտասարդ մը կամաց մը և անշշմար սեղանեն կհեռանար և կաներևութանար։ Ամենայն զգուշությամբ հարսի տունեն դուրս կելլեր աննկատ։ Ձեռքի փայտին ծայրը թաշկինակ մը կկապեր, փայտը ուսին կդներ և փոխանակ ուղիղ ճամբայի, մինչև գյուղեն հեռանալը, դաշտերե ու ձորերե անցնելով, առ ոչինչ համարելով ձյուն, անձրև կամ մութ գիշեր, արագաքայլ կամ վազելով իր գյուղը կվերադառնար մեն-մինակ և ուղղակի փեսայի տունը կերթար և կուտար բարի լուրը՝ թե մենամարտը վերջացավ, թե ամեն բան կարգին է և թե հարսը քանի մը ժամեն կհասնի։ Փեսան կամ իր հայրը այս լրաբերին պարգև մը կուտար։ Այս պատգամաբերը գյուղերու մեջ Աղվես կկոչվեր, և այս սովորությունը մինչև մեր օրերը գոյություն ուներ։

Խուր պռնել կամ ճյուր բռնել.—Եթե պատահեր, որ աղջկա գյուղը բավական հեռու ըլլար և հարսնառի գացողներ միևնույն օրը չկրնային հարսը առնել վերադառնալ, հարսի գյուղացիներ ի հարգանս հարսի հոր, յուրաքանչյուրը մեկ երկու հոգի կզատեին հարսնառի գացողներեն, իրենց տունը կտանեին, կկերակրեին, կհարգեին ու կպատվեին, գիշերը կպահեին և մյուս օր հարսի տուն կբերեին։ Այս սովորությունը կկոչվեր Խուր

[29] Գրքիս մեջ հիշված փեսայի և հարսի տուն հրավիրյալներեն թե արանց և թե կանանց անունները իրական մականուններ են։

պռնել և մինչև մեր օրերը գոյություն ուներ։

Կանանց բաժնի մեջ Սրբիկ նստած էր համեստ ու լուռ։ Հագած էր իր նոր հագուստները[30]։ Ձեռները ներկած կարմիր հինայով հոտավետ. թաշկինակը ափին մեջ, մազերը սանրած, երկարապոչ հյուսած և կռնակն ի վար կախված։ Քավորկին Եղսա Խաթուն քողը[31] ձեռքին հարսին մոտեցավ։ Յոթն անգամ քողը հարսին շուրջը պտտցուց, հետո գլխին վրա ձգեց, ծածկելով անոր երեսը, քողին եզերքները վար կախելով ետ ու առաջ։ Ապա յոթը գնդասեղներ կամ ասեղներ տեղավորեց քողին վրա, որ չսահի, և որ գլխավորն է՝ շար աչքերե հեռու պահե հարսը[32]։

Եղսա Խաթուն հազիվ քողի արարողությունը վերջացուցած էր, երբ հարսին մոր աչքերեն սկսան արտասուքի կաթիլներ վար գլորիլ։ Փոքրիկներեն ոմանք բարեմաղթող կարճ ոտանավորներ արտասանեցին։ Եղսա Խաթուն բացավ իր հետը բերած փոքրիկ և կլոր շաքարներու տոպրակը և սկսավ ճանկերով շաքարիկներ թափել հարսի գլխին վրա, ի նշան խաղաղության և ուրախության։ Շաքարիկները վար գլորվելով, սենյակի գորգին վրա թափվեցան, փոքրիկներուն կռվըտուքի առիթ ստեղծելով, որովհետև ամեն մեկը կջանար որքան կարելի է շատ շաքարիկներ հավաքել։

Քանի մը րոպեեն հետո, Տեր-Պետրոս կանանց սենյակը եկավ, հետը բերելով Լևոնը։ Անոնց հետևեցան այրերեն շատեր և սեղմվեցան կանանց սենյակին մեջ որքան որ տեղ կրնային գտնել։ Տեր Պետրոս հարս ու փեսան իրար մոտ կանգնեցուց։ Հարսի ձախ[33] ձեռքը Լևոնի աջ ձեռքին տալով, ըրավ կիսապսակ կամ պսակի կարճ արարողություն մը։ Կարդաց Ավետարանեն կարճ գլուխ մը, ապա «Հայր մեր» ըսավ և օրհնեց, շնորհավորեց զանոնք, հետո փողոցը սպասող կառքին դիմեց։ Վանլի Խորեն, որ փայտը ձեռքին պահապան հրեշտակի պես փեսայի կողքին կանգնած էր, պոռաց.

— Աստվա՜ծ շնախավոր անի՜։

Եվ փայտը այս ու այն կողմ փարատելով, ճամբա բացավ և փեսան դեպի կառքը առաջնորդեց։ Անոր անմիջապես հետևեցավ հարսը համրաքայլ, որու երկու կողմերեն կքալեին կնքահայր և ուրիշ մը հարսի քողին առջևի եզրեր բարձր բռնած. պատեհություն տալով հարսին իր ճամբան տեսնելու։ Հարսը հազիվ փողոց ելած, դրացիներեն մեկը հին կոշիկ մը կամ լակաշ մը նետեց հարսի ետևեն, որ նշան էր լավ բաղձանքներու։

Եվ բազմությունը սկսավ շարժիլ։ Որը կվազեր, որը կուլար, որը վերջին բաժակը կկոնծեր, որը իր կառքը կփնտրեր, որը կերգեր, որը կպոռար։ Եվ ամեն ոք եկեղեցի երթալու կպատրաստվեր։

Վերջապես կառքեր սկսան շարժիլ, որոնց հետևեցան ձիավոր և իշավոր հարսնևորներն ու ուրիշ հետաքրքիր ոչ հրավիրյալները։

Հասան եկեղեցի։ Վանլի Խորեն կամ Ազարբաշին, որ քիչ մը հարբած էր, ինչպես որ սովորաբար կըլլային բոլոր աղաբաշիները, գործի վրա էր և իր խեղկատակություններով, իր ծաղրածու խոսքերով, իր շարժուձևերով, ձեռքին կոպալը այս ու այն կողմ փարատելով, կբանար կամ, ավելի ճիշտ, ըստ հեթանոսական սովորության, կաշխատեր ժողովրդի և կամ ներկաներու ուշադրությունը իր վրա կեդրոնացնել և փեսան ու հարսը շար աչքերե ազատ պահել։

Եկեղեցիին մեջ փեսան առանձնացավ Տեր-Պետրոսի մոտ և աջակողմյան դասին մեջ, ըրավ կարճ խոստովանանք մը։ Այսինքն՝ Տեր-Պետրոս «Մեղա՛ աստուծո» քարոզեն առաջին և վերջին համարը ըսավ աճապարանոք, ի փոխան փեսային և վերջացուց խոստովանանքը, ուրիշ խոսքով՝ ինք իրեն խոստովանցուց։ Ապա հարս ու փեսան սեղանեն քիչ հեռու ատյանի մեջ իրար քով կանգնեցուց, հարսը ձախ և փեսան աջ կողմ և սկսավ «Հայր մերով», հետո՝ «Առյալ զձեռն Եվայի և տվյալ ի հաջն Ադամա» քարոզը։

— Որթյակ իմ Լևոն, մինչև ի մահ տէ՞ր էս,—հարցուց Տեր-Պետրոս։

---

[30] Ունևոր հարսեր կկապեին արծաթե քամար, ոսկիե ճտնոց կամ մարգարիտե մանյակ։

[31] Հարսին քողին գույնը կարմիր ըլլալու էր, ըստ հնավանդ սովորության, գոնե կարմիր շերտեր ունենալու էր, եթե քողը ուրիշ գույն ըլլար։

[32] Ըստ ավելորդապաշտության, յոթ կապերով կկապե շար աչքերը։ Կհավատային, թե պողպատե ասեղներ, դևեր կամ չարերը հալածելու զորություն ունեին։

[33] Սովորություն էր, որ կիսապսակի կամ պսակի ատեն, հարսը նախապես իր ձախ ափին մեջ ունենար շաքարի կտոր մը, աննշմար փեսայի ափը սահեցնելու համար, քողի տակ, ձեռքերը փեսային տված ժամանակ։

Լեռն գլուխը խոնարհեցուց կամաց մը։

— Որդյակ իմ հարսիկ, մինչև ի մահ հնազա՞նդ ես,—հարցուց Տեր-Պետրոսը հարսին։

Երբոր հարսը հազիվ քիչ մը գլուխը ծռեց, Վանլի Խորեն, որ նոր ետևը կանգնած էր, իր ձեռքով հարսին գլուխը քիչ մըն ալ ինք դեպի առաջ թեքեց, օգնելով անոր հավանության, ապա բարձր ձայնով բոռաց.

— Ամա՞ն տէրտէր, քյե մեռնեմ, կայիմ-կայիմ փսակի, որ մեկ պա՞ռցի ծիրանան, մինչև ի մահ իրարու խետ մնան։

— Լռի՛ր, պարոն, անգամ մըն ալ ձայն հանես, պսակը կիսկատար պիտի մնա,— ըսավ Տեր-Պետրոս, խոժոռ նայվածքը Վանլի Խորենին ուղղելով։

— Մեղա աստուծո, տէրտէր, օրշնյա ի տէր, ծառա եմ կարքիտ։

Պսակի արարողությունը վերջացավ։ Տեր-Պետրոս քահանան հարս ու փեսայի երեսը դեպի ժողովուրդը դարձուց։ Փեսային կուրծքեն կախեց փոքրիկ խաչ մը և առաջին անգամ ինքը համբուրելով խաչը, շնորհավորեց նորապսակները։

Անոր հետևեցան կնքահայրը, ապա Հովհաննես աղան, ապա մյուս հարսնևորներ, որոնք կարգավ և մեկիկ-մեկիկ մոտեցան։ Նախ փեսայի կուրծքին վրայի խաչը համբուրեցին, ապա փեսային ճակատը, ոմանք ալ ճակատն ու երեսները և ձեռքերը թոթվելով, շնորհավորեցին, ընելով իրենց մաղթանքները։

Հետաքրքրական էր տեսնել Վանլի Խորենի և մխկներու համբույրները։ Այս երիտասարդներեն ոմանք փեսային մոտենալով, նախ երկար շունչ մը առին, ապա մեկիկ-մեկիկ իրենց ձախ ձեռքը փեսայի ծոծրակի վրա դնելով, անոր ճակատն ու երեսները համբուրեցին ու համբուրեցին և փեսայի երեսը լվացին իրենց համբույրներով։

Համբույրներե և շնորհավորանքներե հետո, քանի մը տիրացուներ ու մխկներ «նորահրաշ» շարականը երգելով, նորապսակները դեպի եկեղեցիին դուռը առաջնորդեցին։ Ճիշտ դռան մոտ, ամուսնացյալները դեռ եկեղեցիեն դուրս չելած, հարսնևորներ մեծ աղմուկով և բարձրագոչ երեք անգամ բոռացին.

Աստծո՞ւն ամանա՞թ,
Աստծո՞ւն ամանա՞թ,
Աստծո՞ւն ամանա՞թ։

Ոմանք ալ այդ ժխորին մեջ կբոռան.

Առչո՞ւն ամանա՞թ,
Առչո՞ւն ամանա՞թ,
Առչո՞ւն ամանա՞թ,

Իսկ փոքրիկ տղաներ ու դրացի հանդիսականները, ծաղրելու համար, կբոռան.

Պալթաչո՞ւն[34] ամանա՞թ,
Պալթաչո՞ւն ամանա՞թ,
Պալթաչո՞ւն ամանա՞թ։

Ի դեպ է հոս հիշել քանի մը հեթանոսական սովորություններ պսակի մասին։ Առաջին՝ արշալույսի պսակ։ Հին ատեններ պսակի արարողությունը կկատարվեր առավոտյան ժամերգության միջոցին—գուցե արևապաշտության ժամանակներեն մեզի հասած—արշալույսը դեռ չբացված, որպեսզի պսակվելե հետո նորածագ արևի շողերն ու ճառագայթները նորապսակներու վրա իյնային։ Մինչև իսկ մեղք կհամարվեր արևածագեն հետո պսակվիլը։ Այս սովորությունը կամաց-կամաց անհետացավ, իր գոյությունը պահելով մինչև մեր օրերը քանի մը գյուղերու մեջ միայն։ Երկրորդ՝ թոնիրի պսակ։ Տես մը, որ գուցե մնացած է հեթանոսական ժամանակներե կամ կրակապաշտությունե։ Ակութի վրա կպսակվեին, որպեսզի նորապսակները բնավ աղետներու և վտանգներու չհանդիպեին։ Շատ մը երիտասարդներ և մանավանդ եկեղեցիներե հեռու եղողներ, քալելու անկարողներ, երբեմն ալ ազատամիտներ (ինչպես Կարապետ Աղա Նատանյան), հաճախ թոնիրի շուրջ կպսակվեին, պայմանով, որ թոնիրը վառ ըլլար։ Արդեն մեր մամիկները թոնիրը Տաճար աստուծո կկոչեին։ թոնիրով կերդվեին ու կանիծեին։ Դեռ մինչև մեր օրերը թոնիրներու կողքերը խաչեր կկրեին։

* * *

Եկեղեցիեն նորապսակներ կառքը առաջնորդվեցան։ Նորեն ամեն մեկը իր կառքը նստավ։ Նորեն ձիավորներն ու իշավորները հեծան ձիերն ու էշերը։ Խամբոյի Լոթեն նորեն աչքի ընկավ իր ձիու քառամբակ արշավով։ Կյոռատոյի Մուխսու ջորին նորեն ցույց տվավ իր համառությունն ի տես ա-

[34] Պալթաչին չքավոր ու անգրագետ փայտահատ մըն էր Արարուց թաղի մեջ։

մեն մի սև կետի։ Կառքերն սկսան սուրալ դեպի փեսայի տունը։

Նորապսակները արդեն տուն հասած, կառքեն իջած, դռան առջևն են։ Դուռը բաց է։

Շեմքի արարողություն և մատաղ.— Կռկե խաչոն ոչխար[35] մը մորթեց փեսային առջև և դռան շեմքին վրա։ Ոչխարի արյունեն[36] մաս մըն ալ փեսայի փողոցի դռան ճակատին քսեց։ Կումարրաղ Փանոն իսկույն հողե մեծ քյասա մը կամ մաթրաթ մը հակառակ կողմը դարձնելով, շեմքին վրա դրավ, փեսան վրան կոխելով փշրեց քասան և ներս մտավ։ Ճիշտ այդ ատեն բոլոր հարսնևորները մեկեն պոռացին.

— Կոտրի քյասէն[37], ապրի փէսէն։

Փեսայի մուտքեն հետո, հարսը իր ամուսնույն դռան շեմքին մոտեցավ։ Նորեն հարսնևորները մեկեն պոռացին.

— Ա՛չ ոտք, հարսիկ, ա՛չ ոտք Սրբիկ (ասած ա՛չ վոտ շեմքյից ներս տիր, որ նշան էր բարեհաջող մուտքի)։

Փեսայի մոր պարը[38].—Նորապսակները հազիվ դռնեն ներս մտած ու քանի մը քայլ հառաջացած, բակին մեջ անոնց դիմացը ելավ Մաբանոս խաթուն, երկու ձեռքերով, մեծ ափսե մը գլխին վերև բռնած, որուն վրա կային բաղարջներ, շաքարահացեր, քաղցրեղեններ, պտուղներ և սկսավ պարել։ Պարելե հետո ափսեն վար առավ և նորապսակներու առաջ եզող փոքր աթոռի մը վրա դրավ, համբուրեց նորապսակները և խոսքը անոնց ուղղելով, տվավ իր օրհնությունն ու բարեմաղթությունը։

— Աստծուց դիլաքյ կանեմ, զավակներս որ, մուխ ծեր էրտսից, վոռ ծեր բլակից, ալյուր ծեր թաշրից, կյինին ծեր մաղաղից, ձավար ծեր մառնից, աղօթք ծեր պերնից և ծերունին ծեր տնից պակաս չէլնի։

Այս բարեմաղթությունեն հետո մխկներ խումբը սկսավ շուրջպարը, երգելով հետևյալ երգը և դառնալով փեսայի մոր շուրջ, ոտքի դոփյուններով թնդացնելով գետինը.

Թաքավրու մէր, տիւս արե,
Քյո կլլօխ դմփող եմ պիրե,
Կարմիր պաղառ ծեռտ արե,
Արաղի փառչ ծեռտ արե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Քյե նուշ-ամբրաթ ենքյ պիրե,
Վարթ ու ծաղիկ ենքյ պիրե,
Մեխակ շուշան ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Սարի կաքյավ ենք պիրե,
Սարի մարալ ենք պիրե,
Խորոտ ջէյրան ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Կօվեր կթօղ ենքյ պիրե,
Բէր կնացօղ ենքյ պիրե,
Լվաց անօղ ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Ջախրակ մանօղ ենքյ պիրե,
Առչկան մանօղ ենքյ պիրե,
Ամման լվացօղ ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե
Թանէր վառօղ ենքյ պիրե։
Կեր-խում արօղ ենքյ պիրե,
Խմոր կճօղ ենքյ պիրե։
Ալիւր մաղօղ ենքյ պիրե,
Խմոր շաղաղօղ ենքյ պիրե,
Կյռտնակ արօղ ենքյ պիրե,
Քյե խաց թխօղ ենքյ պիրե։
Լվաց անօղ ենքյ պիրե,
Թաթերտ լցող ենքյ պիրե,
Սոլեր ջիտկօղ ենքյ պիրե,
Փալթոտ պռնօղ ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Քյե տեղ իսկօղ ենքյ պիրե,
Մաղեր սանդրօղ ենքյ պիրե,
Քյե զարտրօղ ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Տախտ ավիլօղ ենքյ պիրե,
Քյե գլօլի կաղ ենքյ պիրե,
Լեզուն տաս գյաղ ենքյ պիրե։
Թաքավրու մէր, տիւս արե,
Շիրիկ-շիրվոր ենքյ պիրե,
Խեռ ու խեռնակ ենքյ պիրե,

---

[35] Ըստ դասակարգի կամ ըստ հարստության, սովորություն էր, որ հավ մը, աքաղաղ մը, դառ մը կամ ոչխար մը մորթվեր դռան վրա, որպես թե, ըստ հեթանոսական սովորության, փեսային գալիք փորձությունները մորթվածին կփոխանցվեին։

[36] Կհավատային, որ դռան ճակատին քսված արյունը չար ոգիներու մուտքը կարգիլեր։

[37] Կուզեմ հիշել նույնպես, որ հարսանիքի տեղության կոտրված թանկագին ափսեներն ու ամաններն իսկ բնավ հոգ չէին պատճառեր այն համոզմամբ, որ ատոնք նորապսակներու գլխին գալիք փորձանքներուն արգելիչներ էին։

[38] Ըստ հնավանդ սովորության, փեսայի մայրը եկեղեցի չէր երթար, պսակի արարողության ներկա չէր ըլլար։

Քյռ կյլօխ դրսփօղ ենքյ պիրե։

Հովհաննես աղան վարձած էր երկու տարբեր նվագախումբեր։ Առաջին խումբն էր Նաղարաչի Ծոիկ, Զուռնաչի Գյալհօն և պարող մը։ Ծոիկը Վանի մեջ նշանավոր նաղարա զարնող, իսկ Գյալհօն նույնպես միակ համբավավոր փողահարը Վանի մեջ։ Այս խումբը վերջին պահուն լուր տվավ, թե Շամիրամա տակ[39] տեղի ունեցող խնջույքի մը խոսք տված էր և ստիպված էր բացակայիլ։ Երկրորդ նվազախումբն էր Կոր Սէթոյին։ Այս խմբի ղեկավարն էր Կոր Սէթոն, որ կնվազեր Քեման, մյուս անդամներն էին Քեծոն, որ կնվագեր քանոն, Կուշոյի Ակոն, որ կզարներ դաֆ ու միանգամայն կերդեր, և Կուշոյի Քյաչալ, որ կփչեր փող։

Որովհետև Կուշոյի Ակոն թե դաֆ կզարներ և թե կերդեր, որով իր ձեռքերն ու բերանը միշտ զբաղած էին, որովհետև խիստ ծխամոլ մըն էր, իր կողքին միշտ նստած կպահեր չիպուխչի մը, իր 12 տարեկան տղան, որը ծխախոտը թուղթի մեջ փաթթած, ծխամորճին անցուցած, վառած, հոր նշանին կսպասեր, մանավանդ երդերու համարներու ընթացքին։ Նշանը տրվելու պես, ծխամորճը իր հոր բերնին կբռներ, Ակոն երկար շունչով և ախորժակով կծխեր, առանց ընդհատելու իր երգն ու դաֆին նվագը։

Կուշոյի Քյաչալ թեև նվագողներու խումբին ընկերացած միշտ փող փչելով զբաղած էր, բայց փոքր և մեծ զատիկն իր խրթման օրերուն փնտռված անձն էր։ Վանի մեջ սովորություն էր, որ խթման երեկո, ժամասացություն սկսելեն առաջ, ժողովուրդը եկեղեցի հրավիրելու համար, եկեղեցվո կոչնակը սովորականեն ավելի երկար և անընդհատ զարնել, փոխանակ տասը վայրկյանի։ Կուշոյի Քյաչալ ուներ այդ մասնագիտությունն ու բազուկներու ուժը։ Նա տախտակե երկու թակոցներ ձեռքին, կզարներ կոչնակին արագ-արագ, առանց ընդհատումի (գրեթե մեկ ժամ) և առանց հոգնելու։ Տեսա զինք խթման օր մը, թե ինչպես կոչնակը զարնելե հետո սանկ հաղթականի հովեր առած, գոհ ու ուրախ Արարք եկեղեցվո տանիքեն վար իջավ, մեզ՝ փոքրերուս, զարմանք և հիացում առթելով։

Մխկներ հաղիվ վերջացուցած փեսայի մոր երգը, Կոր Սէթոյի նվագախումբը ըսկըսավ նվագել «Կարմիր վէլօյով ախչիկ» պարերգը։ Մխկներ և ուրիշ պարողներ նորեն սկսան շուրջպարը, թռնելով և ոտքի դոփյուններով գետինը թնդացնելով, ստեղծեցին ոգևորիչ մթնոլորտ մը։

ԿԱՐՄԻՐ ՎԷԼՕՅՈՎ ԱԽՉԻԿ[40]

Տղան.— Կարմիր վէլօյով ախչիկ,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Քյռ խօրն ասա քյե տա ձիկ,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան։
Աղջիկ.— Իմ խէր զիկ թանգյ ի պախե,
Նարոյ, և այլն
Դաֆյմա մարթու չի ծախե
Նարոյ...
Վանա խոջին ի պախե,
Նարոյ...
Տղան.—Էլիր ես կայնիր ես տուռ,
Նարոյ...
Մեռ պռնիր ես ջուխտմ նուռ,
Նարոյ . . . . . .
Մեջ մէկ նռան խաղար խատ,
Նարոյ . . . . . .
Ամէն խատին պաքյմ տուր,
Նարոյ . . . . . .
Աղջիկ.— Էսօր մեր տուն խարսնիս կա,
Նարոյ . . . . . .
Խարսնիս կանենքյ տեղ չկա,
Նարոյ . . . . . .
Կօլօտ փեսին բեղ չկա,
Նարոյ . . . . . .

Մինչ նվագախումբը ոգևորված կնվագեր, մինչ երիտասարդներ պարելով կզվարճանային, հարսը առաջնորդվեցավ կանանց բաժանմունքը և շրջապատվեցավ խայտաբղետ հագուստներով զարդարված կիներե։ Հարսին քողը դեռ գլխին քավորկին Խաթուն հարսի գլխին վրա թափեց թուղթե պարսկի

[39] Շամիրամա տակ.—Գիտենք, որ Հայոց Զոր գավառեն Շամիրամի առվով ջուր բերված էր Վան։ Այդ լայն առուն մինչև մեր օրեր գոյություն ուներ։ Վանի այն թաղամասերու այգիներ, որոնք ցած մակարդակի վրա գտնվելով, այս ջուրեն կօգտվեին, Շամիրամա տակ կկոչվեին։

[40] Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյան, ձայնագրեց՝ Ա. Փիոլին։

մը մեջ լեցված ու խառնված մանր դրամներ և հացահատիկ[41] ու կիսով չափ ետ տարավ հարսի քողը, բանալով անոր երեսը։

Արանց բաժնի մեջ հարսնևորներ կամաց-կամաց սկսան ներս երթալ և նախապես պատրաստված կլոր սեղաններու բոլորտիքը նստիլ, ծալապատիկ և բազմոցներու վրա։ Այդ սեղաններու վրա շարված էր ամեն տեսակ ուտելիք։ Ճերմակ լավաշ հաց, պանիր, քանի մը տեսակ աղցաններ, գինիի, օղիի սրվակներ, գավաթներ և պտուղներ այլազան։

Ցնփոր Բաղսար, խոհարարի ճերմակ գլխարկը գլխին, ճերմակ գոգնոցը կապած հոլանդական պանիրի նմանող իր ճարպոտ փորին, համադամները եփած-պատրաստած, իր հինգ օգնականներով կանգնած էր և սպասարկելու նշանին կսպասեր։

Առաջին սեղան.—Փեսա Լևոն, իր հայր Օհաննես աղան, Քավոր Աղան, Օխաշ Վարդապետ, Կանա՞մ Որ, Տեր-Պետրոս, Տեր-Աճալեն, Տեր-Զողին, Ճգնավոր Մինաս, Կյոռտոյի Մուխսին, Կապարուկ, Կարիբի Վարտան, Խանկե Գևորգ, Կուկազի Սանասար, Սալախյան Խաչատուր, Վըռըշի Կարոն, Կոտկե Սեփան, Քեթրավիզ Խեքիմ, Շիլ Մարկյոն, Լորեզի Մնոն, Ծուռ Օրման, բոլորն ալ հասակառուներ։

Երկրորդ սեղան.—Մազրաթ Մալին, Բաբբար Խաչիկ, Ճոռթոյի Ակոն, Ֆըռընչի Պատուր, Ցնփոր, Ցարիշան, Կակուղ Մուխսին, Վըզվըզի Մուխսին, Ճկռան Ակոբ, Կասապ Ավնոն, Մուճկե Նշան, Կումարբազ Փանոն, Լըմբցու Մուսես, Կռկե Խաչոն, Կլորակոտ, Խամբոյի Լոռթոն և Բրուտ Մանուկ։

Երրորդ սեղան.—Միայն մխկներ երիտասարդներու համար։ Ասոնք միասին քալեցին, միասին խաղացին, միասին ալ մեկ սեղանի շուրջ նստեցան։ Այս ամուրի երիտասարդներ միշտ ուրախանալու, ուրախացնելու, խնդացնելու, պարելու, երգելու և խեղկատակություններ ընելու մասին կմտածեին։

Չորրորդ և փոքր սեղան.—Կոր Սէթոյի Ելվադախումբի շորս անդամներուն համար։

Օխաշ Վարդապետ օրհնեց սեղանը։ Կընքահայրը տվավ նշան և ամեն ոք սկսավ ուտել։ Խոհարար Ցնփոր Բաղսար և իր օգնականներ սկսան սպասարկել։ Գավաթներու ճընկ-ճընկոցներ, բարեմաղթություններ, կենացներ, այնպիսի ժխոր մը ստեղծեցին սենյակին մեջ, որ այլևս ոչ ոք կրնար բան մը հասկնալ։ Ամեն բերնե ձայն մը կելլեր։

— Խմենք Լևոնի և հարսի կենաց,— առաջարկեց կնքահայրը։

— Նո՞շ, նո՞շ, նո՞շ[42],—պոռացին ամենքը միասին։

— Լևոն, կաղախտ տառտկի,—ըսավ կնքահայրը, որովհետև կհավատային, եթե գինի խմած ատեն փեսան իր բաժակը ամբողջովին չպարպե, զոքանչը ջուտ կմեռնի։

Երբ առաջին սեղանի հարգելի և տարիքոտ հյուրերը հասան օղիի տված իրենց զվարթության ծայր աստիճանին և կամաց-կամաց անոնց անունները Բագոսի հաճախորդներու տետրակին մեջ արձանագրվեցան, կնքահայր գզիր Պողոս դեմքը խոժոռած, իր գոռ ու բամբ ձայնով պոռաց, խոսքը մխկներուն ուղղելով։

— Ծո՛, սատանի վիլլակներ, ի՞նչ էլաք, ծէռքյներտ ինչի՞ չէլնե։ Տյո՞ւք էլ շարխոշցաք։

Կնքահոր պահանջին գոհացում տալու համար, Վանլի Խորեն նշան ըրավ և մխկներ սկսան երգել հետևյալ խմբերգը ու պարել։

ԼԱԼՈՒԽԱՆ[43]

Պոպիկ մի՛ քյէլե, Լալուխան,
Փուշ կէլնի տոտիկ , Լալուխան,
Առծթէ կոտիկ, Լալուխան,
Տիւ ես խորոտիկ, Լալուխան։
Էթանքյ Ստամբոլ, Լալուխան
Պիրենքյ վոսկի բոլ, Լալուխան,
Առնենքյ ջուխտամ սոլ, Լալուխան,
Խայնենքյ դորէդոր, Լալուխան։
Էթանքյ Պոտիկ կյեղ, Լալուխան,
Ժողվենքյ նուկիմ եզ, Լալուխան,
Անենք ծվաղեղ, Լալուխան,

---

41 Նորապսակներու գլխին թափված ընգեղենի կամ դրամի սովորությունը շատ հին էր։ Դրամե և հացահատիկե զատ, ոմանք հարսի գլխին կթափեին գարի, կորեկ, սիսեռ, փոքր շաքարիկներ, որովհետև կհավատային, թե այդպիսով կբարեմաղթեին կամ բաղձանք կհայտնեին հարսին բախտավոր ու հարուստ ըլլալուն։

42 Գուցե «անուշ» բառի կրճատում։

43 Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փիլլին։

Ուտենք միատեղ, Լալուխան։
Էթանք էրէրին, Լալուխան,
Ոչխար վեր ըէրին, Լալուխան,
Կթենք թուխ մաքին, Լալուխան,
Լցենք սիրահին, Լալուխան,
Պառնանք սև եզան, Լալուխան,
Առնենք խարէզան, Լալուխան,
Քշենք դեխ ղօղան, Լալուխան,
Ջօղան քյե մէյդան, Լալուխան։

* * *

Մարանոս Խաթունն ալ իր հրավիրած բարեկամուհիները ու դրացի կիները ուրիշ սենյակի մը մեջ սեղանի շուրջ հավաքած և սեղանին դլուխը հարսի կողքին նստած, կհրամայեր, կուզեր այսինչ կերակուրը, այնինչ խմիչքը և աչալուրջ կհսկեր, որ սեղանի վրա որևէ բան չպակսի։

Կաշի Պառավ քիչ մը ուտելե և լավմը խմելե հետո, սկսավ պոռալ։

— Ջանըմ, արա՜ղ, էլ արաղ չմնա՞ց, արաղ պիրեք, դութմէս ղոռեց։

Ծառայող մատակարար մը լեցուց գավաթը և պառավին տվավ։ Պառավ պարպեց այդ գավաթն ալ։ Օղին թռավ կմունգյ[44], վխկաց, հաղաց, վխկվխկաց, վիզ թալեց ոտներ պարղեց։ Վերցուցին պառավը, ոտներեն ու ձեռքերեն բռնած և ուրիշ սենյակ մը փոխադրեցին։ Քանի մը օրեր հետո լուր տարածվեցավ, թե Կաշի Պառավը մեռեր է, որու վրա հանեցին հետևյալ երգը.

Կէր, կէր ու չկէր, մէյ կծէծ ջանդիկմ կէր,
Խճփորիկ քյոխթկիմ պուճխէն լէնջվիր էր,
Ուր պուճուրիկ պսպեղ ջրով կպսպղէր,
Կյախ կյախ էլ
ափսաթաթիկ տախտ կլպստէր,
Ցա որ չէ լավու-լավու կրսրկտէր։
Ճիժպժերաց որն ինէր լըպ, կճմկտէր,
Կյախուն մաթրաթմ քյալադյոշ[45] կքյբսէր,
Խճէր, խճէր, հա կխճէր, չուր փոր տճկէր,
Ըսկուն կփքյռէր,, փորից կվայէր։
Պառա՜վ, պառա՜վ, չկա պառավ,
Էն խեղճ պառվու աչկեր թռավ,
Կյրող իզարկ խոկյին տարավ,
Խազար ջրով փիծավ պառավ,
Ճիժպժերաց ջան խավխրավ։

Սրանց սենյակը եղողներեն ոմանք ձաշերնին վերջացուցած՝ գլուխնին կորորեին, ոմանք հարբած, սեղանի շուրջ երկնցած, կխոմփային, ոմանք կիցկտուր ձայներ կհանեին։ Ճգնավոր Մինաս վեր ելավ և սկսեց եղանակով երգել «Հայր մերը»։ Օխաշ Վարդապետ ձայնակցեց Մինասին։ Տեր-Աշալեն կարդաց «Պահպանիչ»։ Սեղանը նորեն օրհնեցին և գոհությունով վերջացուցին, բարեմաղթելով արևշատություն նորապսակներուն։

Այրերեն ու կիներեն ամեն անոնք, որոնք կանգնելու ու քալելու ուժ ունեին, կամաց-կամաց խոշոր սենյակը առանձնացան։ Վանլի Խորենն ալ իր խումբով հոն եկավ։ Անոնց հետևեց Կոր Սեթոյի նվագախումբը։

Երբ սեղանատունն ամայացավ, Հովհաննես Աղան պատվիրեց մատակարարներուն, որ սեղանները նույնությամբ մնան, պատրաստ հաջորդ օրվան համար ըստ նահապետական սովորության։

Հոգեհետե և ընդմիջումներով Կոր Սեթոյի խումբը նվազեց հետևյալ պարերգները՝ հարսանիքի տեղության։

ԾԱՌԵՆ Ի ԿԱԽՎԵ

Կնացինք կալեր,
Կտրիցինք շալեր,
Բաժ-բաժիտ մեռնեմ,
Նշանլու յարեր։
Ծառից ի կախվե
Տավէրկու ծիրան,
Սիրիր եմ կառնեմ,
Անուն ի Ծրան։
Ծառից ի կախվե
Տավէրկու տամոն,
Էն տղէն կառնեմ,
Անուն ի Սիմոն։
Ծառից ի կախվե
Տավէրկու խատ նուշ,
Էն ախչիկ կառնեմ
Անուն Սիրանուշ։
Ծառից ի կախվե
Տավէրկու խնձոր,
Սիրիր եմ կառնեմ
Անուն ի Քրիքոր։

---

44 Շնչափողին մեջ գնաց։

45 Քյալադյոշ—ցոթ նյութերե կերակուր՝ տորած լորթան, ծիրանի լիր, ոսպ, խախիզա, հաց, սոխառած, համեմներ։

46 Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փիլին։

Ծառից ի կախվե
Տավէրկու խատ վարթ,
էն ախչիկ կառնեմ,
Անուն ի Նվարթ։
Մեր ածուն նանա,
Մեր ածուն նանա,
էն ախչիկ կառնեմ՝
Անուն Անանա։
Կնացինք Վարակյ
Զարկիցինք աղվէս,
Սիրիր եմ, կառնեմ
Անուն Ախանէս։
Ես քյե չեմ առնե,
Ատէլի Սրպուխ,
Կարինէն կառնեմ,
Աչկերն ի թուխ-թուխ։

ԻՄ ԿՅԸԼԽՈՒ ՖԱԹԷՆ

Իմ կյլխու ֆաթէն կուտամ (կրկնել),
Դէ՛ խան ծամթելն ի ծովէն,
— Լողվորի մէկնէլ ես եմ,
Չեմ խանե ծամթելն ի ծովէն։
Իմ կյլխու շամբար կուտամ (կրկնել),
Դէ՛ խան ծամթելն ի ծովէն։
— Լողվորի մեկնէլ ես եմ,
Չեմ խանե ծամթելն ի ծովէն։
Իմ մէճաց քյամար կուտամ (կրկնել),
Դէ՛ խան ծամթելն ի ծովէն։
— Լողվորի մեկնէլ ես եմ,
Չեմ խանե ծամթելն ի ծովէն։

* * *

Յար ունի, յար ունի,
Յարս յոթն ախպէր ունի,
Յար ունի, յար ունի,
Յոթն էլ կրնացիր են պանէլու։
Յար ունի, յար ունի,
Նախրակյնէն ուռի ծառ,
Յար ունի, յար ունի,
Խնձոր թալեմ արե տար։
Յար ունի, յար ունի,
Խնձորի կէս կրծած էր.
Յար ունի, յար ունի,
Զորս պիլոր առծրթէ էր։
Յար ունի, յար ունի,
Ախպէրս ուզեց չտվի,
Յար ունի, յար ունի,
Սիրած յարի օրոխկած էր։

ՀԱՆԻՄԱՆ, ՋԱՆԻՄԱՆ

Ուրպաթ առատուն աղօթնին, հանիման,
ջանիման,
Ասինքյ էթանքյ Վանից (Վարագից) իկյին,
հանիման, ջանիման,
Մեր խուրուղուն տփենքյ կյետին,
հանիման, ջանիման,
Ուտենքյ-խմենքյ խետ մեր քյէֆին,
հանիման, ջանիման։
Կոկէ Դիքրան ափալ-թափալ
հանիման, ջանիման
Զում խաշ-փողան մէյ լար կնաց
հանիման, ջանիման
Էսատեղ ինգյավ, էնատեղ ինգյավ
հանիման, ջանիման
Արաբաչի Կյէվոն կնդավ
հանիման, ջանիման
— Պարի լյոս քյե. Կյէվորքյ ախպէր,
— Ասսու պարին, Դիքրան ախպէր,
— Քյո արաբէն կուտա՞ս քյորով.
— Թողզ արաբէն ես քյե ծառա։
— Կնիկ-տղա մենքյ մեր քյուլֆաթ.
Վարակյ կէթանքյ էսա
ուրպաթ,
Քյրէտ կուտամ չորս մաջիթյա,
Մարթակյլոխ մէկ մաջիթյա,
— Իմ արաբէն, խրեղէն կառքյ
Միանքյ ունեմ թևավոր խավքյ,
Խաբար արա թող հազրվեն,
Զում մշակներ ձիանքյ լծեն,
Կիյտեր առին պերքյ ու պարին,
էկան մտան մէջ արաբին։
Ճամրախ ինզյանքյ ուրպաթ առատուն
Կնացին, ընցան ուրպաթ առուն,
Տէլ չխասած Փորոզա քյար
Կոտրավ, ինզյավ իտվու (ետևի) թաքյաո,
Արին-չարին չում շիտկիցին,
Պամբկէ թելով կապկպիցին,
Քյրովրուալէն քյաշքյրշիցին,
Զում Շուշանից տակ պիրիցին։

ՀԱՄ ԳՅՈՒԼ, ՀԱՄ ՎԱՐԹ

Համ գյուլ, համ վարթ,
համ նարզյիզ,
Գյոլի կոունգյ էրկէն վիզ,
Բարօ, մամօ, կարքա զիս,
Թարզի մարթու մի տա զիս,
Կառնի ասեղ խշթի զիս։

ԹԱԳՎՈՐԻ ՄԵՐ ՏՅՈՒՍ ԱՐԵ



Թագ - վո - ր՝ մեր տյուս ա - ռե էլ - կը լոխ-գրամ վոզ եեմ պի - ռե։

ՄԱՔՐՈՒՀԻ

(Քարվան Էկավ)



Քար-վան Է - կավ գրնկ-գրնկ - ա - լեն Մաք-ռու - հի ջան Մաք-ռու-հի։

ՎԿԱՆՑՍԻ



Է - սոր մեր տուն խաղ-նիս կա հոյ-նար նար Ա-վան ցցի։

ԲՈՒԻԿ ՄԻ ՔԵԼԵ ԼԱԼՈՒԽԱՆ



Բո - ւիկ մի հե - լե Լա - լու - խան։

ԱՂՔԱՍԱՆ



Նա աղ - քա - սան տուն - մուռ կա-գամ նա-նի - ման, նա - նի-ման։

ԼՎԵՐՆ ԷԿԱՆ

Լ.ր - վերն է - կան պա - պին - մե - պին:

ՃԱՆ ՄԱՐԱԼ ՃԱՆ



Ճան մա-ռալ ճան ամ-պեր են ամ - պի ներ – մանն:

ԿԱՐՄԻՐ ՎԵԼՈՑՈՎ ԱԽՋԻԿ



Կար - միր վե - ր - ով ախ -



ջիկ Ջոռ - ռ, նա - ռ, նա - ռ նան:

ԾԱՒԵՆ Ի ԿԱԽՎԵ

(Գեղացիական կալեր)



Գր - նա ցիներ կա - լեր կրտ - ե - ցիներ ցա - -



լեր բան պա - պոլ մեռ - նիմ ներ - ցան - ոտ յա - ռեր:

Համ գյիւլ, համ վարթ,
Համ նարդյիզ,
Գյոլի կոունգյ էրկէն վիզ,
Բաբո, մամո կարքա ղիս,
Սոլ կարօղի մի՛ տա ղիս,
Կառնի խիրուն խշթի ղիս։
Համ գյիւլ...
Գյոլի...
Բաբո...
Խոտաղ մարթու մի՛ տա ղիս,
Կէթա տաշտեր մոռնա ղիս։
Համ գյիւլ...
Գյոլի...
Բաբո...
Կ ուրտացվորի մի՛ տա ղիս,
Կյիրբյ կկարաա, մոռնա ղիս։
Համ գյիւլ...
Գյոլի...
Բաբո...
Շալ կյոռծօղի կարքա ղիս
Առնի ուր կյոքյ պաքյի ղիս։

ՋԱՆ ՄԱՐԱԼ ՋԱՆ[47]

Ջան մարալ ջան, ամբիր ես ամբի նման,
Ջան մարալ ջան, շաքյար ես կանդի նման.
Ջան մարալ ջան, ճիւրն ի էլե առտ իրես,
Հոյ մարալ ջան, բուզրդյան աստված սիրես,
Հոյ մարալ ջան, թէ որ Ջանիկ կյեղ կէթաս,
Հոյ մարալ ջան, իմ սիրածին կընդրնես։
» » » թէ կընդրնես զիկ օրօխկես,
» » » տաւրի տկէն մուխ կէլնի,
» » » Ախպէր քյիւրոշ խուր կէլնի,
Հոյ մարալ ջան, ես ախպյիւր եմ, տիւ ճիւր ես,
» » » ես ղըղզղամ, այիւ խմես,
» » » ես վախէնամ, տիւ ծռես,
» » » ծառի տրկի պաղ ախպիւր,
» » » առծթէ թաս, վոսկի ճիւր,
» » » պաքյմ կուզեմ՝ էրկու տուր։
» » » ճիւրն ի ինդյե առվրներ,
» » » սէրն ի ինդյե պառվրներ։

ՏՕ, ՏՂԱ ԼԱՕ

Աղջիկ.—Տօ, տղա լաօ, զի կյետ ընցու։
Տղա.—Զիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ։
Աղջիկ.—Ճայտիս մախչէն թօղ քյե էլնի։
Տղա.—Ճայտիտ մախչէն ես ի՞նչ անեմ։
Աղջիկ.—Տօ, տղա լաօ, զի կյետ ընցու։
Տղա.—Զիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ։
Աղջիկ.—Վիզ վզնոցս թօղ քյե էլնի։
Տղա.—Վիզ վզնոցտ ես ի՞նչ անեմ։
Աղջիկ.—Տօ, տղա լաօ, զի կյետն ընցու։
Տղա.—Զիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ։
Աղջիկ.—Մէճացս քյամար թօղ քյե էլնի։
Տղա.—Մէճացտ քյամար ես ի՞նչ անեմ։
Աղջիկ.—Տօ, տղա լաօ, զի կյետն ընցու։
Տղա.—Զիկ ի՞նչ կուտաս, որ ընցուցեմ։
Աղջիկ.—Տիւ ի՞նչ կուզես, որ ընցուցես,
Տղա.—Պաքյմ թէ տաս՝ քյե կնցուցեմ։

ԱՎԱՆՑԻ[48]

Հոյ նար-նար, Ավանցի։
Էսօր մեր տուն խարսնիս կա,
Հոյ նար-նար, Ավանցի։
Խարսնիս կանենքյ տեղ չկա,
Կոլօտ փեսին բեղ չկա։
Պուտկով փլավ իփիցի,
Կարաքյ-եղով եղիցի,
Վանս։ խօջին կիրցուցի,
Կիդր քյոմիւր տաս կուռուշ,
Տանենգյից վախիցի,
Մեր պատ պլավ քյօ ապով,
Մեր խօրօտիկ խարսն ապով։

ՄԱՔՐՈՒՀԻ[49]

Քյարվան էկավ զնգզնգյալէն,
Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Մէջ քարվանին ճորիմ կէր,
Մաքրուհի ջան, Մաքրուհի։
Ճյորու քյամակ սնդիկմ կէր,
Մաքրուհի ջան, Մաքրուհի։
Մէջ սնդկին բոխչէմ կէր,
Մէջ էն բոխչին շուշփէմ կէր,
Մէջ էն շուշփին հայլիկմ կէր,
Մէջ հայլկին ախչիկմ կէր,
Աչքն ու ընքյվեր խրեղէն էր։
Ախչիկ, ախչիկ, անունտ ի՞նչ ի,
Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Ախչիկ, ախչիկ, սէրտ տուր ձիկ.

---

47 Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փոլին։

48 Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փոլին։

49 Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փոլին։

12—696

Մաքրուհի ջան, Մաքրուհի։
— Խորած խեխտվրծ, Դավիտ ի՞նչ ի,
Իմ խէր լսի քյե կսպանի,
Թրով զանի, խոկյիտ խանի,
Արունտ խառնի կյինուն խմի։
Տղան.
— Ախչի, ախչի, քսան տարէկան,
Քյո խօրն ասա, քյե տա իրկան,
Վոր չմնաս վէր քյո՞ խօր տան,
Ախպօրտ կիյտեր իրես կուտան։
Ես ի՞նչ անեմ վիզ ու վզնոց,
Ջահէլ կուզեմ մտնի իմ ծոց,
Որ խամրիւրի իմ սրտիս խոց։
Տղան.
Քյանի էկա ծեր տուռ փակ էր,
Տիրմ էլ էկա ավեր պակ էր,
Վոր չիր առնե՝ թոզ չխապիր,
Խազար ախպէր քյոր կպաքյեր։
Իրիկուն ի, բէրի կյախ ի,
Բէրի ճլոր թիվէս կախ ի,
Էկան ասին յարոչ մախ ի,
Աչկերս առցունքյ, սիրտս ուրախ ի։

ԼՎԵՐՆ ԷԿԱՆ[50]

Էլա կնացի չում մեր Փրխուս,
Լվերն էկան ժողվան կյլխուս,
Ջթոզիցին ինգյնի լյոս,
Կէս կիշերին մլիցին տիւս։
Լվերն էկան լավազ-մավազ,
Կնմանեն՝ փաշի կավազ,
Լվերն էկան տեզին-մեզին,
Էկան թառան փեսի բեզին,
Ճկոցուցին խարսի լեզին։
Խարար տարան տէկյէրկընգյան,
Ծեռքյեր իզար վէր ուր ծնգյան,
Պտրզտվավ ծեռաց մրոջան,
Հմէն մրոջան չանձ պատրնջան,
Վավէլէ՞ր, Զուլո, վավէլէ՞ր
Քյո տարոզի տուն ավիրէր։
Կյլխուն ինգյավ թախչի ֆուչէն։
Աման լվեր, յաման լվեր,
Կարակնգյուղ կարմիր լվեր,
Կիշեր կէլնեն ճվերն ի վեր,
Ցերէկ կէլնեն սներն ի վեր։
Հայ չա՛ր լվեր, մանաթ լվեր,
Սլվլուլիկ մնչիկ լվեր։
Լվերն էկան ուրուս-մուրուս,
Էկան թառան վէր խնամուս։
Ջթոզիցին որ պացվէր լյոս,
Կիշրով խնամուն փախցուցին տիւս։
Լվերն էկան արա-թարա,
Ջիթ կզանեն առանց փարա,
Հա կթոնեն քյոշից քյոշա,
Դինջ չեն թողնե խարս ու փէսա։
Հա՛յ անիծած կարմիր լվեր,
Կարակնգյուղ կարմիր լվեր։

ԱՂՔՅԱՍԱՆ

Ախպիւր կասի.—
Ես Աղքյասան շուռ-մուռ կուկյամ,
ջանիմա՞ն, ջանիմա՞ն։
Պտտուրն ակոկե ական, ջանիման, ջանիման,
Ծմեռ կէլնեմ էրևական, » »
Կյարուն կէլնեմ կուրիսական, » »
Խարար տարեքյ իմ ճրպաշին, » »
Որ ճիւր լցի մէջ ալնխին, » »
Կտէլ-կտէլ ցվրի խալխին, » »
Ճաշկիտէր կասի.—
Սալյան արէքյ քյեռքյեռական, » »
Ժողվենք էթանքյ նստենքյ ական, » »
Կոտ խորէմ մեր ճրպաշին, » »
Տէլ չի տվե, կառնի փէշին, » »
Լէշիկ տնեմ վեր ճյոշ նաշին, » »
Որ չկտրէր մեր ճաշկ պաժին, » »
Քյանքյնի տուն էլնի վէրան,
Սուն կոտրի, մնա կյէրան, » »
Տարին խազար կուռուշս կէրան, » »
Ճյուր չխասավ դահնի պէրան, » »
Աղքյասան ցածր ի Սոֆու դահնէն, » »
Պուտմ ճյիւր չի ծնծնա փորէն, » »
Քյանքյան պակաս չէլավ խորէն. » »
Տիրվանքյ կրտրան թխթմորէն, » »
Քյանքյան կասի՝
Ամ՛, շան թումաս, շան պոլոճիկ, » »
Կպակվես օր կես տուճիկ, » »
Որ հաթս ուզեմ, կելնես կուճիկ, » »
Փախնես մտնես նեղ պուրուճիկ, » »
Անչանքյ զարկի տռան լանդյան, » »
Սոլս մաշավ, փորսողս ինդյա, » »
Ումուտ կանեմ, նիրսանց տիւս կյա, »
Բալքյի շատ-քիչ իմ հաթս տա, » »
Անչանքյ զարկի տռան ճկիկ, » »
Կնդյա խետ կանէր խունջիկ, » »

[50] Երգեց՝ Ե. Տեր-Մկրտչյանը, ձայնագրեց՝ Ա. Փիոլին։

Քյե անիծի սուրփ Մկրտիչ, » »
Իմ հախս տուր, թէ շատ թէ քիչ, » »

ՃՂՕՐԻ ԵՐԳ

Քյիւֆ հը քյիւֆ դարա դարա,
Ես էլա պեռթ ռուրա,
Կանչիցի Տեր-Զաքյարա,
Խունդյ, մոմ խաղար արա,
Առավօտուն պաշտօն արա,
Իրիկուն խթում արա։
Փիւ էն պուճախ, փիւ էն պուճախ,
Մեր քավորանց մեղրի պուճախ,
Շէն կենա իմ խօր օճախ։
Քյիւֆ հը քյիւֆ դարա դարա,
Ես էլա պեռթի ռարա,
Իմ ախպէր վէր էն պեռթին,
Վոսկի թուր վէր էն թրին,
Կէրթա խաղա տէմ լիւսնկին,
Լիւսնակ տփեց մէջ իրիսին։
Փիւ էն պուճախ, և այլն։
Քյիւֆ հը քյիւֆ էթամ փտռեմ,
Իմ ախպօր կնիկ ճարեմ,
Վորտեղից ճարեմ, որտեղից ճարեմ,
Վարակյա սարից ճարեմ։
Փիւ էն պուճախ, և այլն։
Տուռը տփեմ մարմար քյարով,
Մտնեմ ներս զարտարանքյով,
Խէր, խոբեմ թասմ արաղով,
Փիւ էն պուճախ, փիւ էն պուճախ, և այլն։
Մէր խապեմ մատմ խինով,
Ախպէր խապեմ պօլատ ծիով,
Ախչիկ պիրեմ խաղար պարով։
Ես պապաճիկ, տիւ պապաճիկ,
Քյավորկին ինդավ տուճիկ,
Քյավորն էկավ տիւս կխանէր,
Ոտնէն պռնած տիւս կքյաշէր,
Փիւ էն պուճախ, և այլն։
Էշ քյաշիցին թորվան պէրան,
Ոտկերն արին սուն ու կյէրան,
Կյլօխն արին փաշա կէրան,
Ուսկոռն արին կօղվի մէրան,
Կաշին արին դիւֆ-նաղարա,
Կոպօն դանի, Խոպօն խաղա։
Փյու էն պուճախ, և այլն։

ԷԼԷՔՅ ՏԻՍԷՔ

Էլեքյ տիսէքյ վով
ի կիրե մեր էծ.
Կյէլ վէր էծուն,
Էծ վէր ուլուն,
Ուլ, վէր թփան,
Թիւփ վէր, իկյուն,
Իկյին Վարակյա.
Տակն ակյուկյա,
Ինչ ըէթասես,
Վերէս կուկյա,
Խալալէր, ջալալէր,
Ինչ վարի տատի էլ,
Էկավ գյովէր մե
Գյո վէր մե։
Էլէքյ տիսէքյ վով ի կիրե մեր կյէլ,
Առչն ի կիրե մեր կյէլ։
Առչն էր կյէլուն,
Կյէլն էր էծուն,
Էծն էր ուլուն,
Ուլն էր թփան,
Թիւփն էր իկյին,
Իկյին Վարակյա,
Տակն ակյուկյա,
Ինչ որ ասես,
Վէրէս կուկյա, և այլն։

Պարերուն մեջընդմեջ Վանի Խորենի խումբը սարքեց սենյակի խաղեր, որպիսիք հետևյալներն են.

Կեհա-կիկյա (կերթա-կուղա).—Խաղցողներր բոլորակի կնստին բաղմոցներու վրա, հինգ տաս հոգի, և կընտրեն իրենց խմբավարը, որ կրսե նախադասություն մը, որու մեջ կեհա-կիկյա բառերը կգտնվին։ Օրինակ՝

Ցրմ խզար կեհա-կիկյա, կեհա-կիկյա

Խմբավարի կողքին նստողը պիտի կրկնե խմբավարի ըսածը և ինքն ալ պիտի ավելցնե իր կողմե երկրորդ նախադասություն մը, այսպես.

Ցրմ խզար կեհա-կիկյա, կեհա-կիկյա։
Ցրմ լեզուն կեհա-կիկյա, կեհա-կիկյա։

Երրորդ անձը պիտի կրկնե առաջին երկուքին ըսածները, ինքն ալ ավելցնելով ուրիշ նախադասություն մը և այսպես հաջորդաբար։ Դիտելի է, որ բոլոր նախադասությունները վերջանան կեհա-կիկյա բառերով, և արդարացնեն նախադասության միտքը, և խաղացողները շատ սուր միտք ունենալու են, որ կարգավ և առանց սխալի կրկնեն բոլոր նախադասությունները։ Խմբավարը աչալուրջ կհսկե։ Սխալվողները երկու տեսակ տուգանքի կենթարկվին։ Կամ սխալողի երեսին մուր կքսեն և կամ սխա-

լողը խմբավարը շալկած սենյակի մեկ կողմեն մյուսը պիտի տանի։

Հավկիթ պահել.—Առ հում հավկիթ մը և ըսե ընկերներուդ, եթե որևէ մեկը այդ հավկիթը պահե, դուն մեկ փորձով իսկույն կգտնես զայն։ Նախքան սենյակեն դուրս ելնելդ, մտերիմ մը ունենալու ես սենյակին մեջ, որ քու մարգարեությունդ փորձել ուզող միամիտը շփոթեցնե, ըսելով,—«հոս դիր, հոն դիր», և, վերջապես, «գլխարկիդ տակը դիր»։

Ներս երթալեդ վերջ, լավ մը դիտելե հետո, ընելիքդ պարզ է, ձեռքդ ամենայն ուժով գլխարկին վրա կզարնես և հավկիթը կոտրվելով, կսկսի ծորել պահողին երեսն ի վեր։

Աչք-կապուկ.—Սենյակի մեկ պատեն մյուսը թել մը կապել։ Այդ թելեն որոշ հեռավորությամբ քանի մը խնձորներ կախել ուրիշ թելերով։ Ապա կանչել մեկը, ցույց տալ անոր խնձորները և աչքերը կապելե հետո, տեսողությունը փորձել։ Հետո քանի մը քայլ հեռացնելով, ինքն իր վրա քանի մը անգամ դարձնել և ձեռքը մկրատ մը տալով, թողուլ, որ գտնե խնձորներու թելը և կտրե։ Պայման է, որ միայն մեկ ձեռքը գործածե։

Առանց աթոռի նստիլ։—Խաղին կրնան մասնակցիլ 15—20 հոգի, նայած սենյակի մեծության։ Շրջանակաձև կանգնելե հետո, յուրաքանչյուրը իր ընկերոջ ծոծրակին նայելու է, ապա աջ ոտքը առաջ նետելով, ամենքն ալ նստելու են։ Ոչ մեկը պիտի իյնա, որովհետև մեկի ծունկը մյուսին իբրև նստարան պիտի ծառայե։ Ճիշտ այդ պահուն փոքրիկ մը ուրիշի օգնությամբ նստողներուն ուսերուն կբարձրանա և կսկսի ցատկել մեկեն մյուսը։

Դիակ փոխադրել.—Քսան-երեսուն հոգի ուղիղ կկանգնին, աչքերնին իրարու ծոծրակին հառած։ Ապա կնստին և կպառկին այնպես, որ մեկի գլուխը մյուսի փորի վրա հանգչի։ Հետո ձեռքերնին ու ոտքերնին վեր կպարզեն։ Ճիշտ այդ ատեն երկու ուրիշներ, երրորդ մը գետին պառկեցնելով, կվերցնեն զայն ու գետին պառկողներու շարքին մոտեցնելով, շարքին ամենաառաջինի ձեռքերուն և ոտքերուն վրա կդետեղեն։ Եվ պառկող տղան մինչ ձեռք-ձեռք անցնելով, շարքի վրայեն պառկած դրության մեջ, շարքին վարը կփոխադրվի, առաջին շարքին վրա երկրորդ մը և երրորդ մը զետեղելու է հաջորդաբար։

Ջուրեն բերնով դրամ հանել.—Ջուրով լեցուն քանի մը պնակներու մեջ մետաղե դրամներ նետե և սենյակի հատակին վրա դիր, իրարմե մեկ քայլ հեռու։ Պնակին թիվերուն չափ ալ մարդիկ ընտրելով, յուրաքանչյուրին ձեռքերուն բուռ մատները ետևին տանելով, ամուր մը կապե առանձին-առանձին և առաջարկե.

— Ջուրին մեջ նայեցեք և ջուրին մեջ եղած դրամը բերնով դուրս հանեցեք։

Հարց-պատասխան.—Սենյակի մեջ գրտնըվողներուն թուղթեր բաժնեցեք, առաջարկելով, որ իրենց թուղթերուն վրա ընթեռնելի գրով մեկ-մեկ հարցում գրեն։ Ապա երկրորդ անգամ թուղթեր բաժնեցեք և խնդրեցեք, որ այս անգամ իրենց ուզած պատասխանը գրեն թուղթի վրա։ Հավաքեցեք այդ թուղթերն ալ զատ տեղ մը և սկսեք կարդալ մեկ թուղթ հարցումի տրցակեն, մեկ թուղթ պատասխանի տրցակեն։

Գլխարկի տակի ջուր.—Գրասեղանի վրա գավաթ մը ջուր դիր, գլխարկդ վրան դիր, երդում բրե, որ դուն առանց գլխարկին դպչելու կրնաս այդ ջուրը խմել։ Հետո սեղանին տակը մտիր, խմելու պես կում-կում ձայներ հանե, մատովդ գրասեղանին զարկ, ապա սեղանի տակեն դուրս ելիր ու ըսե.

— Հիմա, պարոններ, գլխարկը վերցուցեք և տեսեք, թե ջուրը խմեցի՞։ Երբ միամիտ մը գլխարկը կվերցնե, դու իսկույն գավաթը վերցուր ու խմե, ըսելով,—ես խմեցի ջուրը, առանց գլխարկին դպչելու։

Թագավոր.—Կմասնակցին ութ կամ տասը Լրկսեռ անձինք։ Կընտրեն իրենցմե միամիտ մը, զայն թագավոր կընեն, գոգնոց մը վրան քաշելով և գլխին դնելով մեծ ու շինծու գլխարկ մը, կնստեցնեն աթոռի մը վրա։ Ապա անոր շուրջ կհավաքվեն վեցյոթ հոգի, որոնք արթուն հսկողություն կընեն, որպես թե թիկնապահներ են։ Կանխավ եղած կարգադրության մը համաձայն, քանի մը բոպե հետո, ուրիշ մը, բռնած իր ընկերոջ օձիքեն, քաշելով կբերե թագավորին առաջ ու կըսե.

— Թագավոր ապրած կենա, ես ոստիկան մըն եմ և պաշտոնս կատարած ատեն տեսա, որ այս մարդ խանութ մը մտավ,

թոփ մը պասմա գողցավ և կխնդրեմ, որ վճիռ մը տաս այս գողին։

Թիկնապահներու դրդումով, թագավոր ոտքի կելլե և անոնց օգնությամբ ու խորհրդով գողին վեց կամ յոթ ամիս բանտարկության վճիռ կուտա։ Դիտելի է, որ մինչ թագավոր զբաղած էր այս դատավարությամբ, թիկնապահներեն մեկը թագավորի աթոռը ղղուշությամբ կտանի հեռու տեղ մը կդնե։

Երբ թագավորը դատը վերջացուցած և թիկնապահներու խորհրդով կուզե նորեն աթոռի վրա նստիլ, դետին կիյնա, ոտքերը վեր տնկելով և խաղը կվերջանա քրքիջներու մեջ։

Բան մը պահել.—Կմասնակցին հինդվեց հոգի և կընտրեն իրենցմե միամիտ մը, որ առարկա մը պահե և հեռուն գնացող խորամանկ մը, իր աչքերը դոցած, որպես թե երբ վերադառնա, իր իմաստությամբ ու մեկ ակնթարթով կրնա գտնել պահված առարկան։

Երբ մյուս ընկերներու դրդումով միամիտը որոշված առարկան իր գրպաններուն մեջ տեղ մը կպահե և դուրս գտնվող և որպես թե աչքերը դոցող իմաստունին լուր կուտան, որ գա և անմիջապես գտնե պահված առարկան։ Իմաստունը կուգա, միամիտին լավ մը կդիտե շատ լուրջ կերպով, ապա կըսե.

— Ես գիտեմ, թե ուր պահած ես այդ առարկան, բերանիդ մեջ պահած ես, հաճիս՝ բերանդ բաց, որ նայիմ։

Միամիտը, որ բոլորովին վստահ էր, թե իր բերանին մեջ ոչինչ ուներ պահած, բերանը լայն մը կբանա։ Ճիշտ այդ պահուն իմաստունը իր գրպանը ունեցած ալյուրեն կամ հողեն ճանկ մը ապուշին բերանը կնետե և խաղը կվերջանա խնդուքներու մեջ։

Հարսնեֆույր (խարսնեֆյոր) և հարսնախպեր.—Երեկոյան ժամը 10 անցած էր, նվագախումբը եռանդով կնվագեր, երիտասարդները իրենց խաղերով սենյակը կթնդացնեին, երբ լուր տարածվեցավ, որ հարսնախ-

պեր.—Երեկոյան ժամը 10 անցած էր, նվա-

իբենց հորեղբայր Մարկոս՝ լապտեր մը ձեռքերնին, ներս մտան։

Վանի մեջ սովորություն էր՝ պսակեն շորս-հինգ ժամ վերջ, հարսի ընտանիքի անդամներեն մի քանիներու փեսայի տունը երթալը՝ տրտում հարսը քիչ մը զվարճացնելու ու մխիթարելու համար։

Կոր Սեթոն իր նվագախումբով, Վանլի Խորեն իր խումբով հարսնևորները ուրախ պահեցին մինչև առավոտյան ժամը չորսը։ Հարսնևորներեն ոմանք ալ մեկիկ-մեկիկ սենյակեն մեկնեցան կիսախուփ աչքերով և անկյուններ փնտրեցին մրափելու համար։

Երկրորդ օր առավոտյան, ոմանք, թեթև նախաճաշ մը ընելե հետո, իրենց տունները մեկնեցան, բազմավաստակ բաբեմաղթություններ ընելով փեսային, հարսին, Հովհաննես Աղային և Մարանոս Խաթունին։

Մխկներ և ուրիշ մոտիկ բարեկամներ մտադրած էին այս հարսանիքը չորս օրվան վերածել։ Ուրիշ խոսքով՝ կուզեին իրենց պնդերեսությամբ մնալ, ուտել, խմել, պարել և ուրախություն ընել։ Մանավանդ որ Կոր Սեթոյի նվագախումբն ալ Մխկներու ստիպման տակ հանձն առած էր մնալ և նվագել։

Կհիշեմ՝ հարսանիքի երկրորդ օրն էր, կեսօրե հետո ժամը երկուքը, երբ Խամբոյի լոռթոն, Արարուց թաղի ուժեղ երիտասարդներու ախոյանը, մտավ Հովհաննես Աղայի ախոռը, էշերեն մեկուն բերանը քիչ մը օղի լեցուց, ապա Մուխկե Նշանի (բազուկներու ուժով օժտյալ ուրիշ մը) օգնությամբ, էշի փորին տակեն շվաններ անցնելով, կոնակն առավ և էշը շալկած կամաց-կամաց ու տրաքալով երկրորդ հարկը հանեց և հարսնևորներու սենյակի մեջտեղը կանգնեցուց։ Էշը հարբած ու դողդոջուն, սրունքներու վրա հազիվ կանգնած կդողար, և զարմացած այս անսովոր ընթացքեն, երկար ականջներ տնկած այս ու այն անձի կդիտեր։ Խնդուք, ծիծաղ, զարմանք, ուրախ բացականչություններ իրար հաջորդեցին։ Շատեր էշը այս ու այն կողմը հրեցին ու հրմշտկեցին, ոմանք էշին քացի տալով, իրենցմե հեռու պահել կջանային։ Վանլի Խորեն էշի վրա ցատկեց հակառակ կողմեն, երեսը ետևի կողմ դարձուցած, ծռեցավ, էշի պոչը բռնեց և ըսավ.

— Էշը քաղաք կերթա, ես՝ գյուղ։

Մխկներ խումբ, ամեն վայրկյան պատճառ մը, բան մը, գործ մը կփնտրեր հարսանիքի ուրախությունը երկարաձգելու և իրենց հոն մնալը արդարացնելու համար։

Հովհաննես Աղան ուներ կովեր և էշեր։

Ախոռի մեջ անոնց արտադրած տառթերը գարնան ատեն մշակ Սերգոն կողովով այգին փոխադրած էր ու հոս ու հոն տարտղնած չորնալու համար։

Վանքի Խորեն գաղափարը հղացավ ձմեռվա շատ պետքական և այգին տարածված այդ չորցած ցաներն, տառթերն ու փթիրները վառելիքներու հատուկ ամբարանոցը հավաքել տալ, որ երկու-երեք օրվա գործ էր տանեցիներու համար, ուստի սենյակը մտավ և սկսավ բռռալ։

— Քավորաղայությանց։ Փթիր կրելությա՞նց։ (Այսինքն՝ քավոր աղա կամք կուտա՞ս, որ չորցած փթիրները ամբարանոցը հավաքենք ձմեռվա համար)։

— Բառոժի[51] աղվեսներ, որթկան ցիցէր[52], սատանի պուպոՀներ ու անառակներ, կնացեք, ինչ կուզէք արէք,—հոխորտաց կնքահայրը։

Մխկներ խումբ, Խորենի առաջնորդությամբ այգին ելավ։ Ամեն մեկը հանեց իր վերարկուն և այս ու այն ծառի ճյուղեն կախեց։ Թևերնին սոթտեցին և սկսան փթիրներն ու տառթերը ձմեռվան վառելիքի ամբարանոցը հավաքել։ Տեսնելու բան էր, թե ինչպես քրտնաթոր կաշխատեին։ Շատ չանցած ամբարանոցը լեցվեցավ և փթիրները շարվեցան կանոնավոր կերպով։ Այս հոգնեցուցիչ գործեն հետո, անշուշտ, երիտասարդներ նորեն սեղան նստան, նորեն կերան ու խմեցին, պարեցին ու զվարճացան։

Մխկներու խնդրանքին վրա Կոր Սեթոյի նվագախումբը նվագեց հետևյալ խաղեր՝ Թանդարա, մամբո, փափոռի, Թամուրի, մշու խրո, կասապ աղասի, խարբուԹ աղասի, լուտկի, սընջանե և այլն խաղեր, որոնք կպահանջեին հմտություն, ծունկերու և ոտքերու ճկունություն ու շարժումներու համաչափություն, հատկություններ, միայն երիտասարդներու հատուկ։

Մխկներու ստիպման տեղի տալով, Ոզմա Կյորոն ձեռքը ականջին դրած իրարու ետևե և իր բարձր ու անուշ ձայնով երգեց հետևյալ քրդերեն երգերը՝ հեդի բաժո, ադայե խորթան լո բրինղարո, կոռե խարսան, ավ սալ սալա պարֆեվո, և քրդական ողբ մը, որու անունը չեմ հիշեր։

Այդ օր երեկոյան հարսնևորներեն շատեր իրենց տունները մեկնեցան երկար ու սրտառուչ բարեմաղթություններ ընելե հետո։

Երրորդ օր առավոտյան մխկներ խումբը նորեն գործի վրա էր։ Անոնք շատ կանուխեն արթնցած, երեսնին լվացած. նորապսակ ամոլին կսպասեին։

Քաղաքի և գյուղերու մեջ սովորություն էր փեսան և հարսը երրորդ օրը արևածագեն առաջ տանիքը հանել և երգել «էգ բարև» երգը։

Լևոն և իր նորահարսը, Մխկներ և քանի մը ուրիշ հարսնևորներ արդեն տանիքն են արշալույսեն առաջ։ Խորեն Թաշկինակի մեկ ծայրը Լևոնին և մյուս ծայրը հարսին ձեռքը տալով, զանոնք մեջտեղը կանգնեցուց, ապա երիտասարդներ սկսան երգել հետևյալ երգը, արևածագեն առաջ, որպեսզի արևն իր նորածագ ճառագայթները ամոլին վրա զարնելով, անոնց կանաչ-կտրիճ զավակներ պարգևե։ Երգը ուղղված է նոր ամուսնացող ամոլին, մանավանդ փեսային։

Պարիլիսու տէմ կայնիր ես
Ալ նարնջին տիւ խակյիր ես,
Կանանչ-կարմիրն էլ կապիր ես,
Աստված քյե պախի քյե պարզիրես,
Քյո թագուհին պարօվ վայելես։
Էդ բարև, ա՛յ էդ բարև,
Էզն արևուն տանք բարև,
Մեր թաքվորին շատ արև,
Մեր թաքվորին շատ արև։
Վահե՜, վահե՜, վահե՜...

Այս երգը կրկնեցին չորս կամ հինգ անդամ, միայն փոխելով առաջին տողը. այսպես՝

Խեք բազիւքի տէմ կայնիր ես,
Լոս-լուսնակի տեմ կայնիր ես,
Լոսու-աստղի դեմ կայնիր ես։
Արեգական տէմ կայնիր ես։

Վերոհիշյալ երկնային մարմիններու մասը (որ շատ հին ժամանակներն մնացած էր, գուցե հեթանոսական շրջանեն) երգելե հետո, սկսան հիշել վանքերու անունները, որը կկոչվի քրիստոնեական ձևը։ Երկնային մարմիններու տեղը հիշելով Վանին մոտիկ գտնվող վանքերու անունները, և նորապսակներու դեմքերը հիշված վանքին կողմը դարձնելով։ Այսպես.

Ջուխտ Վարակյա տէմ կայնիր ես,
Ալ նարնջին այիւ խակյիր ես,

51 Պառոժ, կնշանակե արեգտեմ։
52 Որթկան ցից, կնշանակե բարակ վիզ ունեցող։

Կանանչ-կարմիրն էլ կապիր ես,
Աստված քյե պախի քյե պարզիրես,
Քյո թաքուհին պարով վայելես։
Էդ պարև, ա՜յ էդ պարև։
Էդն արևուն տանք պարև։
Մեր թաքվորին շատ արև
Վահե՜, վահե՜, վահե՜...

Այս փոխելով միայն առաջին տողը, կրկնեցին այս երգը չորս-հինգ անգամ։ Այսպես՝

Ախթամարա տէմ կայնիր ես։
Ախթամարա տէմ կայնիր ես։
Ասպարածնա տէմ կայնիր ես։
Խոկյուց Վանից տեմ կայնիր ես։
Տէսկանվուրտու տէմ կայնիր ես։
Երուսաղմա տէմ կայնիր ես։ Եվ այլն[53]

Այսպես, վանքերու անունները փոխելով, շարունակեցին երգել, մինչև արևածագ։ Ապա նորապսակ ամոլը հետերնին առած՝ տանիքեն վար իջան ու նստան ճաշի։

Երրորդ օր երեկոյան, գրեթե բոլոր հարսնևորներ մեկիկ-մեկիկ իրենց տուներ մեկնեցան, շնորհավորելով, բարեմաղթելով, օրհնելով։ Մնացին միայն Մխկներ և քանի մը մոտիկ ազգականներ։

Ալ նարնջին.—Ծիրանեգույն հագուստ, որ թագավորներու հատուկ էր, և որովհետև նորա փեսան ալ իր ընտանիքին վեհապետն էր, պետք էր հագներ թագավորներու հատուկ ծիրանի հագուստ, որ պճղնավոր էր և կկոչվեր աղապաղա, աղայի հատուկ հագուստ։ Այս բառեն ծագած է աղբեն վերետ ըլլա, տարոս քեղի ասություններ, որոնք կըսվեին հյուրերու կողմե՝ փեսան շնորհավորելե հետո ամուրիներուն դառնալով։ Առաջինը աղավաղվելով՝ այպեն վերեդ ըլլա (փակաղեդ, հայպա) ծաղրական ասության փոխված էր։ Կկարծվի թե «տարոսր» աղավաղյալ ձևն է «տարաղ» բառին, երևի փեսային տարազին ակնարկելով։

Կանանչ-կարմիր.—Հավանաբար, կանաչ-կարմիր նարոտն էր, որ խաչաձև փեսայի գլխին կկապեին, որ թագ կամ պսակ ալ կկոչվեր։

Խեֆ-բազյուֆ.—Օրիոն-Հայկ և Բուլլք համաստեղությունը։

Լուսու-Աստղ.—Արուսյակ կամ Լուսնթագ աստղը։

Շատ արև.—Երկար կյանք։

Էգ պարև.—Էգուց, այդ կամ առավոտ, այսինքն՝ ողջույն, ով առավոտ կամ՝ ողջույն արևին։

Ուց կտրել.—Չորրորդ օրը, առավոտյան ժամը 10-ին ատեններ, Տեր Պետրոս քահանան նորեն Հովհաննես Աղայի տունը եկավ, ուց կտրելու արարողությունը կատարելու համար։

Փեսան ու հարսը սենյակին մեջտեղ դեմ-դեմի կանգնեցուց, գլուխնին և ճակատնին իրար դպցնելով։ Այն բարձը, որուն վրա պիտի քնանային, ղրավ հատակին՝ նորապսակներու մեջտեղը, խաչերու նշաններով զարդարված ուրար մը նորապսակներու գլխին նետեց (ի նշան միության), ապա կարդաց ըստ պատշաճի քանի մը աղոթքներ, օրհնեց, խաչակնքեց և «Հայրմերով» վերջացուց։

Զրուցելա.—Հետո վեր առավ ուրարը, իրարմե քիչ մը հեռացուց նորապսակները, վեր առավ խաչը փեսայի կուրծքեն, զոր եկեղեցվո մեջ պսակեն հետո անոր կուրծքեն կախած էր որպես նվիրական Ուց կամ հուռութ և հարսի գլխեն բոլորովին վերցուց քողը։ Ապա առավ գավաթ մը գինի, կեսը փեսային խմցուց և մյուս կեսը՝ հարսին, որպես միության և սիրո նշան։ Ահա այս ատեն առաջին անգամ հարս ու փեսան իրար երես տեսան ու իրար հետ խոսեցան։ Հարսի առաջին անգամ խոսելուն առթիվ, փեսան երկու ոսկի նվեր տվավ հարսին։ Այս նվերը, որ կկատարվեր ըստ կարողության կամ ունևորության, կկոչվեր «Զրուցելա»։

---

[53] Բարի լույս.—Կնշանակե արշալույս, որ քրիստոնեացած ձևով շաղաթաթախ աղոթքան կկոչվեր։ Այնքան նվիրական մեր մամիկներուն համար, որոնք անով երգում կնեին, կաղոթեին, կանիծեին և կօրհնեին։

Վահե՜, վահե՜, վահե՜.—Այս բացականչությունը գուցե հին չաստվածներու աղավաղյալ անուններեն մէկն է, գուցե Վահե կամ Վահագն չաստվածներու աղավաղյալ ձևը, որոնք կհիշվեին խրախճանքներու կամ տրտմություններու ժամանակ, որպեսզի աստվածներ գային և աներևութաբար ընկերանային իրենց։ Դիտելի է, որ Վահե բացականչությունը միայն արական պարերգներու մեջ կհիշվի, իսկ իգական պարերգներու մեջ կհիշվի Նանանա կամ Տանանա, կամ՝ Նանե, որ Արամազդ չաստվածի դստեր անունն էր, պաշտված հայերե, և որուն մեհյանը Վասպուրականի Անձևացյաց գավառին մեջ էր, այժմու Հոգոց կամ Հոգյաց վանքին տեղը։

Շատ հին ատեններ, ըստ ավանդության, այս խորհրդավոր գինին քահանան կխմցներ ամուսնացող զույգին այն արծաթյա թասով, որ հարսնցուն իր աղջիկության շրջանին գլխուն վրա կկրեր իբրև զարդ և իբրև նշան կուսության։ Այս թասին վրա փորագրված կըլլային արևի, լուսնի և աստղերու պատկերներ, վերջերս՝ նաև խաչի պատկերներ։

Թասը աղջկան գլխեն վար կառնվեր և այդ թասով գինի կմատուցվեր նորապսակ ամոլին։ Երբեմն այդ թասը եկեղեցիին կնվիրվեր և երբեմն ալ նորեն հարսին կվերադարձվեր։ Հարսը թասը նորեն իր գլխուն վրա կկրեր և ամուսնության յոթ տարիներ անցնելե հետո, տան մեջ եղող ուրիշ աղջըկան մը կփոխանցվեր։ Այս թասի սովորությունն ալ կամաց-կամաց վերջացավ։ Մեր օրերուն միայն քյուրդերու և ասորիներու մեջ կտեսնվեր հոս ու հոն։

Ուց կտրել.—Վանի մեջ կնշանակեր փեսայի և հարսի հուռութները վար առնել կամ դուրս հանել, պսակեն երեք կամ չորս օր հետո։

Հին ատեններ նորապսակ ամոլներ՝ շար աչքե աղատ մնալու, բախտերնին միշտ բաց պահելու և նախանձորդներու նենգություններեն ղերծ մնալու համար՝ իրենց վրա կկրեին հուլունքներ, ասեղներ, հմայեկներ, դրպաներու մեջ յոթը հանգույցներ կրող կապույտ թել մը, գոցված կղպանք մը, զմելի մը և այլն։

Հնդիկներ չաստված մը ունեին, որ կկոչվեր նիյաթ։ Այս չաստվածը իր զորությունը, իր շանթերը կդներ նախանձորդներու աչքերուն մեջ և շար զորությամբ լեցված նախանձորդներ կվնասեին մարդոց, կենդանյաց և առարկաներու։ Ահա այս կործանարար շանթերը չեզոքացնելու համար, մեր նախնիք հնարած էին շարը խափանող առարկաներ։

Երբոր մեկը շատ կհորանջեր, կըսեին՝ «նիյաթ ի առե»։

Կախարդներու շինած մայեկներեն (նուխսա և թիլիսմա) զուտ հասարակ ժողովուրդն ալ գտած էր առանձին նյութեր, շար աչքը խափանելու համար։ Այդ առարկաներն էին՝ խեցեպատյաններ, կոտոշ, հին կոշիկ, կանաչ ու կարմիր մետաքս իբրև նարոտ, ծայրը կոտրած ասեղի մը մեջ անցած կապույտ թել, սև սունիճ (արշնդեղ), էրըժնակ կոչված փշալից բույսը, դժնիկ (փուշ), լաշ կոչված ծառին ճյուղը, ուց կոչված վայրի ծեթրին, արծաթե և պողպատե շինված օձի, կարիճի, մողեսի և գորտի նմանող զարդեր, կապույտ հուռութ ու հուլունքներ, օձի շապիկներ և այլն։

Վերոհիշյալ առարկաներեն որևէ մեկը իր վրա կրող նորապսակ ամոլը շար աչքե հեռու կմնար և բախտավոր կըլլար։ Իսկ եթե մեկը վրան կրեր այս առարկաներեն մեկը կամ հմայեկ մը, ոչ թե շար աչքե՝ նույնիսկ պատերազմի ալ երթար՝ անխոցելի կդառնար...։

* * *

Չորրորդ օրը երեկոյան վերջապես Կոր Սկթոյի խումբը մեկնեցավ, որուն հետևեցան Մխկներ երիտասարդներ, և հանդարտությունը տիրեց Հովհաննես Աղայի տան մեջ։

Հարսի առաջին լոգանքը.—ըստ հնավանդ սովորության՝ առագաստին հաջորդող առաջին հինգշաբթի օր տեղի ունեցավ Սրբիկի լոգանքը։ Այս պաշտոնական լոգանքի արարողության մասնակցելու համար Մարանոս Խաթուն հրավիրեր էր իր շատ մոտիկ արյունակից քանի մը հասակառու խաթուններ։ Այս հասակ առած տիկինները ձեռքերնին բռնած մեկ-մեկ վառած մեղրամոմ, բոլորվեցան պղնձե տաշտի մը շուրջ, որուն տակը նախապես դրված էր խաշաձև ղույդ մը շամփուրներ, իսկ տաշտին մեջ պողպատե կայծհան մը։ Տաշտին բոլորտիքը մի քանի մեղրամոմ փակցնելե հետո, հանեցին հարսին հագուստները և նստեցուցին տաշտին մեջ, ապա կեսուրը նախ թաս մը պաղ և ապա թաս մըն ալ տաք ջուր նետեց հարսին մերկ մարմնույն վրա, փնթփնթալով.

— Պախապան խաշ խրիշտակ։

— Չորս կյլօխ Ավետարան,—բսավ ուրիշ խաթուն մը։

— Ութ կանոն Սաղմոսարան,—մրմընջաց երրորդ խաթունը։

— Մայր աստվածածին օքնտկան և պախապան,—բարեմաղթեց չորրորդ խաթունը։

Ապա քիչ մը ևս տաք ու պաղ ջուր,

օձաո, մաղերու սանրում՝ և լոգանքը վերջացավ։

Սրբիկ հանգստությամբ դիմադրեց այս արարողության, որ բարոյափորձ մըն էր իր ջղային, պաղարյուն կամ հնաղանդ ըլլալը ստուգող։

Եթե հարսը շարժվեր կամ ցնցվեր այս տաք ու պաղ ջուրերու աղդեցութենեն, դա նշան էր անհամբերության և անհնազանդության։ Բայց Սրբիկ (ինչպես բոլոր նորահարսեր խրատված իրենց մայրերեն) կորովով և հանդարտությամբ դիմադրեց տաք ու պաղ ջուրերուն, ավելացնելով իր վրա կեսրոջ ու ներկա պառավներու համարումը։

Հարսնություն.—Անցան քանի մը շաբաթներ։ Մարանոս Խաթուն մտադրեց Սրբիկին տալ հարսնության վերաբերյալ կարգ մը խրատներ ու պատվերներ։ Առտու մը, երբ Հովհաննես Աղան և Լևոն գործի դացեր էին, նախաճաշեն հետո՝ Սրբիկը իր մոտ կանչելով ըսավ.

— Ախչիկս, խարսիկս, զավակս, մեր խին ա՛դաթ կասի, որ խարսնութենն յոթ տարի կքյա՛շի։ Իտոր խամար քյե թամբեխ կանեմ՝ որ իրեստ հա ծածկուկ պախես, ինչ կյա՛խ կուղի թող էլնի, կուղի խավերաց կուտ տված կյա՛խ թող էլնի։

Մէնակ իրկանտ, պստիկ տղէյներաց և պստիկ ախչկներաց խետ խաբա՛ր պիտի տաս, դհա ուրուշ մեկում խետ լէղու թրչէլու չես։

Օհաննէս աղէն եվ։ քյե խառցում կանի՝ ծեռով, կյլխով պատասխան տուր։

Եվ մեր տուն խուր կյա՛, քյո՛ օդէն կնա՛, կար արա, ճութ արա, չում խըրէր էթա՛ն, նոր տիւս արե։

Տան մէջ ինչ քա՛ռծ որ էլնի, առանց տրտնջալու, ֆա՛ռդ չի անե, թե ի՞նչ ի, շոտրմ կատարի։

Իրիկններ փօլոր տեղեր իսկելու ես և առտվներ էլ վիրուցէլու ես։

Առա՛տվներ շո՛ռտ վեր էլնելու ես, և իրիկններն էլ ա՛նկյա՛ն պառկելու ես։

Սեղնի վէրէն յավաշ-յավաշ կծամես պրտճներտ պստիկ պիտի անես և մսոտ ոսկոռ չկռծես[54]։ Կիրածտ կյա՛խ պոկներտ ծածկրված պախելու ես յաղմօվ։

Կյինի, արաղ չխմես։ Եվ այլն, և այլն։ Դէ կնա՛, զավակս, ու քործերտ արա։

— Շնորհակալ եմ, խաթուն։

Ամուսնության յոթը տարիներուն հարսը կատարյալ գերի մըն էր, երբ մանավանդ պահանջկոտ ու անգութ կեսուր մը ուներ, որ հոգեառ հրեշտակի մը պես կհսկեր հարսին վրա։ Կպատահեր երբեմն ալ, որ հարսը կարժանանար կեսուրի և էրկան ծեծին ալ։

Նորահարսին խմելը.—Օր մը Մարանոս խաթուն, դրացի քանի մը պառավներ հավաքած, անոնց հետ կճաշեր։ Մտադրեց անգամ մը փորձել, թե իր հարսը գինի պիտի խմե՞։ Երբ ամեն ինչ սեղանի վրա շարվեցավ, Մարանոս Խաթուն հարսը հրավիրեց, որ սեղանին նստի։

Նախ Կուշոյի Մարան գինիի գավաթը լեցուց և խմեց հարսի ու փեսայի կենացը։ Մեկ-մեկ գավաթ խմեցին նաև մյուս ներկա տիկինները։ Կուշոյի Մարան, ըստ Մարանոսի նախօրոք ըրած կարգադրության, ստիպեց նորահարսը, որ գավաթ մըն ալ նա խմե։

— Շնորհակալ եմ, ես չեմ խմե—պատասխանեց հարսը։

— Ա՛ռ, խա՛րս, ա՛ռ, խմի, ամոթ չի։

— Ո՛չ, շնորհակալ եմ։

— Ա՛ռ, խարս, խմի, ջանըմ, ա՛ռ, ա՛ռ,—ձայնեցին ներկա տիկիններ ու ստիպեցին։

Հարսը առավ ամենափոքր գավաթը, քիչ մը դինի լեցուց մեջը, գավաթը շրթունքին դպցուց, որպես թե խմեց, և լեցուն գավաթը նորեն սեղանի վրա դրավ։

Ստիպումներ և խոսվռտուքը կարճ կապելու համար, Վանի մեջ սովորություն էր

---

[54] Հարսնկուլ.—Հոս տեղին է հիշել տարիներ առաջ Վանի մեջ պատահած ուրիշ անգութ դեպք մը։ Կավանդվի, որ սեղանակից պառավ մը, հարսը փորձելու համար, ոչխարի կլոր և մսապատ ծնկոսկրը լավաշ հացի մեջ փաթթելով, բրդուճ կշինե և հարսին կհրամցնե։ Խեղճ հարսը բրդուճը խածնելե հետո, երբ կիմանա, որ մեջը ոսկոր կա և ակռայով միսերն կրծելը ու ոսկորեն փրցնելը կամ պատառը բերնեն դուրս հանելն ու սեղանին վրա դնելը անպատշաճ է, ստիպված կլլե պատառը։ Ոսկորը կոկորդին կկառչի։ Կսկսի հաղ մը, ապա իրարանցում մը սեղանակիցներու մեջ։ Կհասնին, հաղար դժվարությամբ դուրս կհանեն ոսկորը հարսի կոկորդեն և մեծ համարում կստեղծեն հարսին վրա, որ պատշաճության սիրույն հանձն առած էր ոսկորը կլլել, փոխանակ բերնեն դուրս հանելու։ Դեռ մինչև մեր օրերը ոչխարի կլոր ծնկոսկրը «ճարսնկուլ» կկոչվեր և միշտ կհիշվեր խոսակցությանց մեջ ու ճաշի առեններ։

սեղանի նստող կանանց համար լեցուն գավաթ առնել, շրթունքին դպցնել և լեցուն գավաթը նորեն սեղանի վրա դնել։

Խնամապատիվ.—Ամուսնութենեն ամիսներ հետո, տեղի կունենա խնամապատիվ։ Փեսան և իր ծնողքը հարսի տուն կհրավիրվեին ճաշի։

Դառն.—Երբ հարսը առաջին անգամ հոր տուն կերթար՝ երկու շաբաթ հանգիստ ընելու։

* * *

Վասպուրականի գյուղերուն մեջ ամուսնություններ տեղի կունենային երբեմն շատ կանուխեն, նույնիսկ օրորոցի մեջ, և կամ մանուկ հասակին։ Այդ տեսակ ամուսնություններն երբեմն կունենային աղետալի հետևանքներ, ինչ որ ցույց կուտա հետևյալ ժողովրդական երգը, Թիմար գավառի բարբառով երգված։

Էմա՛լ էնեմ, էմա՛լ էնեմ,
Սարեր ծիւն ա, շվարեր եմ,
Ցարս պստիկ ա, մալուվեր եմ,
Հետս չի գա՛ առնեմ տանեմ։
Մյուդյուր աղա, արևտ սիրեմ,
Էսօր էթա՛ս խսներ պիրես,
Որ քյո՛ լաճուն ուրուրուց շինես,
Մեչը տնես օրօր ասես։
Էմա՛լ էնեմ, և այլն։
Իրիկ մ'ունեմ հավու ճուտ ա,
Քշենքյ փա՛գյա՛խ թող կուտ ուտա։
Էրիկ մ'ունիմ եղին-դևդին,
Կը նմանի կյարնա՛ն եղին,
Ծեռնէն պռնեմ տամ կյրօղին
Թողնեմ էթամ խետ սիրողին։
Էմա՛լ էնեմ, և այլն։

Ուրիշ օրինակ մը։

Ամառ ատեն գյուղացիներ բացօթյա կքնանային բակերու մեջ։ Գիշեր մը նոր ամուսնացած տղա մը կսե իր հոր, պոսալով.

— Ախպէ՛ր Օհո (Հովհաննես), հարսը էյամակս կքյերէ։

— Ադա՛թ է, բալաս, ադաթ. մի՛ վախէնա։

Երրորդ օրինակ։

Շատախցի երիտասարդ մը Վան կուգա և կայցելե իր գյուղացի Սեփանին, որ հայ վաճառականի մը տուն ծառա էր, հագիվ 18 տարեկան։

— Պարի օր, Սեփո։
— Պարին վէրէտ։ Տօ տղա տիւ իկի՞ր ես։
— Խավալլահ իկիր եմ։
— Պարի խարա՛ր պիրի՞ր ես։
— Խավալլահ պիրիր եմ։
— Ցրմ խէր, յրմ մէր զի կարգե՞ր են։
— Խավալլահ կարգիր են։
— Ճժուկ մժուկ էլե՞ր ի։
Էտա չրմ կինա։

* * *

Եվ Լևոն քար մը գլորեց ջրհորի մեջ։ Սիջնորդ Արմաղան ի գործ գրավ իր հնարամտություններն ու լեզուն։ Սուրբ Խաչաս և կարիրի Վարտա՛ն գործածեցին վհուկության իրենց բոլոր վարպետությունները։ Վարդապետներն ու քահանաները բերին իրենց օրհնություններն ու աղոթքները։ Վանլի Խորեն իր ղվարթարանությունները։ Խա՛մբոյի Լոռթոն իր բազուկի ուժը։ Կոր Սէթոյի նվագախումբը իր եռանդուն նվաղները։ Մխկներն, հարսնևորներն, կանայք ու պառավները տրամադրեցին իրենց ուղեղն ու թելադրությունները, ըրին իրենց կարելին և Լևոնի ջրհոր ձգած քարը ջրհորեն հանեցին և Լևոնի համար քյաֆուր վարդ մը բերեցին։